ԼՈՒՄԱՅ

ԳՐԱԿԱՆ ՀԱՆԴԻՍԻ

1897 թ.

Ա. ԳՐՔԻ

ՅԱՒԵԼՈՒԱԾ

ԼԻՆՀԱՐԴ ԵՒ ԳԵՐՏՐՈՒԴ

ՎԻՊ ՊԼԻՍՏԱԼՈՅՅՈՒ

նութիւն անէ։ Եթէ քահանան աղքատներին ինձ պէս ճանաչէր՝ այդչափ չէր մտատանջուի նրանց համար. բայց նա աղքատների համար չէ հոգում։ Նա կամենում է միայն հայհոյել և մարդկանցը դատապարտել ու սխալացնել։ Ի՞նչ պտուղներ են աղքատները. եթէ տասը խաբեբաների կարիք ունենայի, տասնումէկն աղքատների մէջ կգտնէի։ *) Ես էլ կցանկանայի, որ եկամուտներս քառորդ տարին մի անգամ ճշտօրէն իմ տուն բերէին, այն ժամանակ ես էլ կսովորէի համեստ և բարեպաշտութեամբ ընդունել այդ։ Բայց իմ գինետան գործում և գիւղացիների բակերում, ուր ամեն բան կոպէկի շուրջն է պտտում և ուր ամեն մէկին անկիւններում կարող են կողոպտել, հանգամանքները բոլորովին ուրիշ են։ Ես գրաղ կգամ, որ ով բանուորների ու աղքատների հետ ներողամտութեամբ և բարեսրտութեամբ վարուի, իր ստացուածքը կկորցնի, որովհետև դրանք ամեն տեղ էլ խաբեբաներ են։ Այսպէս էր խօսում տանուտէրը և իրեն անհանգստացնող խղճի ձայնը խեղդում իր սրտի մէջ։ Նրա խիղճն ասում էր, որ քահանան իրաւունք ունի, որ ինքն է գիւղի բոլոր աղքատների արիւն քրտինքն եղունգների տակից հանող մարդը։ Բայց որչափ ուզում էր տանուտէրն այդ ձայնը խեղդել, դարձեալ լաւ չէր զգում իրեն։ Երկիւղն ու հոգսը յայտնի կերպով տանջում էին նրան. և նա կուչ գալով՝ վերև ու ներքև էր անում սենեակում և ապա կրկին ասում.

«Ես ա՞յնպէս դառնացած եմ քահանայի քարոզի վրայ, որ չգիտեմ թէ ինչ եմ անում և առհասարակ լաւ չեմ զգում ինձ։ Արդեօք ցո՞ւրտ է այստեղ, դրացիներ, ինչ որ տուն եմ եկել՝ մրսում եմ»։

Ո՛չ, ասացին գիւղացիները, ցուրտ չէ՛։ Բայց արդէն եկեղեցում կարելի էր տեսնել, որ դու առողջ չես. մեռելի գոյն ունէիր այնտեղ։

Տանուտէր։ Մի թէ նկատելի էր։ Այո՛, հէնց այնտեղ վատ էի զգում ինձ, ինչպէս երևում է կջերմեմ, շատ

*) Խաբեբաների գլխաւորը մոռանում է, որ հարուստ խաբեբաներն իրենք իրենց համար են գործում և այդ պատճառով ուրիշներին չեն ծառայում։

թոյլ եմ։ Պէտք է կոնծեմ. գնանք յետևի սենեակը և քարոզի ժամանակ այնտեղ քէֆ անենք։

41.

ԷՀԷԳԱՈՒՄԷՐՆ ԻՄԱՑ Է ՏԱԼԻՍ ՔԱՀԱՆԱՑԻՆ ԵՂԱԾ ԱՆԿԱՐԳՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

Սակայն Էհէգաումէրը *), որ տանուտէրի ընակուած փողոցումն էր ապրում և քարոզի ժամանակ տեսաւ, որ Էբին, Քրիստէն և ուրիշ անպիտաններ գինետուն գնացին, բարկացաւ սաստիկ և իսկոյն մտաբերեց իր երդումը, որով խօսք էր տուել՝ հսկել ամեն անկարգութիւնների, անաստուած արարքների վրայ և քահանային հաղորդել։ Էհէգաումէրը մի՝ պատուաւոր մարդու պատուիրեց, որ հսկէ այդ անպիտանների վրայ՝ թէ արդեօք քարոզից առաջ գինետնից դուրս կը գա՞ն թէ ոչ. և երբ արդէն զանգահարելու ժամանակը հասաւ և ոչ ոք գինետնից դուրս չեկաւ, գնաց քահանայի մօտ, ասաց իր տեսածը և յայտնեց նոյնպէս, որ Սամուէլն պատուիրել է հսկել նրանց վրայ։ Քահանան վախեցաւ այս յայտարարութեան վրայ, ինքն իրեն գաղտնի հառաչեց և շատ չխօսեց։ Էհէգաումէրը կարծեց թէ քահանան դեռ մտածում է իր քարոզի մասին և մի բաժակ գինու մօտ նըստած՝ սովորականից քիչ խօսեց։

Վերջապէս երբ քահանան եկեղեցի էր ուզում գնալ, Սամուէլն եկաւ. Էհէգաումէրն ասաց նրան. այժմ կարող ես արժանապատիւ քահանային ամեն բան պատմել։

Սամուէլ։ Բարև ձեզ, արժանապատիւ Հայր։

Քահանան։ Ողջոյն ձեզ. այն մարդիկը դեռ տուն չը վերադարձա՞ն։

Սամուէլ։ Ո՛չ, տէր հա՛յր, Էհէգաումէրի պատուէրից յետոյ շարունակ ման եմ եկել գինետան շուրջը. բացի տանուտէրի կնոջից, որ այժմ եկեղեցումն է, ոչ ոք դուրս չեկաւ այնտեղից։

---

*) Էհէգաումէր (ամուսնական հաւատարմութեան վրայ հըսկող) կոչւում էին Ջուիցերիայում եկեղեցու աւագները, որոնց պաշտօնն էր քահանայի հետ միասին հսկել կրօնի, բարոյականութեան և կարգապահութեան վրայ։

Քահանան։ Ուրեմն հաստատ գիտե՞ս, որ նրանք ամենքը դեռ գինետանն են։

Սամուէլ։ Այո՛, տէր հայր, հաստատ գիտեմ։

Էնէգաումէր։ Տեսնո՞ւմ էք այժմ, արժանապատիւ հայր, որ ես չեմ սխալուել և որ պէտք է իմաց տայի։

Քահանան։ Կատարեալ դժբաղդութիւն է, որ ճաշակման օրն էլ այսպիսի բաներով պէտք է զբաղուենք։

Էնէգաումէր։ Ինչ որ արինք, արժանապատիւ հայր, մեր պարտքն էր։

Քահանան։ Ես գիտեմ այդ և շնորհակալ եմ ձեր հոգացողութեան համար. սակայն բարեկամնե՛ր, մի փոքր պարտաւորութեան համար մի՛ մոռանաք աւելի մեծ և ծանր պարտքը. մարդուս ամենաառաջին ու ամենանշանաւոր պարտաւորութիւնն է հսկել նոյն իսկ իր անձի ու սրտի վրայ. այդ պատճառով դժբաղդութիւն է, երբ մարդուս մտածմունքը ցրւում է այդպիսի չարութիւններով։

Մի վայրկեանից յետոյ քահանան շարունակեց. Ո՛չ, այլ ևս կարելի չէ երկար դիմանալ, այդ արդէն անսահման անկարգութիւն է, ամեն անգամ ներելով աւելի վատ է լինում։

Յետոյ նա այդ մարդկանց հետ եկեղեցի գնաց։

42.

ՅԱՒԵԼՈՒԱԾ ԱՌԱՒՕՏԵԱՆ ՔԱՐՈԶԻ

Չարչարանաց պատմութիւնից քահանան յիշեց. «Երբ Յուդան մի փոքր ճաշակեց, սատանան մտաւ նրա սիրտը», խօսքերը և մատնիչի ամբողջ պատմութիւնն արաւ. յետոյ մեծ եռանդով սկսեց ձեռքերն ուժով խփել ամբիոնին, որ շատ տարիների ընթացքում չէր արել։ Նրանք, ասաց նա, որոնք Տիրոջ հաղորդութիւնից փախչում են, որ թուղթ խաղան և խմեն, մի մազաչափ անգամ Յուդայից լաւ չեն և դրանց վերջն էլ Յուդայի վերջը կլինի։

Եկեղեցում եղած մարդիկն սկսեցին զարմանալ և մտածել՝ թէ ի՞նչ է նշանակում քահանայի այդ մեծ եռանդը։ Տեղ տեղ սկսեցին գլուխները միմեանց մօտեցնել և փսփսալ, որ տանուտէրն իր տունը լցրել է անպիտաններով և շուտով ամենքն աջ ու ձախ կողմից սկսեցին նայել տանուտէրի

դատարկ աթոռի և նրա ամուսնու վրայ։ Վերջինս նկատեց այդ, դողաց, աչքերը գետին ձգեց, չէր համարձակւում մէկի երեսին նայել և երգի սկզբին եկեղեցուց դուրս գընաց։ Բայց այդ դէպքից յետոյ խօսակցութիւնն աւելի մեծացաւ և շատերն սկսեցին մատնացոյց անել նրան. ամենավերջին նստարանների վրայ նստողները մինչև անգամ կանգնեցին նստարանների վրայ, որ տեսնեն նրան և նոյն իսկ երգեցողութիւնը խանգարուեցաւ այդ աղմուկից։

43.

ԳԻՆԵՏԱՆՆ ԵԼԱԾ ԳԻՒՂԱՑԻՆԵՐՆ ԱՆՀԱՆԳԻՍՏԱՆՈՒՄ ԵՆ

Տանուտէրի կինն իր կարողութեան չափ արագ վազեց տուն և սենեակ մտնելով՝ բարկացած ձգեց ժամագիրքը շշերի և բաժակների մէջ և սկսեց բարձրաձայն ողբալ։

Տանուտէրն ու գիւղացիները հարցրին թէ ի՞նչ է պատահել։

Տանուտէրի կինը։ Մի՞թէ չգիտէք, որ այսպիսի մի սուրբ օր հարբեցողութեամբ պարապելն անարգար բան է։

Տանուտէր։ Եթէ այդ է բոլորը, մեծ բան չէ։

Գիւղացիներ։ Առաջին անգամն է, որ դու ողբում ես այդ բանի համար։

Տանուտէր։ Ես կարծեցի՝ թէ առ սակաւն փողի քըսակը կորցրած կլինես։

Տանուտէրի կինը։ Ցիմարութիւններ արա՛. եթէ եկեղեցում լինէիր՝ այդպէս չէիր խօսի։

Տանուտէր։ Ի՞նչ է պատահել. այդպէս մի՛ ողբայ և խօսի՛ր, ի՞նչ է պատահել։

Տանուտէրի կինը։ Ինչպէս երևում է քահանան իմացել է, որ բարոզի ժամանակ դուք այստեղ խմում էք։

Տանուտէր։ Այդ շատ վա՞տ կլինէր։

Կինը։ Նա անպատճառ գիտէ այդ։

Տանուտէր։ Ո՞ր սատանան կարող էր ասել նրան։

Կինը։ Որ սատանա՞ն, յիմա՞ր, նրանք վառարանի միջով չեն սենեակը մտնում, այլ գալիս են իրենց ծխամորջով փողոցի կողմից և յետոյ օրինաւոր կերպով Էհեգաուսմէրի տան մօտովն անցնում։ Քարոզի ժամանակ քահանան մ՚նպիսի բան արեց, որ անկարելի է արտայայտել. բոլոր

մարդիկն սկսեցին ինձ վրայ մատնացոյց անել։

Տանուտէր։ Այդ սատանայական արարքն իմ դէմ է ուղղուած կրկին։

Կինը։ Ինչո՞ւ հէնց այսօր պէտք է գայիք, խմող չնե՞ր, մի՞թէ չգիտէիք, որ արգելուած է։

Գիւղացիներ։ Մենք մեղաւոր չենք, նա մարդ ուղարկեց մեզ մօտ և կանչել տուեց։

Կինը։ Ճշմարի՞տ։

Գիւղացիներ։ Այո՛, այո՛։

Տանուտէր։ Ես ա՜յնպիսի դրութեան մէջ էի, որ անկարող էի մենակ մնալ։

Կինը։ Այդ միևնոյն է. բայց դրացիներ, որքան կարող էք շուտ տուն գնացէք յետևի դռնից և այնպէս արէք, որ ժողովուրդն եկեղեցուց դուրս գալիս՝ ամեն մէկիդ իր դրան առաջը տեսնի։ Այսպիսով կարող էք իրողութիւնը քողարկել։ Դեռ երգեցողութիւնը չի վերջացել, գնացէ՛ք, դեռ ժամանակ ունէք։

Տանուտէր։ Այո՛, գնացէ՛ք, գնացէ՛ք։

Գիւղացիները գնացին։ Կինը մանրամասն պատմեց տանուտէրին, որ քահանան քարոզեց Յուդայի մասին, թէ ի՞նչպէս սատանան նրա սիրտը մտաւ, թէ ի՞նչպէս նա կախուեց և թէ նրանք, որոնք հաղորդութիւնը թողնելով՝ գնում են խմելու և թուղթ խաղալու, միևնոյն վերջը կունենան։ Նա այնպէս եռանդ էր ստացել, ասաց կինը, որ բառունցքով ամբիոնին էր խփում և ես համարեա թէ ուշաթափուեցայ։ Տանուտէրն ա՜յնպէս վախեցաւ կնոջ պատմածի վրայ, որ համբացաւ և ոչինչ չպատասխանեց. ծանր և խորը հառաչանքներ դուրս թռան նրա հպարտ բերանից։ Շատ տարիներից ի վեր տանուտէրն այդպէս չէր հառաչել։

Կինը յաճախ հարցնում էր՝ թէ ինչո՞ւ է այդպէս հառաչում՝, բայց նա ոչ մի խօսքով չէր պատասխանում և երկար հառաչանքով ինքն իրեն ասում էր. մինչև ե՞րբ պէտք է շարունակուի այսպէս։ Յետոյ սկսեց սենեակի մէջ արագ մանգալ և վերջապէս կնոջն ասաց. սափրիչից մի փոքր հանգստացուցիչ փոշի բեր, արիւնս եռում է և անհանգստացնում ինձ։ Եթէ այդ փոշին չօգնէ, վաղը պէտք է արիւն թողնել տամ։ Կինը բերեց փոշին, նա ընդունեց ու

մի փոքր ժամանակից յետոյ ճշմարիտ որ թեթևութիւն զգաց։

44.

ՄԻ ՄԱՐԴՈՒ ՍՐՏԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ՝ ՀԱՂՈՐԴՈՒԹԵԱՆ ԺԱՄԱՆԱԿ

Յետոյ տանուտէրը պատմեց իր կնոջը, թէ ի՞նչպէս ինքն այսօր բարի և հաշտուած սրտով եկեղեցի գնաց, թէ ի՞նչպէս իր աթոռի վրայ նստած Աստծուց ներողութիւն խնդրեց իր մեղքերի համար, բայց քահանայի քարոզի վրայ կատաղեց և այն վայրկեանից ո՛չ մի բարի միտք չէ ծագել նրա գլխում. ասաց նոյնպէս, որ հաղորդութեան ժամանակ սարսափելի և երկիւղ պատճառող բաների վրայ է մտածել շարունակ։

—Հաղորդութեան ժամանակ ո՛չ կարողանում էի հառաչել և ո՛չ աղօթել։ Սիրտս քարացել էր. քահանան էլ ճաշակելիս այնպէ՞ս նայեց երեսիս, որ անկարելի է արտայայտել։ Ո՛չ, չեմ կարող արտայայտել, բայց միևնոյն ժամանակ չեմ կարող մոռանալ՝ թէ նա ի՞նչպէս նայեց։ Դատաւորը խեղճ յանցաւորին կախաղանի ու խարոյկի պատժին ենթարկելիս էլ այդպէս չէ՞ կարող նայել նրան։ Չե՞մ կարող մոռանալ՝ թէ ի՞նչպէս նայեց։ Սառը քրտինքը ծածկեց ճակատս և ձեռքս դողում էր, երբ նրա ձեռքից ընդունեցի սուրբ հաղորդութիւնը։ Ճաշակուելուց յետոյ ա՞յնպէս կատաղի և սարսափելի կերպով բարկացայ քահանայի վրայ, որ ատամներս կրճտացնում էի, բայց չէի համարձակւում նայել նրան։ Կին, սիրտս ամենաանպիտան բաներով լցուեց։ Ես վախենում էի այդ մտքերից—ինչպէս որ վախենում եմ մեծ փոթորիկներից—սակայն չէի կարողանում ազատուել դրանցից։ Ես այնպէ՞ս էի դողում աւազանի [1]) առաջ, որ սարսափից ու զզուանքից հազիւ էի կարողանում բաժակը ձեռքիս բռնել։ Այդ ժամանակ Յովսէփն եկաւ իր պատռտուած կօշիկներով և իմ առաջ իր խորամանկ աչքերը դէպի գե-

---

[1]) Բոննալում հաղորդուողները մկրտութեան աւազանի առաջն են քահանայից ընդունում ճաշակման հացը, իսկ բաժակը գիւղի աւագներից։

տին ուղղեց։ Ցիշեցի իմ տուած երեք թալէրը և հոգիս ու մարմինս ցնցուեց։ Ցետոյ եկաւ Գերտրուդը, աչքերը բարձրացրեց դէպի երկինք և ապա դէպի բաժակը, կարծես թէ ինձ չէր տեսնում, կարծես թէ ես այնտեղ չլինէի։ Նա ասում, անիծում է ինձ և գետնի հետ հաւասարեցնում. նա կարողացա՞ւ այնպէս անել, որ իբրև թէ ինձ չէ՛ տեսնում, որ իբրև թէ ես այնտեղ չեմ։ Ցետոյ եկաւ որմնադիրը և ա՞յնպիսի խղճալի հայեացքով նայեց ինձ, որ կարծես թէ սրտի խորքից ուզում էր ասել. ների՛ր ինձ, տանուտէ՛ր։ Նա՛, որ եթէ կարողանար, կախաղան կբարձրացնէր ինձ։ Ցետոյ եկաւ Շարէնմիսէլը, որ ինձ պէս գունատ ու վախեցած էր և դողում էր ինձ նման։ Երևակայի՛ր, թէ այդ միջոցին սիրտս ի՞նչ դրութեան մէջ կլինէր։ Ես վախենում էի, թէ Հանս Վիւստը նոյնպէս կգայ։ Եթէ նա էլ գա՞ր, այլ ևս չէի կարող դիմանալ և բաժակը ձեռքիցս վայր կընկնէր ու ես էլ անպատճառ գետին կգլորուէի։ Համարեա՛ թէ էլ չէի կարողանում ոտքիս վրայ կանգնել և երբ աթոռիս վրայ նըստեցի, ա՞յնպիսի դող ընկաւ մարմնիս մէջ, որ երգելու ժամանակ էլ չէի կարողանում գիրքը ձեռքիս պահել։ Եւ այդ ժամանակ միտքս էր ընկնում միշտ, որ Արներն է մեղաւորն այս բոլորի մէջ. կատաղութիւնը, բարկութիւնն ու վրէժխնդրութիւնն եռում էին սրտիս մէջ։ Հաղորդութեան ժամանակ ա՞յնպիսի բան ընկաւ միտքս, որ կեանքումս երբէք չէի մտածել։ Ես չեմ համարձակւում ասել այդ, մտածելիս արդէն սարսափում եմ։ Արներին վրէժխնդիր լինելու համար մտածեցի՝ ճանապարհի վրայ եղած մեծ սահմանաքարը ժայռերի վրայից ներքև գլորել։ այդ սահմանաքարի գոյութիւնը միայն ինձ է յայտնի։

45.

ԿԻՆՆ ԻՐ ԱՄՈՒՍՆՈՒՆ ՄԵԾ ՃՇՄԱՐՏՈՒԹԻՒՆՆԵՐ Է ԱՍՈՒՄ, ՍԱԿԱՑՆ ՇԱ՞Տ ՈՒՇ

Տանուտէրի կինը խիստ վախեցաւ իր ամուսնու խոսակցութիւնից, բայց չգիտէր՝ թէ ի՞նչ ասէ. մի վայրկեան նրանք երկուսն էլ լռեցին. վերջապէս կինն սկսեց. ես վախենում եմ այն ամենի համար, ինչ որ ասացիր։ Դու պէտք է ձեռք վերցնես այդ անպիտաններից, բաններս լաւ չէ գը-

նում և մենք էլ ծերանում ենք։

Տանուտէրը։ Իրաւունք ունես, բայց այդ այնքան էլ հեշտ չէ՞։

Կինը։ Հեշտ է թէ դժուար, այդ միևնոյն է, դու պէտք է նրանցը հեռացնես քեզնից։

Տանուտէրը։ Դու չա՞ւ գիտես՝ թէ ո՞րչափ կապուած եմ նրանց հետ. նրանք բոլոր գաղտնիքներս գիտեն։

Կինը։ Բայց դու աւելի շատ բան գիտես նրանց մասին։ Նրանք խաբեբաներ են և չեն համարձակուի ասել։ Դու պէտք է ազատուես նրանցից։

Տանուտէրը հառաչեց, իսկ կինը շարունակեց. Նրանք միշտ ուտում-խմում են քեզ մօտ և ոչինչ չեն վճարում, հարբած ժամանակդ էլ խաբում են քեզ. մտածի՛ր, ի սէր Աստուծոյ, թէ ի՞նչ արեցիր երէկ Յովսէփի հետ։ Ես ուզում էի քեզ խորհուրդ տալ—ա՜խ Աստուած, ի՞նչ բարի սրտով մտածեցի—բայց դու ի՞նչպէս վարուեցիր հետս։ Այդ բաւական չէ՞ր կարծես թէ, երէկ քսակիցդ 2 թալէր է անյայտացել։ Մինչև ե՞րբ պէտք է շարունակուի այդ։ Եթէ հաշուես արածդ վատ գործերը և ծախսած փողերդ՝ կտեսնես որ դարձեալ դո՛ւ ես տուժել. բայց դեռ էլի շարունակում ես այդ մարդկանց հետ բարեկամութիւն անել և այդ անում ես քո անաստուած մեծամտութեան համար միայն։ Այդ շներից մէկը պէտք է խօսէ քո ցանկութեան համեմատ, միւսը պէտք է լռէ, երբ չես ցանկանում, որ խօսէ։ Եւ դրա փոխարէն նրանք ուտում և խմում են քեզ մօտ, բայց եթէ ձեռքներիցը գայ՝ անդունդը կգլորեն քեզ։ Այո՛, կա՞ր ժամանակ, երբ ամենքը քեզնից վախենում էին, դու կարողանում էիր նրանց սանձը ձեռքիդ պահել, բայց այժմ էլ չե՞ս կարողանում իշխել նրանց վրայ։ Իմացած եղի՛ր, որ եթէ նրանցից չհեռանաս, ծերութեանդ օրերում կորած մարդ կլինես։ Մեր դրութիւնը շա՞տ կասկածաւոր է. հենց որ հեռանում ես, ծառաներն էլ չեն աշխատում, միայն ծիծաղում, յիմարութիւններ են անում և խմել են ցանկանում։

Այսպէս խօսեց կինը, բայց տանուտէրը ոչինչ չպատասխանեց և նստած էր նրա առաջը՝ զարմացած և լուռ։ Վերջապէս նա վեր կացաւ տեղից, գնաց այգին, այնտեղից

մարգագետինը և յետոյ ձիերի ախոռը։ Հոգսն ու երկիւղը պատեցնում էին նրան. նա մի վայրկեան մնաց ախոռում և սկսեց ինքն իրեն խօսել։

46.

ՏԱՆՈՒՏԷՐՆ ԻՐ ՄՏԱԾՄՈՒՆՔՆԵՐԻ ՄԷՋ ԴԺԲԱՂԴԱԲԱՐ ՇԱ՞Տ Է ՀԵՌՈՒ ԳՆՈՒՄ

Կինս իրաւունք ունի, բայց ի՞նչ անեմ. չեմ կարող օգնել։ Անկարելի է, որ կարողանամ այդ բոլորից ազատուել։ Այսպէս ասաց Հումելը, յետոյ կրկին անիծեց Արներին, կարծես թէ այդ բոլորի պատճառը նա՛ լինէր։ ապա հայհոյեց քահանային, որ նրան եկեղեցումն այնպէս կատաղեցրել էր։ Յետոյ կրկին մտաբերեց սահմանաքարը և ասաց. այդ անիծուած քարն ես տեղահան չեմ անի, բայց եթէ անող լինի՝ Արները կկորցնի իր անտառի երրորդ մասը։ Այո՛, այդպէս է. ութերորդ և իններորդ պետական սահմանաքարերն այդ կտորն ուղիղ գծով կբաժանեն։ Բայց Աստուած ո՞չ անի, սահմանաքարը չեմ տեղափոխի. սակայն եթէ այդ ճիշտ սահմանաքար չլինի՞. այդ քարը կարծես թէ ջրհեղեղից է մնացել, ոչ համար ունի և ոչ էլ նշան։ Յետոյ գնաց իր սենեակը, վերցրեց հաշուեմատեանը, հաշուեց, գրեց, թերթեց, թղթերը միմեանցից բաժանեց, կըրկին միացրեց, մոռացաւ կարդացածը, նորից որոնեց, ինչ որ հէնց այժմ գրել էր, ապա գիրքը դրեց կրկին արկղի մէջ, սկսեց սենեակում մէն գալ և մտածում ու խօսում էր ինքն իրեն՝ կալուածատիրոջ նշան ու համար չունեցող սահմանաքարի մասին։ «Առհասարակ ոչ մի սահմանաքար առանց նշանի չէ. ի՞նչ է միտս գալի. կարծեմ Արներներից մէկը պէտք է պետական անտառը խիստ փչացրած լինի. գուցէ հէնց այդ տեղն է. այդ քարը մի անբնական և ծուռը գծով է բաժանում Արների կալուածքը պետական անտառից։ Այդ տեղից երկու ժամուայ հեռաւորութեամբ գիծն աւելի ուղիղ է. քարն էլ ոչինչ նշան չունի և բաժանուած տեղը փոս չկայ. եթէ անտառը պետութեանը պատկանի, ես անարդարութիւն արած չեմ լինի, այլ հաւատարիմ կլինեմ երկրի պետին։ Բայց եթէ սխալուե՞մ. ոչ, չե՛մ տեղափոխի քարը։ Տեղափոխելու համար պէտք է նրա

շուրջը փորել և մի քարընկեցի հեռաւորութեան չափ դաշտի վրայ ցած գլորել՝ մինչեւի ժայռը, իսկ քարը ծանր է։ Ցերեկով քլունգի իւրաքանչիւր թեկոցը լսելի կլինի, որովհետև կառուղուց մօտիկ է, իսկ գիշերը... չե՞մ համարձակուի, ամեն մի խշխշոցից կվախենամ. իսկ եթէ մի գորշուկ կամ մի եղնիկ դուրս թռչի, ես կուշաթափուեմ։ Եւ ո՞վ գիտէ թէ աշխատելու ժամանակ մի ուրուական չի բռնի ինձ։ Ճշմարիտ որ սահմանաքարի մօտ գիշերն ապահով չէ. աւելի լաւ է, թողնեմ այդ միտքը»։

Մի վայրկեանից յետոյ նա կրկին շարունակեց. ինչո՞ւ շատ մարդիկ ո՛չ դժոխքի և ո՛չ էլ ուրուականների են հաւատում։ Առաջուայ գրագիրը ո՛չ մէկին էլ չէր հաւատում, իսկ փոխանորդը, Աստուած է վկայ, անկարելի է, որ մի բանի հաւատար։ Գրագիրը հարիւր անգամ բարձրաձայն ասել է ինձ. մեռնելուցս յետոյ ամեն բան կվերջանայ ինձ հետ, ինչպէս որ իմ շան կամ ձիու սատկելուց յետոյ. նա հաւատում էր իր ասածին, ոչնչից չէր վախենում և ուզածն անում էր։ Գուցէ նա իրաւունք ունէր։ Եթէ ե՞ս էլ կարողանայի հաւատալ, յուսալ և ընդունել սրբոտանց, որ այդ ճշմարիտ է—որսի ժամանակ հէնց առաջին անգամ Արներին տեսնելիս թփերի յետևից կսպանէի նրան. քահանայի տունը կրակ կտայի։ Բայց ի զո՞ւր. ես չե՞մ կարող հաւատալ. չե՞մ կարող յուսալ։—Այդ ճշմարիտ չէ. դրանք յիմարներ են, մոլորուա՞ծ յիմարներ, որ հաւատում են այդ բաներին։—Ո՞հ, ո՛չ, կա՛յ մի Աստուած. Աստուած կա՛յ—սահմանաքա՞ր, սահմանաքա՞ր, չե՞մ տեղափոխի քեզ։

Այսպէս էր խօսում Հումելը և դողում, բայց այդ միտքը նրանից չէր հեռանում։ Նա ինքն իրենից զզուեց և ուզում էր փախչել. դուրս գնաց փողոց, խօսեց առաջին պատահած գիւղացու հետ՝ եղանակի, քամու և այն որդերի մասին, որ երեք տարի առաջ անօսրացրել էին հաճարը։ Մի փոքր ժամանակից յետոյ՝ մի քանի ծարաւ մարդկանց հետ նորից եկաւ գինետուն, գինի տուեց նրանցը, ինքը սափրեչից կրկին փոշի առնելով ընդունեց և այդպիսով վերջապէս մթնացրեց այդ տօն օրը։

47.

ԸՆՏԱՆԵԿԱՆ ԿԻՐԱԿՆՕՐԵԱՑ ԶՈՒԱՐՃՈՒԹԻՒՆ

Թողնո՞ւմեմ քեզ մի վայրկեան, տո՛ւն զզուանաց. սիրտը ծանր էր, աչքս խաւար, ճակատս խորշոմած և վախենում էի քո զզուելի արարքներից. այժմ մի վայրկեան թողնո՞ւմեմ քեզ։ Աչքս կրկին լուսաւորւում է, ճակատս բացւում և կուրծքս նորից ազատ շնչում։ Եւ մտածենում եմ կրկին մի խրճթի, ուր մարդասիրութիւն կայ։

Այսօր առաւօտը Լինհարդն և իր կին Գերտրուդը եկեղեցի էին գնացել, իսկ դրանց մանուկները նստած էին միասին իրենց սենեակում՝ հանգիստ և երկիւղածութեամբ աղօթում, երգում և կրկնում էին այդ շաբաթուայ ընթացքում սովորածները, որովհետև սովորութիւն ունէին իւրաքանչիւր կիրակի երեկոյ բոլորը Գերտրուդին պատմելու։ Երբ մայրն եկեղեցումն էր լինում, Լիզէն, ամենից մեծը, պէտք է միշտ հոգս տանէր փոքրիկ Գրիտէլիի մասին, նրան վերկացնէր, մաքրէր, կերակրէր. և այս բանը Լիզայի համար կիրակնօրեայ զուարճութիւն էր դարձել։ Երբ նա փոքրիկին իր ձեռքն էր առնում և խաղում, երևակայում էր, որ ինքն էլ մեծ է։ Արժէ՞ր տեսնել՝ թէ ինչպէս էր նա մօր դերը կատարում, փոքրիկին հազար անգամ կրծքին կպցնում, գլխով անում ու ժպտում. փոքրիկը փոխադարձաբար ժպտում էր, ձեռքերը տարածում և ոտքերը բարձր ու ցածր անում նրա գրկում։ Նա՝ մէկ Լիզէի գլխի ծածկոցից էր բռնում, մէկ նրա փոքրիկ հիւսից, մէկ բթից, յետոյ կիրակնօրեայ խայտաբղէտ վզնոցից և ի՞-է, ի՞-է անում։ Նիկլասն ու Էննէն էլ ի՞-է էին պատասխանում։ Փոքրիկն իր գլուխն ու աչքերը շրջելով՝ որոնում էր այդ ձայնը, նայում Նիկլասին և ժպտում. Նիկլասը տեղից վե՞ր էր թռչում և իր ժպտող քոյրիկին գրկում։ Այս բոլորը շա՞տ սիրուն էր։ Լիզէն ուզում էր, որ փոքրիկը միայն իր երեսին ժպտայ, հոգում էր նրա լացի առաջն առնել և ուրախացնում էր նրան՝ հոգացողութեամբ մէկ մինչև առաստաղը բարձրացնելով և մէկ էլ մինչև յատակն իջեցնելով։ Գրիտելին այս խաղի ժամանակ ուրախանում էր և փոքրիկի ձեռքերն ու գլուխը հայելու վրայ սեղմում։ Փոքրիկը հե-

ուից տեսնելով մոր գալը՝ գլխով էր անում, ժպտում, ձեռքերը դէպի նա տարածում և համարեա թէ թաւալւում քրոջ ձեռքերի վրայ։ Այս ամենը ճշմարիտ որ գեղեցիկ էր։ Լինհարդի երեխաների կիրակնօրեայ մշտական զուարճութիւնն էր այդ։ Եւ ո՞րքան սիրելի է Տիրոջն այդ ուրախութիւնը. նա բաւականութեամբ է նայում մանուկների անմեղութեան վրայ, երբ դրանք ուրախանում են իրենց գոյութեամբ և օրհնում է, որ դրանք իրենց ամբողջ կեանքի ընթացքում արդար, լաւ և առողջ լինեն։

Գերտրուդն այսօր բաւական մնաց իր մանուկներից, որովհետև ինչ որ հրամայուած էր, ամեն բան կարգին էին արել։ Եւ իսկապէս մանուկների համար շատ մեծ ուրախութիւն է, երբ հայրն ու մայրը բաւական են մնում դրանցից։

Գերտրուդի երեխաներն այժմ վայելում էին այդ ուրախութիւնը։ Նրանք իրենց ծնողների գիրկն էին ընկնում, որոնում էին նրանց ձեռքերը, բռնում կոնները և յետոյ պարանոցովը փաթաթւում։ Լինհարդի և Գերտրուդի համար տօն օրերի ամենաքաղցր վայելչութիւնն այդ էր։ Գերտրուդը մայր լինելուց յետոյ դրանից աւելի մեծ զուարճութիւն չունէր. այդ պատճառով նրա զաւակներն էլ բարի և երկիւղած էին։ Լինհարդն արտասուեց այսօր, յիշելով, որ իր անմտութեամբ յաճախ ներկայ չէր եղել այդ ընտանեկան զուարճութիւններին։

Ընտանեկան զուարճութիւնն ամենագեղեցի՞կն է երկրիս վրայ, իսկ ծնողների՝ իրենց զաւակներով ուրախանալը, մարդկութեան ամենասո՞ւրբ զգացմունքը։ Դրանով ծնողների սիրտը բարի և երկիւղած է դառնում, մարդկութիւնը համբառնում է դէպի երկնաւոր Հայրը. Տէրն օրհնում է այսպիսի ուրախութեան արտասուքը և վարձատրում հոր հաւատարմութիւնն ու մոր հոգացողութիւնը։ Բայց այն անաստուած հայրը, որ իր որդոց վրայ ուշադրութիւն չէ դարձնում, նրանցն իբրև ծանր բեռն է նկատում, շաբաթուայ ընթացքում փախչում նրանցից և կիրակի օրը թագնւում, հանգստութիւն է որոնում, նրանց անմեղ ուրախութիւններից փախչում և անհամբերութեամբ սպասում, որ նրանք էլ իրենց անմեղութիւնը կորցնելով իր նման դառնան՝ աքացի է տալիս աշխարհիս ամենավսե՞մ երջանկութեանը։ Այդպի-

սի ծնողն էլ ուրախութիւն չի տեսնի իր զաւակներից և հանգստութիւն չի գտնի նրանց ձեռքից։

Լինհարդն ու Գերտրուդն այդ տօնի օրն ուրախ սրրտով խօսեցին մանուկների հետ՝ երկնաւոր բարի Աստուծոյ և Փրկչի շարչարանաց մասին։ Երեխաները լսում էին խաղաղ և ուշադիր. կէս օրը հարսանեաց հանդէսի պէս ուրախ և արագ անցաւ. այդ միջոցին զանգահարեցին և Լինհարդն ու Գերտրուդը կրկին գնացին եկեղեցի։

Ճանապարհին, երբ անցնում էին տանուտէրի տան առաջովը, Լինհարդն ասաց Գերտրուդին. այս առաւօտ տանուտէրը սարսափելի դէմք ունէր եկեղեցում, կեանքումս նրան այդպէս չեմ տեսել։ Իր պաշտօնը կատարելիս՝ քրտինքը կաթում էր նրա ճակատից, դու չնկատեցի՞ր, Գերտրուդ, բաժակն ինձ տալիս նա դողո՞ւմ էր։

Գերտրուդ։ Ես չնկատեցի։

Լինհարդ։ Սիրտս կտրտուեց նրան այդպէս տեսնելով. եթէ ես համարձակութիւն ունենայի, բարձրաձայն կասէի. ների՛ր ինձ, տանուտէ՛ր։ Եթէ ես մի բանով կարողանայի նրան ցոյց տալ, որ նրա վատը չեմ ուզում, կանէի։

Գերտրուդ։ Աստուած թող վարձատրէ քեզ այդպիսի մտքերիդ համար, սիրելիս. լաւ որ դու առիթ ունես այդպէս անելու, սակայն Ռուդիի քաղցած զաւակներն և ուրիշները վրէժխնդրութիւն են աղաղակում տանուտէրի դէմ և նա հարկաւ չի կարող ազատուել այդ վրէժխնդրութիւնից։

Լինհարդ։ Խղճում եմ այդ մարդուն, նա շա՞տ դըժբաղդ է։ Ես վաղուց արդէն նկատել եմ, որ նա նոյն իսկ իր տան աղաղակի մէջ խորին անհանգստութեամբ չարչարւում է։

Գերտրուդ։ Սիրելիս, ով հրաժարւում է խաղաղ և համեստ կեանքից, նրա սիրտը չի կարող երբէք հանգիստ լինել։

Լինհարդ։ Եթէ ես կեանքումս մի բան պարզ տեսել և փորձել եմ, այդ այն է, որ տանուտէրի ուժեղ կողմնակիցները նրա տանն ինչ որ խորհրդակցում, սկսում և ստիպում էին, այնուամենայնիւ երբէք հանգստութիւն չէին գըտնում ու բաւականութիւն չէին ստանում։

Այսպէս խօսակցելով նրանք եկեղեցի մտան և խորին

զգացմունքով լսեցին քահանայի եռանդուն քարոզը՝ Յուդայի մատնութեան մասին։

48.

ՄԵՂՔԻ ՄԱՍԻՆ

Գերտրուդն էլ լսեց կանանց նստարաններից վրայ ընդհանրացած այն քչփչոցը՝ թէ տանուտէրի տունը կրկին լիքը է անպիտաններով և ժամը դուրս գալուց յետոյ նոյնը հաղորդեց Լինհարդին։

Վերջինս պատասխանեց. չե՞մ կարող հաւատալ։ մի՞թէ կարելի է այդ ժամերգութեան միջոցի՞ն, այն էլ այսպիսի մի սո՞ւրբ օր։

Գերտրուդ։ Այդ իհարկէ սարսափելի է, բայց անաստուած կեանքի մոլորութիւններն ամենազզուելի բաներն են անել տալիս։

Լինհարդը հառաչում է, իսկ Գերտրուդը շարունակում.

Մինչև կեանքիս վերջը չեմ մոռանայ մեր հանգուցեալ քահանայի այն խօսքերը, որով նա վերջին անգամ պատրաստեց մեզ՝ սուրբ հաղորդութիւնն ընդունելու համար։ Նա օրինակ բերեց ծովը, որ անձրևների ժամանակ փոքր առ փոքր անդադար բարձրանում է։ Ծովի ջրի բարձրանալը, ասաց նա, աննկատելի է մնում, բայց և այնպէս նա ամեն օր և իւրաքանչիւր ժամ բարձրանում է։ Ծովի այդպէս աստիճանաբար բարձրանալը նոյնչափ վտանգաւոր է, որչափ նրա միանգամից և փոթորկից մեծանալը։ Այդ պատճառով փորձուած և խելօք մարդը հէնց սկզբում կսկսէ միջոցներ որոնել՝ վնասից ազատուելու համար, իսկ անխելքն ու անփորձն ուշադրութիւն չի դարձնի ծովի ջրի բարձրանալու վրայ, մինչև որ արտաքին պարիսպները չքանդուեն և դաշտերն ու մարգագետիններն անապատներ չդառնան, մինչև որ վտանգից զգուշացնելու համար զօղանջող զանգի ձայնը երկրի բնակիչներին չհրաւիրէ աւերման առաջն առնելու։ Այդպէս էլ մեղքն է, ասաց նա, և նրանից յառաջացած աւերմունքը։

Ես թէև դեռ ծեր չեմ, սակայն արդէն հարիւր անգամ փորձել եմ, որ այն արդար քահանան իրաւունք ունէր. մարդ մի որևէ մեղք շարունակ գործելիս, իր սիրտն

այնպէս կոշտացնում է, որ էլ ուշադրութիւն չէ դարձնում իր անպիտան արարքների հետզհետէ բազմանալու վրայ, մինչև որ աւերումն ու զզուանքը նրան քնից չէ արթնացնում։

49.

ՄԱՆԿԱԿԱՆ ԲՆԱՒՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Այսպէս զբուցատրելով նրանք հասան իրենց խրճիթը։ բոլոր երեխաներն իրենց հօրն ու մօրը դիմաւորեցին և ուրախ աղաղակներով ընդունեցին նրանցը։ Հո՞ւտ եկ, մայր, շո՛ւտ, արդէն կրկնել վերջացրել ենք։

Գերտրուդ։ Այսօր ինչո՞ւ այդպէս շտապում էք, սիրելիներս, ի՞նչ կայ։

Մանուկներ։ Եթէ լա՞ւ գիտենանք, ընթրիք կստանանք, այնպէս չէ՞, մայրիկ. երէկ այդպէս խոստացար մեզ։

Մայր։ Այո՛, տեսնեմ թէ ձեր սովորածն ի՞նչպէս գիտէք։

Մանուկներ։ Բայց եթէ գիտենանք, կստանա՞նք։

Մայր։ Այո՛, երբ վերջացնենք։

Մանուկները սրտանց ուրախացան և շուտ ու լաւ կըրկնեցին այդ շաբաթուայ սովորածը։ Յետոյ մայրը տուեց նրանց իրենց ընթրիքը և երկու ամսան սէր չքաշած կաթը։ Ապա նա Գրիտելիին իր գիրկն առաւ և ուրախութեամբ լսում էր՝ թէ ի՞նչպէս մանուկներն ուտելու ժամանակ պատմում էին միմեանց՝ թէ իրենց ընթրիքն ո՞ւմը պէտք է տան։ Ոչ ոք իր բաժին հացից մի պատառ անգամ չկերաւ և կաթի մէջ չբրթեց. ամեն մէկը նրանցից իր հացի կտորը ցոյց էր տալիս միւսներին և ուրախանում։ Նիկլասը մօտեցաւ մօրը, բռնեց նրա ձեռքը և ասաց. մի կտոր հաց էլ ինձ համար կտա՞ս, մայրիկ։

Մայր։ Նիկլաս, չէ՞ որ քո բաժինը ստացար։

Նիկլաս։ Այն պէտք է Ռուդելիին տամ։

Մայր։ Ես չեմ հրամայել, որ անպատճառ նրան տաս. կարող ես ուտել, եթէ ցանկանում ես։

Նիկլաս։ Ո՛չ, չեմ ուզում ուտել, բայց մի կտոր էլի կտա՞ս։

Մայր։ Ո՛չ, հարկաւ ոչ։

Նիկլաս։ Ինչո՞ւ։

Մայր։ Որպէս զի չկարծես՝ թէ երբ ստամոքսդ լիքն է և աւելի չես կարող ուտել, այն ժամանակ միայն պէտք է յիշես աղքատներին։

Նիկլաս։ Միայն սոյդ պատճառով, մայրիկ։

Մայր։ բոլորը կտաս նրան։

Նիկլաս։ Այո՛, մայրիկ, ես գիտեմ, որ նա շա՜տ քաղցած է, իսկ մենք ժամի վեցին արդէն կընթրենք։

Մայր։ Նիկլաս, կարծեմ նա այն ժամանակ էլ ոչինչ չի ստանայ։

Նիկլաս։ Այո՛, Աստուած է վկայ, մայր, նա ճշմարիտ որ չէ ընթրում։

Մայր։ Այո՛, սիրելիս, չքաւորների թշուառութիւնը մեծ է. մարդ պէտք է շատ անսիրտ լինի, որ նրանց կարիքը փոքր ինչ թեթևացնելու համար՝ իր բերնիցը մի բան չկտրի ու նրանցը տայ։

Նիկլասի աչքերն արցունքով լցուեցին, իսկ մայրը հարցրեց նաև միւս մանուկներին։

Մայր։ Լիզէ, դո՛ւ էլ քո բաժին հացը ուրիշին պէտք է տաս։

Լիզէ։ Այո՛, ի հարկէ, մայրիկ։

Մայր։ Իսկ դո՛ւ, Էննէ, դու նո՞յնպէս։

Էննէ։ Այո՛, մայրիկ։

Մայր։ Դու նո՞յնպէս, Յօնաս։

Յօնաս։ Ես էլ այդպէս եմ մտածում, մայրիկ։

Մայր։ Շա՜տ լաւ, զաւակներս, բայց ի՞նչպէս պէտք է սկսէք. ամեն բան իր կարգ ու կանոնն ունի. շատ անգամ պատահում է, որ լաւ բան մտածելիս՝ անիրաւացի բան ենք անում։ Նիկլաս, ի՞նչ պէտք է անես քո հացը։

Նիկլաս։ Ես, ինչքան կարող եմ, արագ կվազեմ Բուդիի մօտ, Բուդէլիին դուրս կկանչեմ ու կտամ նրան։ Թոյլ կտա՞ս, որ հէնց այժմ գնամ, մայրիկ։

Մայր։ Սպասի՛ր մի փոքր, Նիկլաս։ Լի՛զէ, դո՞ւ ինչ պիտի անես հացդ։

Լիզէ։ Ես Նիկլասի նման չեմ անի, այլ նշանով կկանչեմ Բեթէլին մի անկիւն և դոգնոցիս տակ ծածկած հացն

այնպէս կտամ նրան, որ ոչ ոք չնկատէ և մինչև անգամ իր հայրը չտեսնէ։

Մայր։ Իսկ դու, Էննէ, ի՞նչ պիտի անես։

Էննէ։ Ես չգիտեմ թէ ի՞նչպէս կպատահեմ Հայրելիին. բայց ինչպէս էլ որ լինի, նրան կտամ։

Մայր։ Իսկ դու, Եօնաս, փոքրիկ սատանայ, ինչպէս երևում է մտքումդ մի չարութիւն ունես. ի՞նչ պիտի անես։

Եօնաս։ Ես նրա բերանը կդնեմ հացը, մայր, ինչպէս որ դու ես անում ինձ ուրախ ժամանակդ։ Աչքերդ փակիր և բերանդ բաց, կասեմ նրան և յետոյ նրա ատամների մէջ կդնեմ հացի կտորը. նա կծիծաղի, այնպէս չէ՞, մայր։

Մայր։ Այդ բոլորը լաւ է, զաւակներս, բայց և այնպէս մի բան պէտք է ասեմ ձեզ. դուք պէտք է հացն այնպէս ծածուկ տաք մանուկներին, որ ոչ ոք չնկատէ և չկարծէ թէ՝ դուք ուզում էք ձեզ ցոյց տալ։

Նիկլաս։ Ուրեմն ես էլ պէտք է գրպանս դնեմ հացը, մայր։

Մայր։ Հասկանալի է, Նիկլաս։

Լիզէ։ Ես այդպէս չպէտք է անեմ մայր, և առաջուց էլ ասացի, որ այդպէս չեմ անի։

Մայր։ Դու միշտ սիրում ես կատակ անել, Լիզէ։ Ես մոռացայ, որ գովեմ քեզ դորա համար՝ լաւ արիր որ յիշեցրիր ինձ։

Լիզէն կարմրեց և լռեց, իսկ մայրն ասաց մանուկներին. այժմ կարող էք գնալ, միայն թէ չմոռանաք ասածներս։

Մանուկները գնացին։ Նիկլասը թռչկոտալով վազեց դէպի Ռուդիի խրճիթը, բայց Ռուդէլիին փողոցումը չգտնելով՝ ձայն տուեց նրան. սակայն իզուր, Ռուդէլին ոչ ցած եկաւ և ոչ էլ լուսամուտին մօտեցաւ։ Նիկլասն ինքն իրեն ասաց. ի՞նչ պէտք է անեմ այժմ. նրա սենեակը գնա՞մ, բայց չէ՞ որ ծածուկ պէտք է տամ. ես ներս կերթամ և կասեմ նրան որ ցած գայ։

Ռուդէլին նստած էր իր հօր և եղբայր ու քոյրերի հետ հանգուցեալ մեծ մօր բաց դագաղի մօտ, որ մի երկու ժամից յետոյ պէտք է գերեզման իջեցնէին. հայրն ու երեխաներն արտասուալի աչքերով պատմում էին հանգուցեալի արած բարի գործերը։ Նրանք լալիս էին՝ յիշելով գետ-

նախնձոր գողանալու դէպքը և բաց դագաղի առաջ խոստանում էին գողութիւն չանել՝ եթէ նոյն իսկ քաղցից մեռնէին։

Հէնց այդ ժամանակ Նիկլասը բաց արեց դուռը, տեսաւ ննջեցեալին, վախեցաւ և կրկին սենեակից դուրս վազեց։ Սակայն Ռուդին տեսնելով նրան, կարծեց թէ Լինհարդը իրեն ասելու բան է ապսպրել, վազեց երեխայի յետևից և հարցրեց թէ ի՞նչ է ուզում։ Ո՛չինչ, ո՛չինչ, պատասխանեց Նիկլասը. ուզում էի Ռուդէլիի մօտ գնալ, բայց նա աղօթում է այժմ։

Ռուդի։ Այդ ոչինչ, եթէ նրա մօտ ես ուզում գընալ, արի։

Նիկլաս։ Թող նա կարճ ժամանակով դուրս գայ փողոց։

Ռուդի։ Դուրսը ցուրտ է և նա սիրով չի հեռանում մեծ մօր դագաղից. ե՛կ նրա մօտ։

Նիկլաս։ Չեմ կարող ներս գալ, Ռուդի, թոյլ տուր նրան, որ մի րոպէ դուրս գայ։

Շա՛տ լաւ, ասում է Ռուդին և ներս մտնում. Նիկլասը գնում է մինչև դուռը և ձայն է տալիս Ռուդէլիին, որ մի վայրկեան դուրս գայ։

Ռուդէլի։ Այժմ չեմ կարող փողոց գալ, Նիկլաս, ուզում եմ մեծ մօրս մօտ մնալ, որովհետև նրան շուտով տանելու են։

Նիկլաս։ Միայն մի վայրկեան դուրս ե՛կ և էլի գնա՛։

Ռուդի։ Գնա՛ և տես՝ թէ ի՞նչ է ուզում Նիկլասը։

Ռուդէլին դուրս է գնում. Նիկլասը բռնում է նրա ձեռքը և ասում. ե՛կ, քեզ մի բան ունեմ ասելու, տանում է նրան մի անկիւն, արագութեամբ հացը նրա գրպանն է դնում և փախչում։ Ռուդէլին շնորհակալութիւն է անում և նրա յետևից կանչում. շնորհակալութիւն յայտնիր հայրիկիդ ու մայրիկիդ։ Նիկլասը յետ է դառնում, նըշան է անում, որ նա լռի և ասում. այդ բանը ոչ ոք չպէտք է իմանայ, և նետի նման սլանում։

50.

ԲԱՐԻ ԳՈՐԾ ԱՆԵԼԻՍ ԷԼ ՎԱՏ ՍՈՎՈՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԴԱՌՆԱՑՆՈՒՄ ԵՆ ՄԱՐԴՈՒ ՀԱՃԵԼԻ ԲՈՊԻՆԵՐԸ

Այդ միջոցին Լիզէն կամաց-կամաց գնաց գիւղի վերին թաղում բնակուող Բոյտի Մարքոսի Բեթելիի մօտ։ Վերջինս կանգնած էր պատուհանի առաջ։ Լիզէն նշան արեց ու Բեթելին սենեակից դուրս գալով՝ եկաւ նրա մօտ, բայց նրա հայրը նկատելով այդ, ինքն էլ դուրս եկաւ և թագնուեց դրան ետևը։ Երկու մանուկները՝ էլ դրան առաջը կանգնած՝ չտեսան նրան և սկսեցին ազատ խօսել։

Լիզէ։ Բեթելի, քեզ համար հաց եմ բերել։

Բեթելի։ (գողացող ձեռքը մեկնելով) Ո՞րքան բարի ես, Լիզէ, սաստիկ քաղցած եմ. բայց ինչո՞ւ ես այժմ հաց բերում։

Լիզէ։ Որովհետև սիրում եմ քեզ, Բեթելի և այսուհետև մենք բաւականին հաց կունենանք. հօրս յանձնեցին եկեղեցու վերաշինութեան գործը։

Բեթելի։ Իմ հայրն էլ գործ կունենայ։

Լիզէ։ Այո՛, բայց քո՞ հայրը միայն մշակութիւն պէտք է անէ։

Բեթելի։ Այդ միևնոյն է, վաստակ կունենայ։

Լիզէ։ Վաղո՞ւց է որ քաղցած էք։

Բեթելի։ Ա՜խ, երանի թէ այսուհետև գոնէ լաւ լինենք։

Լիզէ։ Ճաշին ի՞նչ ունէիք։

Բեթելի։ Չեմ կարող ասել։

Լիզէ։ Ինչո՞ւ չէ։

Բեթելի։ Եթէ հայրս այդ իմանայ, ինձ կը....

Լիզէ։ Ես նրան ոչինչ չեմ ասի։

Բեթելին գրպանից հանեց շաղգամի հում կտորն ու ասաց. ահա՛, տե՛ս։

Լիզէ։ Տէ՜ր Աստուած. ուրիշ ոչի՞նչ։

Բեթելի։ Ո՛չ, վկայ է Աստուած, որ երկու օր շարունակ այս ենք ուտում։

Լիզէ։ Եւ քեզ արգելուած է այդ բանն ուրիշներին ասել և մի բան խնդրել։

Բեթելի։ Այո՛, եթէ հայրս իմանայ՝ ինչ որ քեզ ասացի, բանս բուրդ կլինի։

Լիզէ։ Առաջ կեր այս հացի կտորը, յետոյ ներս մտիր։

Բեթելի։ Այո՛, պէտքէ շուտով ներս գնամ։

Երեխան հէնց որ սկսեց ձեռքի հացն ուտել՝ բարեպաշտ Մարքսը բաց արաւ փոքրիկ դուռը և ասաց. ի՞նչ ես ուտում, զաւակս։ Վախեցած երեխան բերանի պատառն առանց ծամելու կուլ տուեց և ասաց. ո՛չինչ, ոչինչ, հա՛յր։

Մարքս։ Այո՛, ո՞չինչ, սպասի՛ր. իսկ դո՛ւ, Լիզէ..... Ես չեմ սիրում, որ իմ երեխաներին ծածուկ հաց տան, և նրանք էլ պատմեն՝ թէ ինչ են ուտում ու խմում տանը և միևնոյն ժամանակ սուտ խօսեն։

— Դու անպիտան Բեթելի, ճաշին ձուաձեղ չկերա՞նք։

Լիզէն փախաւ, իսկ հայրը Բեթելիին բռնեց և վայրենի, բարկացած հայեացքով ներս տարաւ. Լիզէն հեռուից լսում էր խեղճ երեխայի աղաղակը։

Էննեն պատահեց Հայրելիին նրանց տան դրան առաջն ու ասաց. հաց կուզե՞ս։

Հայրելի։ Այո՛, եթէ ունես։

Էննէն տուեց հացի կտորը. նա շնորհակալ եղաւ և կերաւ, իսկ Էննէն տուն վերադարձաւ։

Եօնասը պտտեց Շաբէն Միխէլի տան շուրջը, մինչև որ Բէբէլին տեսաւ Նրան և ցած եկաւ։

Բէրէլի։ Ի՞նչ ես շինում այստեղ, Եօնաս։

Եօնաս։ Ուզում եմ մի ուրախ բան անել։

Բէրէլի։ Ես էլ քեզ հետ կուրախանամ, Եօնաս։

Եօնաս։ Եթէ իմ ուզածն անես, ճիշտ որ կուրախանանք։

Բէրէլի։ Ի՞նչ ես ուզում, որ անեմ։

Եօնաս։ Պէտքէ բերանդ բանաս և աչքերդ փակես։

Բէրէլի։ Յետոյ որ մի անպիտան բան դնես բերա՞նս։

Եօնաս։ Ո՛չ, այդպիսի բան չե՞մ անի, Բէրէլի։

Բէրէլի։ բայց տե՛ս, չխաբես ինձ։

Նա բերանը բաց է անում, իսկ աչքերը կիսով չափ փակում։

Եօնաս։ Աչքերդ լա՛ւ պէտքէ փակես։

Բէրէլի։ Այո՛, բայց եթէ անպիտան բան անե՞ս.....

Նա բոլորովին փակում է աչքերը և Եօնասն արագ

հացը նրա բերանն է կոխում ու փախչում։ Բէբէլին հացը հանում է բերանից և ասում. Ի՞նչ լաւ բան է. յետոյ նստում է և ուտում։

51.

ՈՉ ՈՔ ՉԻ ԿԱՐՈՂ ՆԱԽԱՑԵՍՆԵԼ՝ ԹԷ ԵՐԲԵՄՆ ԱՄԵՆԱՓՈՔՐ ԼԱՒՈՒԹԻՒՆՆ ԷԼ Ի՞ՆՉ ԼԱՒ ՀԵՏԵՒԱՆՔՆԵՐ ԿԱՐՈՂ Է ՈՒՆԵՆԱԼ

Բէբէլի հայր Միխէլը լուսամտից տեսնում է երեխաների խաղը, ճանաչում է Լինհարդի Եօնասին և նրա խիղճը տանջւում է։ — Ի՞նչ անպիտանն եմ, ասաց նա ինքն իրեն, տանուտէրից կաշառուելով՝ աշխատում եմ վնասել ինձ հաց և աշխատանք տուող որմնադրին. այժմ էլ ներկայ եղայ այս փոքրիկ երեխայի հրեշտակային անմեղ սրտի արտայայտութեանը։ Ո՛չ, դրանցն ես վատութիւն չեմ կարող անել։ Երէկուանից արդէն տանուտէրն ինձ համար մի սարսափելի բան է դարձել։ Ես չեմ կարող մոռանալ նրա՝ հաղորդութեան բաժակն ինձ առաջարկելիս ունեցած դէմքի արտայայտութիւնը։ Այդպէս մտածելով՝ Միխէլն ամբողջ օրը տանը մնաց և լրջօրէն մտածում էր իր անելիքի մասին,

Լինհարդի երեխաները կրկին տուն էին վերադարձել և ծնողներին պատմում էին իրենց արածները։ Նրանք բոլորն էլ շատ զուարթ էին. միայն Լիզէն այդպէս չէր, թէև նա էլ ստիպում էր իրեն ուրախ երևալ և շատ բառերով պատմեց՝ թէ ինչպէս ինքը Բեթելիին սրտանց ուրախացրել է։

Մայր։ Քեզ անպատճառ մի բան է պատահել, Լիզէ։

Լիզէ։ Ո՛չ, ոչինչ չէ պատահել. ես նրան ուրախացրի։

Մայրն էլ ոչինչ չհարցրեց, աղօթեց երեխաների հետ, ընթրել տուեց և տարաւ ննջարանը։ Գերտրուդն ու Լինհարդը դեռ մի ժամ կարդացին սուրբ գրքից և խօսեցին կարդացածի մասին։ Այսօր նրանց սիրտը շատ խաղաղ ու երջանիկ էր։

52.

ԱՌԱՒՕՏԵԱՆ ՇԱՏ ՎԱՂՆ ԷԼ ԱՐԴԷՆ ՈՒՇ Է ԱՑՆ ԲԱՆԻ ՀԱՄԱՐ, ՈՐ ՊԷՏՔ Է ԿԱՏԱՐՈՒԱԾ ԼԻՆԷՐ ՆԱԽԸՆԹԱՑ ԵՐԵԿՈՅԵԱՆ

Առաւօտեան կանուխ, երբ որմնադրին արթնացաւ՝

լսեց, որ մէկը լուսամտից կանչում է իրեն։ Նա շուտ վեր կացաւ և բացեց դուռը. կանչողը Ֆլինկն էր, կալուածատիրոջ ծառան։ Նա ողջունեց որմնադրին և ասաց. արդէն երէկ պէտք է հաղորդէի քեզ Արների հրամանը, որ այսօր անպատճառ սկսէք քար կտրելը։

Որմնադիր։ Լսածիս համեմատ՝ տանուտէրը հրամայել է բանուորներին այսօր դղեակ գնալ. բայց դեռ վաղ էր գուցէ ճանապարհ ընկած չլինեն. ես կասեմ նրանց։

Յետոյ նա լուսամտից ձայն տուեց դրացի Լէնքին, սակայն ոչ ոք չպատասխանեց։ Մի փոքր ժամանակից յետոյ եկաւ Լէնքի հետ ապրող Կիլլէրը և ասաց, որ Լէնքը կէս ժամ առաջ արդէն մուսների հետ ուղևորուել է դէպի դըղեակը։ Տանուտէրն երէկ ընթրիքից յետոյ կրկին ապսպրել էր, որ նրանք անպատճառ ժամի չորսից առաջ ճանապարհ ընկնեն, որովհետև ինքը ճաշին կրկին տանը պէտք է գտնուի։

Այս յայտարարութիւնը Ֆլինկին տհաճութիւն պատճառեց և նա անիծեց տանուտէրին։

Որմնադիր։ Ի՞նչ պէտք է անէք։

Ֆլինկ։ Գուցէ կարողանամ նրանց ետևից հասնել։

Որմնադիր։ Մարտիս բլուրի վրայից կարող ես նրանցը կէս ժամաչափ հեռաւորութեամբ տեսնել. իսկ եթէ քամին յաջողակ է, ձայնդ էլ կհասնի նրանցը։

Ֆլինկն էլ ժամանակ չկորցնելով՝ վազում է դէպի բըլուրը, կանչում է, սուլում ու բղաւում, որչափ թոյլ է տալիս իր շնչափողը, սակայն իզո՞ւր. նրանք չեն լսում, շարունակում են իրենց ճանապարհը ու շուտով այլ ևս չեն երևում։

Բայց տանուտէրը, որ շատ հեռացած չէր, լսեց նրա ձայնը, յետ նայեց և արևի ճառագայթներից փայլփլող զէնքերից ճանաչելով Ֆլինկին՝ զարմացաւ։ Նա յետ դարձաւ և Ֆլինկը պատմեց նրան՝ թէ ինչպէս ինքն երէկ սաստիկ գլխացաւի պատճառով չէ կարողացել յայտնել որմնադրին, որ հէնց այսօր պէտք է սկսուի քար կտրելը։

53.

ՄԱՐԴ ՈՐՉԱՓ ՀԱՏ ԹԵՐՈՒԹԻՒՆՆԵՐ ՈՒՆԻ, ԱՅՆՉԱՓ ԵՒՍ ԱՆՊԱՏԿԱՌ Է ՎԵՐԱԲԵՐՈՒՄ ՈՒՐԻՇՆԵՐԻ ԹԵՐՈՒԹԻՒՆՆԵՐԻՆ

Տանուտէր։ Անիծուա՛ծ անպիտան, ի՞նչ բաներ ես անում։

Փլինկ։ Սատանա՜ն տանի, ես ի՞նչ իմանայի, թէ դրանք լուսանալուց առաջ պէտք է գիւղից դուրս փախչեն, արդեօք դո՞ւ ես հրամայել։

Տանուտէր։ Այո՛, շո՛ւն անպիտան. գուցէ այժմ քո յանցանքը ե՛ս պէտք է քաւեմ։

Փլինկ։ Ես էլ հազիւ թէ ազատուեմ։

Տանուտէր։ Անիծուա՜ծ։

Փլինկ։ Նոյնն ասացի ես, երբ իմացայ, որ դրանք գիւղից դուրս են եկել։

Տանուտէր։ Ես այժմ կատակներ չե՜մ անում, անպիտա՜ն։

Փլինկ։ Ես ևս ո՛չ. սակայն ի՞նչ պէտք է անենք։

Տանուտէր։ Ցիմա՛ր, պէտք է մտածենք։

Փլինկ։ Կէս ժամ առաջ կարելի էր գործը կարգի բերել։

Տանուտէր։ Սպասի՛ր, երբէք չպէտք է փոքրոգի լինել և յուսահատուել. մի բան միտս ընկաւ. դու համարձակ ու լրջօրէն ասա՛ Արներին, որ արդէն երեկոյեան հրամանը հաղորդել ես որմնադրի կնոջը կամ երեխային։ Նրանք քո դէմ ոչինչ չեն կարող անել՝ եթէ հաստատ կերպով պնդես ասածդ։

Փլինկ։ Ո՛չ, չեմ կամենում այդ միջոցին դիմել, կարող է չյաջողուել։

Տանուտէր։ Ո՛չ, կյաջողուի, եթէ հաստատ պնդես. բայց լաւ մտածելուց յետոյ աւելի լաւ բան միտս ընկաւ։

Փլինկ։ Ի՞նչ։

Տանուտէր։ Ցե՛տ դարձիր որմնադրի մօտ, ողբա՛, լա՛ց եղիր և ասա, որ հրամանը չկատարելու համար բանդ վատ կլինի, սակայն նա կարող է քեզ միայն մի խօսքով ազատել պատասխանատուութիւնից՝ եթէ Արներին ասէ, որ ինքը տոմ-

սակը ստացել է կիրակի օրը, բայց տոնի պատճառով միւս օրն է ուղեցել յայտնել։ Այդ բանը մի մազաչափ անգամ չի փնասի որմնադրին և դու էլ ազատուած կլինես։

Փլինկ։ Իրաւունք ունես, կարծեմ այդ կարելի է անել։

Տանուտէր։ Հարկաւ կյաջողուի։

Փլինկ։ Ես պէտք է գնամ. թէև ուրիշ նամակներ էլ ունեմ յանձնելու, բայց այս առաւօտ որմնադրին կտեսնեմ։ Տէր ընդ քեզ, տանուտէր։ (Նա գնում է)։

Տանուտէրը մենակ մնալով՝ ինքն իրեն ասում է. ես այդպէս էլ կպատմեմ Արներին, եթէ չյաջողուի՝ կասեմ որ Փլինկն է ինձ այդպէս պատմել։

54.

ԽԵՂՃ ՄԱՐԴԿԱՆՑ ԱՆՕԳՈՒՏ ԱՇԽԱՏԱՆՔԸ

Այդ միջոցին բանուորները հասան դղեակ, նստեցին ամբարի մօտ եղած նստարանների վրայ և սպասում էին, մինչև որ մէկը նրանց կանչէ կամ տանուտէրը գայ։ Երբ դղեակի ծառան տեսաւ նրանցն ամբարի մօտ, ցած եկաւ և ասաց. ինչո՞ւ էք եկել, Արները կարծում է, որ դուք արդէն աշխատում էք եկեղեցու շէնքի վրայ։ Սրանք պատասխանում են, որ տանուտէրն է հրամայել դղեակ գալու և Արներին շնորհակալութիւն յայտնելու։ Այդ աւելորդ էր, ասաց Կլաուսը, բայց ես Արներին իմաց կտամ ձեր գալը։ Եւ ծառան իմաց տուեց։ Արները կանչեց նրանց իր մօտ և ուրախ դէմքով հարցրեց՝ թէ ի՞նչ են ցանկանում։ Երբ նրանք դժուարութեամբ արտայայտեցին որ իրենք շնորհակալութիւն են ուզում յայտնել, Արներն ասաց. ո՞վ հրամայեց ձեզ այդ բանի համար այստեղ գալ. տանուտէրը, պատասխանեցին գիւղացիները և կամենում էին նորից յայտնել իրենց շնորհակալութիւնը։ Այդ իմ կամքով չէ եղել, ասաց Արները։ Այժմ գնացէ՛ք և յանուն Աստուծոյ եղէք աշխատասէր և հաւատարիմ. ես ուրախ կլինեմ, եթէ այդ աշխատանքը ձեզնից մէկի կամ միւսի դրութիւնը բարւոքէ։ Ասացէ՛ք վարպետին, որ այսօր իսկ սկսէ քար կտրելը։

Գիւղացիները վերադարձան տուն։

55.

ՇՈՂՈՔՈՐԹՆ ՈՒ ԽԱԲԵԲԱՆ ԲԱՐԵԿԱՄԱՆՈՒՄ ԵՆ

Ճանապարհին գիւղացիներից մէկն ասում է միւսին. երիտասարդ պարոնը բարեսիրտ մարդ է. ծերը նոյնպէս բարի կլինէր, եթէ հարիւր տեսակ խաբեբայութիւնների զոհ գնացած չլինէր, ասացին հասակաւորները միաբերան։

Էքի։ Հայրս հազար անգամ ասել է, որ ծեր պարոնն իր երիտասարդութեան ժամանակ և յետոյ էլ՝ միշտ բարի է եղել, բայց վերջը խաբուել է տանուտէրից։

Լէէման։ Այո՛, այդ ժամանակ վերջ դրուեցաւ պարոնի բարութեանը. տանուտէրն սկսեց իր ցանկութեան համեմատ՝ լեհական արջի նման պար ածել նրան։

Լէնք։ Շուն անպիտանն առանց հրամանի մեզ այստեղ բերեց ու մենակ թողեց։

Քինասատ։ Այդ նրա սովորութիւնն է։

Լէնք։ Շան սովորութիւն է այդ։

Այո՛, Բայց պարոն տանուտէրը քաջ մարդ է. մեզպէս մարդը չի կարող իմանալ թէ ի՞նչ է պատահում աշխարհում, պատասխանեց Կրիխէրը, կարողացածին չափ բարձր ձայնով, որովհետև նկատեց տանուտէրի մօտենալը։

Դու կարող ես նրան փառաբանել. ես այժմ գովում եմ Արներին, ասաց Լէնքը նոյնպէս բարձր ձայնով, որովհետև չէր նկատել տանուտէրին։

Վերջինս առաջ եկաւ, բարևեց և հարցրեց Լէնքին. ինչո՞ւ ես այդպէս գովում Արներին։

Լէնքը պատասխանեց վախեցած. մենք միմեանց հետ խօսում էինք՝ թէ նա ի՞նչպէս սիրալի ու բարի էր։

Տանուտէր։ Սակայն այդ չէր բոլորը։

Լէնք։ Ուրիշ բան չգիտեմ։

Կրիխէր։ Այդ լաւ չէ, Լէնք, որ խօսքերդ յետ ես առնում. բայց մենակ նա չէր, պարոն տանուտէր. մի քանիսը մրթմրթում էին, որ նրանց թողել էք մենակ, ոակայն ես ասացի, որ մեզպէսները չեն կարող իմանալ, թէ ի՞նչ է մտածում պարոն տանուտէրը. այս խօսքի վրայ Լէնքը պատասխանեց, որ ես կարող եմ փառաբանել տանուտէրին, իսկ ինքը գովում է Արներին։

Ուրեմն Արներին ինձ հե՞տ ես համեմատում, ասաց տանուտէրը և ծիծաղեց բարձրաձայն։

Նա այնպէս չասաց, ինչպէս որ այժմ մեկնում են, ասացին մի քանի մարդիկ, շարժեցին գլուխները և մրթմրթում էին Կրիխէրի դէմ։

Այդ ոչինչ նշանակութիւն չունի և վատ բան չէ. մի հին առած կայ, որ ասում է «ում հացն որ ուտում եմ, նրա երգն էլ երգում եմ», ասաց տանուտէրը, սեղմեց Կրիխէրի ձեռքը, բայց էլ ոչինչ չխօսեց այդ մասին և հարցրեց թէ արդեօք Արները բարկացա՞ծ էր։

Ո՛չ, բոլորովին ոչ, պատասխանեցին նրանք. նա ասաց միայն, որ մենք դէպի տուն շտապենք և այսօր և եթ գործի գնանք։

Ցայնեցէք այդ որմնադրին, բարևեցէք իմ կողմից և ասացէք, որ այն սխալմունքը ոչինչ նշանակութիւն չունի։ Այս ասելուց յետոյ տանուտէրը շարունակեց իր ճանապարհը և նրանք էլ դիմեցին դէպի գիւղը։

Ֆլինկը վաղուց արդէն որմնադրի մօտ էր և խնդրում ու աղաչում էր, որ նա ասի՝ թէ ինքը կիրակի օրն է սուացել հրամանը։

Որմնադիրը ցանկանում էր կատարել նրա խնդիրը, բայց նախապէս այդ մասին խօսեց իր կնոջ հետ։

Ես վախենում եմ ծուռը բաներից, պատասխանեց կինը և գրազ կգամ, որ տանուտէրն այժմ արդէն դրանով արդարացել է։ Իմ կարծիքով եթէ Արները քեզ հարցնի, դու պէտք է ճշմարիտն ասես նրան, իսկ եթէ հարցնող չլինի, այն ժամանակ թող ինչ ուզում են անեն, միայն թէ ոչ ոք չվնասուի։

Լինհարդը Ֆլինկին յայտնեց այդ կարծիքը և հէնց այդ ժամանակ բանուորները յետ եկան Արնբուրգից։

Որմնադիր։ Շա՞տ շուտ վերադարձաք,

Բանուորներ։ Գնալներս իզուր էր։

Որմնադիր։ Արդեօք Արները բարկացա՞։

Բանուորներ։ Ո՛չ, բոլորովին ո՛չ, նա շատ սիրալի և ուրախ էր և ասաց մեզ, որ տուն շտապենք ու այսօր և եթ սկսենք աշխատել։

Ֆլինկ։ Տեսնո՞ւմ ես այժմ, որ քեզ համար ոչինչ

նշանակութիւն չունի: Ինձ համար բոլորովին ուրիշ է, նոյնպէս և տանուտէրի համար....

Այո՛, ընդհատում է նրան պատուելի Հիւբելբուդին, որովհետև խօսքը տանուտէրի մասին է, յիշեցի, որ քեզ բան պէտք է ասեմ, համարեա՛ թէ մոռացել էի: Տանուտէրը բարևեց քեզ և նկատեց, որ քո այն սխալմունքը ոչինչ նշանակութիւն չունի:

Լինհարդ: Նա արդէն Արներին մօտ էր եղել, երբ դուք նրան պատահեցիք:

Բանուորներ: Ո՛չ, մենք պատահեցինք նրան, երբ դղեակ էր գնում:

Լինհարդ: Ուրեմն նա ձեր այժմեան ասածից և իմ գիտեցածից աւելի ոչինչ չգիտէ՞ր:

Բանուորներ: Այլ կերպ չէր կարող լինել:

Փլինկ: Սակայն դու խոստումդ կկատարես, այնպէս չէ՞:

Որմնադիր: Այո՛, բայց ուղիղ այնպէս, ինչպէս որ ասացի:

Որմնադիրը հրամայեց բանուորներին շուտով աշխատանքի տեղը լինել, կարգի բերեց գործիքները և յետոյ մի փոքր նախաձաշելով՝ առաջին անգամ այդ մարդկանց հետ գործի գնաց:

Թող Աստուած ինքն օգնի քեզ, ասաց նրան Գերտրուդը գնալու ժամանակ: Թող Աստուած օգնի նրան, պէտք է ասեմ նոյնպէս և ես, որովհետև նա գնում է:

56

ԳՈՐԾԸ ԾԱՆՐ ԿԵՐՊԱՐԱՆՔ Է ՍՏԱՆՈՒՄ. ՏԱՆՈՒՏԷՐՆ ԱՅԼ ԵՒՍ ԳԻՆԵՏՈՒՆ ՀՊԷՏՔ Է ՈՒՆԵՆԱՑ

Երբ տանուտէրը դղեակ եկաւ, Արներն երկար սպասեցնել տուեց նրան, բայց վերջապէս դուրս եկաւ և հարցրեց նրան դժկամակութեամբ. այս ի՞նչ է նշանակում, ինչո՞ւ առանց հրամանի այդ մարդկանցն այսօր ինձ մօտ ես ուղարկել:

— Ես կարծում էի, որ իմ պարտքն է դրանցը խորհուրդ տալ՝ Ձեզ շնորհակալութիւն յայտնելու, պատասխանեց տանուտէրը:

Արները պատասխանեց. քո պարտքն է անել այն, ինչ որ օգտակար է ինձ և իմ հպատակներին և ինչ որ հրամայ-

ում եմ քեզ և ոչ թէ խեղճ մարդկանցն այստեղ ուղարկել և նրանցն անօգուտ հաճոյախօսութիւններ սովորեցնել։

Բայց ես քեզ նրա համար կանչել տուի, որ յայտնեմ՝ թէ տանուտէրի պաշտօն վարողն այսուհետև իրաւունք չունի գինետուն պահելու։

Տանուտէրը սփոթենց, դողաց և չգիտէր թէ ի՞նչ պատասխանէ, որովհետև այդպիսի մի յանկարծակի վճիռ չէր սպասում։

Արները շարունակեց. ընտրութիւնը քեզ եմ թողնում՝ կամ տանուտէր պիտի լինես կամ պանդոկապետ, սակայն տասնուչորս օրուայ ընթացքում ինձ յայտնի պէտք է լինի քո վճիռը։

Տանուտէրը մի փոքր հանգստացաւ և կակազելով շնորհակալութիւն յայտնեց՝ տրուած ժամանակամիջոցի համար։

Արներն ասաց. ես ոչ օքի յանկարծակի բերել չեմ սիրում և քեզ էլ չեմ ուզում ճնշել, ծերուկ. բայց այդ երկու պաշտօնները միմեանց չեն սազում։

Արների այս բարութիւնը տանուտէրին սիրտ տուեց և նա պատասխանեց. մինչև այժմ ձեր երկրի բոլոր տանուտէրները գինետուն են ունեցել և մեր մեծ իշխանի բոլոր երկրներում այդ մի ընդհանուր սովորութիւն է։

Բայց Արները կարճ կտրեց և ասաց. դուք լսեցիք իմ կարծիքը, վերցրէք գրպանի օրացոյցը և ասացէք. այսօր Մարտի քսանն է և 14 օրից յետոյ կլինի Ապրիլի երեքը։ Ուրեմն Ապրիլի 3-ին ես սպասում եմ քո պատասխանին. այս անգամ ուրիշ ասելիք չունեմ։ Արները նշանակեց իր օրացոյցի մէջ այդ օրը և գնաց իր սենեակը։

57.

ԹԷ Ի՞ՆՉՊԷՍ Է ՆԱ ԾԱՄԱԾՈՒՈՒՄ

Տանուտէրը նոյնպէս հեռացաւ երկիւղով լի սրտով. այս հարուածը նրան այնպէս շփոթեց, որ սենեակում և վերելքի վրայ գտնուող մարդկանցը, որոնց մօտով անցնում էր՝ չէր տեսնում և ճանաչում։ Եւ այդպէս, համարեա՝ ինքն իրեն անգիտակից, ցած եկաւ նա մինչև հնադարեան, հաստատմատ ընկուզենին։ Այդտեղ կանգնեց հանդարտ և ասաց ինքն իրեն. պէտք է շունչ առնեմ. սիրտս ի՞նչպէս

բաբախում է. չգիտեմ գլուխս որտեղ է։ Առանց գանգատի, առանց մի որևէ ապացուցուած յանցանքի, պէտք է կամ տանուտէր չլինեմ կամ գինետուն չունենամ, որովհետև նա այդպէս է կամենում։ Այս արդէն չափից դուրս է. արդեօք նա կարո՞ղ է ինձ ստիպել—չեմ կարծում։ Առանց գանգատի նա չի կարող պաշտօնս խլել, իսկ գինետուն պահելու իրաւունքը գնել եմ։ Սակայն եթէ կամենայ, եթէ հրապարակով առիթ որոնէ, ուղածը կգտնէ։ Այն բոլոր անպիտանները, որոնց ես ծառայել եմ, հաւատարիմ չեն ինձ։ Ի՞նչ պէտք է անեմ այժմ։ Վերջապէս տասնուչորս օրն էլ մի բան է։ Այդքան ժամանակի ընթացքում ես յաճախ շատ բան եմ կարգի գցել. միայն թէ քաջութիւնս չկորցնե՞մ։ Այս բոլորի պատճառը որմնադիրն է։ Եթէ նրան ոչնչացնել կարողանամ, միւս բոլոր բաներից դուրս գալու ճանապարհը կգտնեմ։ Սակայն ի՞նչպէս թոյլ և շփոթուած եմ։—Հումելը գրպանից հանեց օղիի շիշը, դէմքը դարձրեց ծառի ստուերի կողմը և միանգամից խմեց մի բաժակի չափ։—Մահուան դատապարտուած գողին կամ մարդասպանին այնպէս չէ՞ թարմացնում ազատ հողի վրայ խմած ջրի առաջին կումը, որչափ թարմացրեց օղիի շիշը տանուտէրին։ Նա այժմ իրեն լաւ զգաց և իր ուժերի հետ զօրեղացաւ նաև նրա յանցանք գործելու տրամադրութիւնը։ Այժմ թարմացայ, ասաց նա ինքն իրեն, երևակայեց իրեն կրկին իբրև մի սրտոտ մարդ և գլուխը բարձր բռնեց։ Մի վայրկեան առաջ, ասաց նա, ես կարծում էի, թէ նրանք ընթրիքից առաջ կուտեն ինձ, այժմ ինձ կրկին այնպէս է թւում, որ ես որմնադրին և նոյն իսկ Արներին ճկոյթովս այնպէս կսեղմեմ, որ նրանք ականջից քաշած տղայի պէս գոռան։ Լա՜ւ էր, որ շիշս չէի մոռացել. առանց սրան բանս բո՜ւրդ կլինէր։ Տանուտէրն այսպէս խօսում էր ինքն իրեն և էլ երկիւղ չէր զգում։ Նա կրկին դարձաւ առաջուայ նոյն մեծամիտը և չարասիրտը. դաշտում պատահող մարդկանց, որոնք բարևում էին նրան, հպարտ կերպով միայն մի փոքր գլխով էր անում և անցնում. նա ձեռնափայտն ա՜յնպիսի դիրքով էր բռնել, որ կարծես թէ այդ երկրում Արներից աւելի մեծ իշխանութիւն ունէր։ Այդ յիմարագլուխը բերանը բաց

էր արել և աչքերը չռած մարդ էր գալիս մի այնպիսի ժամանակ, երբ բոլորովին առիթ չունէր այդպէս անելու։

58.

ԹԷ Ո՞Վ ԷՐ ՆՐԱ ՄՕՏ։

Նրա կողքին գնում էր մեծ Թուրքը, մի շուն, որ տանուտէրի մի նշանով իւրաքանչիւրին ցոյց էր տալիս իր մեծ ու սպիտակ ատամները, իսկ մի այլ նշանով՝ յարձակւում էր կատաղի կերպով ցոյց տուած մարդու վրայ։ Այս մեծ Թուրքը խեղճ մարդկանց սարսափն էր, ինչպէս որ իր տէրը՝ բոլոր աղքատ և ճնշուածների երկիւղն ու պարտատէրը՝ ամբողջ իշխանութեան մէջ։ Այս ուժեղ Թուրքը գնում էր տանուտէրի կողքին նոյնպէս վեհանձնօրէն... սակայն չեմ կարող ասել, ինչ որ լեզուիս ծայրին է... Թէև բոլորովին ճիշտ է, որ կատաղած տանուտէրն այժմ իր դէմքով մեծ նմանութիւն ունէր իր շան հետ։

59.

ՄԻ ԿԱՍԿԱԾԻ ՓԱՐԱՏՈՒԻԼԸ

Բայց որ տանուտէրն երէկուայ ողբից և այսօրուայ երկիւղից յետոյ կրկին այդպէս հպարտ էր ձևանում, գուցէ զարմացնէ պարզամիտ հարցասիրին. խելօք գիւղացու համար այդ ըստ ինքեան հասկանալի կլինի։ Մեծամտութիւնն աւելի ևս չարչարում է մարդուն, երբ նա ցեխի մէջ է խրուած լինում։ Քանի որ ամեն բան յաջող է գնում և կասկածի առիթ չկայ, մարդ այնչափ չէ հպարտանում. սակայն երբ աջ ու ձախ չարագուշակ ծիծաղ է լսւում, և բանն առաջուայ նման յաջող չէ, այն ժամանակ մարդուս արիւնն եռում, փրփրում և ուռչում է պղնձի մէջ եփուող իւղի նման։ Տանուտէրը հէնց այսպիսի դրութեան մէջ էր այժմ։ Ուրեմն բոլորովին բնական և ամենապարզամիտ մարդուն անգամ հասկանալի է, որ նրա սարսափն անցնելով նորից հպարտացաւ։ Բացի դրանից այս գիշեր նա շատ լաւ էր քնել, որովհետև քիչ էր խմել և ընդունել էր իր փոշին և այդպիսով այս առաւօտ ազատ էր երէկուայ երկիւղից և հոգսերից։

Ես պատմում եմ այնպէս, ինչպէս որ պատահել է և

ինչպէս որ լսել եմ. սակայն չեմ կարող և չեմ ցանկանում միշտ այնպիսի անօգուտ հարցերին պատասխանել, ինպէս այժմ։

60.

ՇԵՂՈՒՄՆ

Ի հարկէ աւելի լաւ կլինէր, եթէ նա իր օղիի շիշը կոտրէր՝ խփելով այն ընկուզենուն, որի տակը կանգնած էր, եթէ յետ գնար իր իշխանաւորի մօտ, իր հանգամանքները յայտնէր նրան, ասէր, որ ինքը հարուստ չէ և իր պարտքերի համար անհրաժեշտ է, որ տանուտէր մնալով գինետուն պահէ և նրա բարեսրտութեանն ապաւինէր։ Ես գիտեմ, որ Աբներն այդ հանգամանքների մէջ չէր մերժի նրա խնդիրը։ Սակայն հէնց այդ է անաստուածների դժբաղդութիւնը, որ դրանց մեղքերը պատճառ են լինում իրենց խելքի կորստեան, դրանք ամենաէական բաներում անգամ կուրանում են և անմտութեամբ իրենց ոչնչացման համար են աշխատում. իսկ ընդհակառակը բարի, արդար և պարզ ու անմեղ սիրտ ունեցող մարդիկ դժբաղդութեան ժամանակ իրենց խելքը չեն կորցնում և այդ պատճառով կեանքի դժբաղդ հանգամանքներում առհասարակ աւելի դիւրութեամբ են կարողանում իրենց օգնել, քան անաստուածները։ Նրանք խոնարհւում են դժբաղդութեան ժամանակ, իրենց սխալների համար ներում են խնդրում, կարիքի ժամանակն իրենց հայեացքն ուղղում են դէպի այն ձեռքը, որ միշտ պարգևում է դէպի մարդկանց թշուառութիւնը, որոնք մաքուր սրտով օգնութիւն են խնդրում։ Սրտի հանգստութիւնն ու խաղաղութիւնը նրանց պաշտպանն և առաջնորդող աստղն է կեանքի մէջ. նրանք ապրում են աշխարհում և վերջը սրտանց շնորհակալ լինում Աստծուց։ Սակայն ամբարշտութիւնն առաջնորդում է մէկ խորխորատից դէպի միւսը։ Ամբարիշտն իր խելքը չէ գործ դնում համեստ և ուղիղ ճանապարհով հանգստութիւն, արդարադատութիւն ու խաղաղութիւն որոնելու։ Նա միայն չար և ծուռ ճանապարհներով է գործում, որպէս զի տառապանք և անհանգստութիւն յառաջացնէ և այդ պատճառով էլ միշտ դժբաղդութեան մէջ է։ Կարիքի ժամանակ նա ընդիմադրում է, սխալուելիս մերժում է, իսկ թշուառութեան ժամանակ

մեծամիտ է։ Նա կամենում է օգնութիւն կամ ազատութիւն ձեռք բերել ստութեամբ և խորամանկութեամբ կամ թէ բռնադատելով և գողութեամբ։ Նա հաւատ է ընծայում իր խանգարուած, վայրենի մտքերին, մերժում է իրեն մեկնած հոր ձեռքը և երբ վերջինս ասում է նրան. հնազանդուիր որդեակս, ես եմ քո հայրը, որ պատժում և օգնում եմ. այդ դէպքում նա ծաղրում է իր ազատարարին և ասում. ես ուզում եմ կամեցածիս նման ինքս ինձ օգնել։ Այդ պատճառով և աստուածուրաց մարդու վերջը միշտ խորին տառապանք և թշուառութիւն է։

61.

ԾԵՐ ՄԱՐԴԸ ԲԱՑ Է ԱՆՈՒՄ ԻՐ ՍԻՐՏԸ

Ես երիտասարդ եմ եղել և ծերացել. շատ յաճախ եմ տեսել թէ երկիւղածների և թէ ամբարիշտների վիճակը։ Ես ականատես եմ եղել մեր գիւղի մանուկների մեծանալուն. տեսայ թէ ինչպէս նրանք մարդ դարձան, որդիք և որդոց որդիք ունեցան. իմ բոլոր հասակակիցները, բացի եօթից, գերեզման են իջել։ Աստուած, քեզ է յայտնի միայն այն ժամը, երբ ես էլ կհետևեմ եղբայրներիս. ուժերս թուլանում են, սակայն աչքս քեզ է մնում, Տէր։ Մեր կեանքը նմանում է դաշտային ծաղկին, որ առաւօտը ծաղկում և գիշերը թառամում է։ Տէր, Դու ողորմած և բարի ես դէպի այն մարդիկը, որ իրենց յոյսը քեզ վրայ են դնում։ Սակայն մեղաւորի ճանապարհը դէպի անդունդն է առաջնորդում։ Համագիւղացի զաւակներս, թոյլ տուէք սովորեցնեմ ձեզ ամբարշտի վիճակը, որպէս զի երկիւղած լինէք։ Ես տեսել եմ այնպիսի մանուկներ, որ ընդիմադրել են իրենց ծնողներին և նրանց սէրը բանի տեղ չեն դրել, բայց վերջը դրանց բոլորի բանը բուրդ է եղել։ Ես ճանաչում էի դժբաղդ Ուլիի հօրը. ես նրա հետ մէկ յարկի տակն եմ ապրել և աչքովս տեսել՝ թէ ի՞նչպէս նրա անաստուած որդին խեղճ հօրը վիրաւորում էր և հայհոյում. կեանքումս չեմ մոռանալ, թէ ի՞նչպէս խեղճ ծեր մարդը իր մահուանից մի ժամ առաջ լաց էր լինում նրա համար։ Ես տեսայ այդ չարաճճի ստահակին՝ հօր թաղման ժամանակ ծիծաղելիս։ Մի՞թէ այդ սրիկային Աստուած կեանք կտայ,

մտածում էի ես։ Եւ ի՞նչ եղաւ։ Նա ամուսնացաւ մի հարուստ կնոջ հետ, դարձաւ գիւղի ամենահարուստներից մէկը և իր հպարտութիւնն ու չարութիւնն այն աստիճանին հասցրեց, որ կարծես թէ երկնքում և երկրիս վրայ նրանից բարձր ոչինչ չկար։ Մի տարի անցնելուց յետոյ տեսայ հպարտ Ուլիին՝ իր կնոջ թաղման ժամանակ լալիս և ողբալիս։ Նա ստիպուած եղաւ իր կնոջ ամբողջ ստացուածքը նորից վերադարձնել նրա ազգականներին, և յանկարծ կրկին նախկին աղքատն և մուրացկանը դարձաւ։ Այդ չքաւորութեան ժամանակ գողութիւն արաւ և արդէն գիտէք թէ ի՞նչ վախճան ունեցաւ նա։ Մանուկներ, միշտ այդպէս է. աստուածուրաց մարդու վերջը թշուառութիւնն է։—Իսկ համեստների խաղաղ խրճիթներում ես ականատես եմ եղել հանգիստ և անվրդով կեանքի։ Դրանք իրենց լաւ են զգում, բաւականանում են քչով և շատ ունեցած ժամանակն էլ չափաւոր են։ Ձեռքի աշխատանքը և սրտի հանգստութիւնը այդպիսիների կեանքի բաժինն է։ Նրանք գոհութեամբ վայելում են իրենցը և չեն ցանկանում այն, ինչ որ իրենց մերձաւորներին է պատկանում։ Հպարտութիւնը չէ չարչարում նրանց և նախանձը չէ դառնացնում նրանց կեանքը, այդ պատճառով և դրանք ամբարիշտներից աւելի ուրախ, գոհ և մեծ մասամբ նոյնպէս աւելի առողջ են։ Նրանց կեանքի պահանջներն ապահովուած են, որովհետև նրանց միտքն ու սիրտը չարութեամբ չէ զբաղուած, այլ իրենց գործով և իրենց խաղաղ խրճիթներում ապրող սիրելիներով։ Աստուած վերևից տեսնում է նրանց հոգսերն ու տանջանքը և օգնում է։—Համագիւղացի, սիրելի զաւակներս, ես տեսել եմ շատ երկիւղած աղքատներ մահուան անկողնում, բայց դրանցից ոչ մէկն այդ ժամին չէ գանգատուել իր աղքատութեան և կեանքի թշուառութեան վրայ. բոլորը շնորհակալ են եղել Աստուց իրենց վայելած հայրական բարիքների հազարաւոր փորձերի համար։ Սիրելի զաւակներս, եղէք բարեպաշտ, պարզամիտ և անմեղ։ Ես տեսել եմ՝ թէ խորամանկ և խաբեբայ էութիւնն ի՞նչպիսի վախճան է ունենում։ Հումելն և իր ընկերներն ամենից խորամանկներն էին. նրանք հազարաւոր բաներ գիտէին, որոնց մասին մենք գաղափար էլ չունենք։ Այդ իրողութիւնը նրանց հպարտացրեց և նրանք կարծում էին թէ

պարզամիտները միայն իրենց զուարճութեանհամար են աշխարհիս երեսին ապրում։ Նրանք լափում էին այրիների ու որբերի հացը և կատաղում ու գոռում էին նրանց դէմ, որոնք ծունկ չէին չոքում իրենց առաջը։ Սակայն դրանց վերջը մօտեցել էր։ Երկնքի Տէրը լսեց այրիների ու որբերի հառաչանքը։ Նա տեսաւ այն մայրերի արտասուքը, որոնք լաց էին լինում իրենց զաւակների հետ այն անաստուած ստահակների պատճառով, որոնք իրենց ամուսիններին ու հայրերին մոլորեցնում և ճնշում էին. Աստուած օգնեց իր իրաւունքը ձեռք բերելուց յոյսը կտրած ճնշուածին ու որբին։

62.

ԽՂՃԻ ԱՆՀԱՆԳՍՏՈՒԹԵԱՆ ՍԱՐՍԱՓԸ

Շաբաթ երեկոյեան, երբ Հանս Վիւստը տանուտէրի մօտից տուն դարձաւ՝ իր սուտ երդման հոգսն աւելի սկսեց չարչարել նրան. նա ընկաւ յատակի վրայ և ոռնում էր սարսափելի փորացաւ ընկած շան նման։ Այդ կատաղի դրութեամբ անցկացրեց նա ամբողջ գիշերն ու հետևեալ տօն օրը. փետում էր մազերը, բռունցքով խփում էր իրեն և արիւնլուայ լինում. ոչինչ չկերաւ և չխմեց, կատաղութեամբ այս ու այն կողմն էր վազում և ասում. ո՜հ, Բուդիի արօտը, խի՜ղճս տանջում է, սատանա՜ն, մարմնացած սատանա՜ն է իմ տէրը. վա՜յ ինձ, վա՜յ իմ խեղճ հոգուն։ Այսպէս կատաղած մարդ էր գալիս նա՝ սուտ երդման հոգսերից տանջուած և ողբում էր սարսափելի երկիւղից։ Այս անհանգստութիւնից յոգնած՝ վերջապէս կարողացաւ կիրակի գիշերը քնել։ Միւս առաւօտը նա մի փոքր թեթև զգաց իրեն և վճռեց իր տանջանքն այլ ևս գաղտնի չպահել և յայտնել քահանային։ Վերցրեց իր կիրակնօրեայ հագուստը և ինչ որ գտաւ, բոլորը մի կապոց շինեց, որպէս զի գրաւ դնէ և ստացած փողով տանուտէրի պարտքը տայ։ Կապոցը ձեռքին, դողալով գնաց քահանայի տան բակը, կանգ առաւ, կամեցաւ յետ փախչել, բայց կրկին առաջ գնաց, կապոցը ձգեց տան շեմքը և խելագարին յատուկ անբնական շարժուածքներ էր անում։

63.

ՍԻՐՈՎ ԵՒ ԿԱՐԵԿՑՈՒԹԵԱՄԲ ԿԱՐԵԼԻ Է ԵՐԿՉՈՏ ՄԱՐԴԿԱՆՑ ՇՓՈԹՈՒԹԵԱՆ ԱՌԱՋՆ ԱՌՆԵԼ

Քահանան տեսաւ նրան այդ դրութեան մէջ, ցած գնաց նրա մօտ և ասաց. Ի՞նչ է պատահել քեզ, Վիւստ, ի՞նչդ է ցաւում. եկ սենեակս՝ եթէ կամենում ես ինձ հետ խօսել։ Վիւստը քահանայի հետ բարձրացաւ նրա սենեակը։ Քահանան տեսնելով նրա երկիւղն ու շփոթութիւնը՝ կարողացածին չափ ուրախ և սրտանց խօսեց նրա հետ. նա երէկ արդէն լսել էր այն տարածուած քչփչոցը, որ Վիւստն իր սուտ երդման պատճառով համարեա՛ թէ յուսահատուած է։ Վիւստն էլ տեսնելով քահանայի սիրալի և ուրախ ընդունելութիւնը՝ հետզհետէ հանգստացաւ և ասաց. Արժանապատիւ հա՛յր, մի սուտ երդման պատճառով համարեա՛ թէ յուսահատուում եմ և խիղճս տանջում է. սիրով կտանեմ ինձ արժանի պատիժը, եթէ միայն դեռ կարող եմ յուսալ Աստուծոյ ողորմածութեան և գթասրտութեան վրայ։

64.

ՔԱՀԱՆԱՆ ԽՕՍՈՒՄ Է ԽՂՃԻ ՄԱՍԻՆ

Քահանան պատասխանեց. եթէ դու սրտանց ես զղջում, այն ժամանակ մի՛ կասկածիր Աստծոյ ողորմածութեան վրայ։

Վիւստ։ Կարո՞ղ եմ, տէր հայր, կարո՞ղ եմ յանցանքիս համար Աստծոյ ողորմածութեան վրայ յուսալ և մեղքերիս թողութեան վրայ վստահանալ։

Քահանան։ Երբ Աստուած մարդուն այն տեղն է հասցնում, որ նա անկեղծօրէն զղջում է և լրջօրէն հառաչում իր մեղքերի թողութեան համար, նշանակում է, որ նա արդէն ցոյց է տուել թողութեան և ողորմածութեան ճանապարհը։ Հաւատա՛, Վիւստ, և եթէ զղջումդ սրտանց է, մի կասկածի, որ Աստծուն էլ հաճելի կլինի այդ։

Վիւստ։ Կարո՞ղ եմ վստահ լինել, որ այդ հաճելի է նրան։

Քահանան։ Կարող ես վստահ լինել, եթէ ինքդ ըզգաս լրջօրէն, որ այդ զղջումն անկեղծ և սրտանց է. եթէ

անկեղծ է, հաճելի կլինի Աստծուն. այդչափ միայն կարող եմ ասել։

Տէս, Վիւստ, եթէ մէկը խլում է իր դրացու հողը ու վարում, բայց յետոյ զղջալով՝ գնում է, առանց դրացու գիտութեան, առանց նրա պահանջի, ինքն իրեն և ծածուկ աւելորդով միացնում է խլած կտորը դրացու հողի հետ՝ այն ժամանակ կարծեմ նա լրջօրէն է զղջում։ Իսկ եթէ յետ չէ տալիս նրա սեպհականութիւնը և կամ յետ տալիս իր օգուտն է աչքի առաջ ունենում, եթէ միայն հոգում է իր և ոչ թէ դրացու համար, որին նա անիրաւութիւն է արել, այն ժամանակ նրա զղջումը մի սնոտիք է, որով այդ տրխմարը իրեն է մոլորեցնում։—Վիւստ, եթէ դու սրտով ցանկանում ես, որ քո չար գործի վնասներն ու նրանից առաջացած գայթակղութիւնը նորից լաւ ընթացք ստանայ ու Աստուած և մարդիկ ներեն քեզ, և եթէ սրտանց ամենբան կանես՝ յանցանքդ ըստ կարելոյն քաւելու, այն ժամանակ քո ապաշխարութիւնը հարկաւ անկեղծ կլինի և Աստծուն հաճելի։

Վիւստ։ Տէր, ես սիրով կանեմ այն բոլորը, ինչ որ կարող եմ՝ միայն թէ այդ ծանր քարը սիրտս էլ չճնշէ։ Ի՞նչպէս է ճնշում նա ինձ, Տէր, ուր որ գնում եմ՝ միշտ այդ յանցանքն է միտս ընկնում և դողում եմ երկիւղից։

Քահանան։ Մի վախենար, միայն գործիր պարզութեամբ, ճշտութեամբ և արդարութեամբ, այն ժամանակ անկասկած կթեթևանաս։

Վիւստ։ Ո՞հ, երանի թէ կարողանայի յուսալ, Տէր։

Քահանան։ Մի վախենար և յոյսդ Աստծոյ վրայ դիր. նա ողորմած է իրեն որոնող մեղաւորին։ Ինչ որ կարող ես՝ խղճմտանքով և արդարութեամբ արա։ Քո երդումից յառաջացած ամենամեծ դժբաղդութիւնը խեղճ Ռուդիի հանգամանքն է. նա սարսափելի թշուառութեան մէջ է ընկել, սակայն յուսով եմ, որ եթէ դու Արներին խոստովանես բանի էութիւնը, նա անձամբ կօգնէ, որպէս զի այդ մարդուն կարելի լինի սփոփել։

Վիւստ։ Այո՛, խե՜ղճ Ռուդին, հէնց դա է, որ միշտ սիրտս ճնշում է. Տէր, մի՞թէ կարծում էք, որ Արները կարող է նրա արօտը նորից ձեռք բերելուն օժանդակել։

Քահանան։ Հաստատ չեմ կարող ասել. տանուտէրը հարկաւ մէջ կբերէ այն ամենն, ինչ կարող է, քո այժմեան վկայութիւնը կասկածելի անելու համար. սակայն Արներն էլ իր կողմից կանէ այն ամենը, ինչ որ կարող է՝ որպէս զի այդ դժբաղդ մարդը նորից ձեռք բերէ իր սեպհականութիւնը։

Վիւատ։ Ո՞հ, երանի թէ այդ յաջողուէր նրան։

Քահանան։ Սրտանց ցանկանում եմ այդ և իսկապէս ոյս ունեմ, սակայն միևնոյն է թէ Բուդին կստանայ իր հողը թէ ոչ. քո սրտի հանգստութեան համար անհրաժեշտ է, որ դու ամեն բան յայտնես Արներին։

Վիւատ։ Սիրով կանեմ այդ, տէր հայր։

Քահանան։ Այդ է ուղիղ ճանապարհը և շատ ուրախ եմ, որ դու կամաւ այդ շաւղով ես ուզում գնալ. այդ կհանգստացնէ և կխաղաղացնէ քո սիրտը։ Սակայն ի հարկէ խոստովանութիւնդ քեզ խայտառակութիւն, բանտարկութիւն և ծանր թշուառութիւն կպատճառէ։

Վիւատ։ Ո՞հ, Տէր, այդ բոլորը ոչինչ է այն սարսափի, յուսահատութեան և այն երկիւղի դէմ, որ Աստուած յաւիտենական կեանքում այլ ևս չի գթայ ինձ։

Քահանան։ Դժբաղդութեանդ մէջ դու այնպէս խելացի և ճիշտ ես դատում, որ ես սրտանց ուրախութիւն եմ զգում. լաւ և արդարացի վճիռների համար քեզ այդչափ բարի մտքեր և ոյժ տուող Աստծուն խնդրի՛ր, որ Իր ողորմութիւնն ապագայում էլ անպակաս անի քեզնից. դու բարի ճանապարհի վրայ ես, և եթէ Աստուած կամենայ՝ քո գլխի բոլոր գալիքները խոնարհութեամբ և համբերութեամբ կտանես։ Վստահ եղիր ինձ վրայ, այսուհետև ես քեզ անօգնական չեմ թողնի։

Վիւատ։ Տէր, ո՞րչափ բարի և սիրալի էք վարուում ինձ պէս թշուառ յանցաւորի հետ։

Քահանան։ Ինքը, Տէր Աստուածը, սիրով և ներողամտութեամբ է վարուում իր ստեղծած մարդկանց հետ. և ես Նրա դժբաղդ ծառան կլինէի՝ եթէ, ինչ դէպքում ևս լինի, յանցաւոր ծառայակիցներիս հետ կուուէի, վիճէի և կշտամբէի նրանցը։

Այսպէս հայրաբար էր խօսում քահանան Վիւատի հետ,

որ արտասուում էր և էլ ոչինչ չէր կարողանում ասել։

Քահանան ևս մի բոպէ լռեց, բայց Վիլստը նորից սկսեց և ասաց. Տէր, մի բան էլ ունեմ աւելացնելու։

Քահանան։ Ի՞նչ։

Վիլստ։ Երդման գործից յետոյ ես տանուտէրին պարտ եմ մնացել ութը գուլդէն։ Թէև նա անցեալ օրն ասաց, որ կպատռէ իմ մուրհակը, սակայն ես չեմ ուզում նրանից պարգև ընդունել և ցանկանում եմ պարտքս վճարել։

Քահանան։ Իրաւունք ունես. անհրաժեշտ է, որ պարտքդ վճարես, մինչև որ Արներին յայտնուի բանի էութիւնը։

Վիլստ։ Հետս բերել եմ մի կապոց, որի մէջն է իմ կիրակնօրեայ հագուստը և այլ բաներ. այդ բոլորը միասին ութը գուլդէն կարժենան։ Ես պէտք է ութը գուլդէն փոխ առնեմ և մտածեցի, որ դուք չէք բարկանայ, եթէ ձեզ խնդրեմ, որ այս գրաւականով ութը գուլդէն տաք ինձ։

Քահանան։ Ես երբէք ոչ ոքից գրաւական չեմ վերցնում և յաճախ ցաւելով մերժում եմ, սակայն այս դէպքում չեմ կարող մերժել։ Այդ ասելով քահանան տալիս է նրան փողը և շարունակում. տար շուտով տանուտէրին տուր, իսկ կապոցդ յետ տար տուն։

65.

ԺՈՂՈՎՐԴԻ ԱՄԵՆԱՍՏՈՐԻՆ ԴԱՍԱԿԱՐԳԻ ՄԷՋ ԷԼ ԱԶՆԻՈՒԹԻՒՆ ԿԱՑ

Վիլստը դողալով վերցրեց փողը քահանայի ձեռքից և ասաց. կապոցը յետ չեմ տանի տուն, տէր հայր։

Քահանան (ժպտալով)։ Եթէ չես ուզում հետդ վերցնել, յետոյ կուղարկեմ։

Վիլստ։ Ի սէր Աստծոյ, տէր հայր, պահեցէք կապոցը, որ ապահով լինէք։

Քահանան։ Լա՛ւ, Վիլստ, այդ մասին մի հոգա այժմ և մտածիր աւելի կարևոր անելիքիդ մասին։ Ես հէնց այսօր նամակ կգրեմ Արներին և վաղը դու կտանես նրան։

Վիլստ։ Շնորհակալ եմ, տէր հայր, սակայն ի սէր Աստծոյ, պահեցէք կապոցը, եթէ ոչ փողը չեմ վերցնի, Աստուած է վկայ, որ չեմ վերցնի։

Քահանան։ Ո՛չ մի խօսք այժմ այդ մասին. շուտով

գնա՛ տանուտէրի մօտ, և վաղը ժամի ինձին ինձ մօտ արի։

Վիւստը թեթևացած և սփոփուած խղճով ուղղակի գնաց տանուտէրի տուն և փողը տուեց նրա կնոջը, որովհետև ինքը տանը չէր։

Տանուտէրի կինը հարցրեց. այսչափ փողը ո՞րտեղից դտար յանկարծ, Վիւստ։

Վիւստը կարճ պատասխանեց. այնպէս արի, ինչպէս կարողացայ. փա՜ռք Աստծոյ, որ ձեր պարտքից ազատուեցի։

Տանուտէրի կինը պատասխանեց. մենք երբէք չենք ստիպել քեզ։

Վիւստ։ Գիտե՛մ, բայց գուցէ հէնց այդ պատճառով...։

Տանուտէրի կինը։ Զարմանալի բաներ ես ասում, Վիւստ, ի՞նչդ է ցաւում. վերջին ժամանակներս դու առողջ չես երևում։

Վիւստ։ Փողը համրի՛, պէտք է գնամ։

Տանուտէրի կինը համրում է փողը և ասում. ուղիղ է։

Վիւստ։ Ամուսնուդ տուր. մնա՛ք բարով։

Տանուտէրի կինը։ Եթէ այդպէս է՝ գնա՛ք բարով, Վիւստ։

66.

ՈՒՐՈՒԱԿԱՆՆԵՐԻ ԳՈՅՈՒԹԵԱՆԸ ՀՀԱՒԱՏԱՑՈՂ ԱՆՏԱՌԱՊԱՀԸ

Տանուտէրը Արնհայմից վերադառնալու ժամանակ Հերցհաուէրի պանդոկն իջաւ և այդտեղ խմում ու զրախօսում էր գիւղացիների առաջ։ Նա պատմում էր դատարանով իր տարած գործերի մասին, պարծենում էր այն ազդեցութեամբ, որ ունէր հանգուցեալ Արնների ժամանակ, երբ ինքը, կանոնաւոր կառավարում էր ժողովուրդը և դատապարտում էր այժմեան ողորմելի կարգապահութիւնը։ Յետոյ նա իր շանն այնչափ կերակուր տուեց, որչափ ճաշին կարող է ունենալ կարողութեան տէր արհեստաւորը — միայն առանց գինու — և ծաղրեց այն խեղճ մարդուն, որ տեսնելով շան առաջը դրուած անուշ արգանակն ու հացը՝ հառաչեց։ Տե՛ս, այդպէս կնախանձես, ասաց նա աղքատ մարդուն, փաղաքշեց շանը և շարունակ պարծենալով խօսում էր գիւղացիների հետ մինչև երեկոյ։ Այդ միջոցին եկաւ նաև դղեա-

կի ծեր անտառապահը և անցնելիս մի բաժակ գինի խմեց պանդոկում. տանուտէրը, որ մի վայրկեան անգամ մենակ մնալ չէր սիրում, ասաց նրան. միասին գնանք տուն։

Անտառապահ։ Այն պայմանով՝ որ իսկոյն գաս. ես որսի հետք եմ գտել և այդ հետքով պէտք է գնամ։

Իսկոյն, պատասխանեց տանուտէրը, դատարկեց բաժակը, առաջ հարցրեց շան կերածի գինը, յետոյ իրենը, վճարեց երկուսը միասին, մի քանի կոպէկ էլ ընծայեց ծառային և ապա անտառապահի հետ գնաց։

Երբ նրանք փողոցում մենակ էին, տանուտէրը հարցրեց անտառապահին՝ թէ արդեօք գիշեր ժամանակ անտառում երկիւղալի չէ՞, ուրուականներ չկա՞ն։

Անտառապահ։ Ինչո՞ւ ես այդ ինձ հարցնում։

Տանուտէր։ Հա՛, որովհետև դա ինձ զարմացնում է։

Անտառապահ։ Դու մի ծեր յիմար ես։ Երեսուն տարուց իվեր տանուտէր լինիս ու այդպիսի յիմարութիւններ հարցնե՞ս։ Դու պէտք է ամաչէիր։

Տանուտէր։ Ո՛չ, Աստուած վկայ, հաստատ չգիտեմ թէ ուրուականներին ինչպէս վերաբերուեմ. արդեօք պէտք է հաւատամ նրանց, թէ ոչ. բայց մինչև այժմ ոչ մէկ ուրուական դեռ չեմ տեսել։

Անտառապահ։ Որովհետև դու այդպէս պարզ սրտով հարցնում ես, այդ հրաշքը կբացատրեմ քեզ, բայց դու էլ այդ բացատրութեան համար՝ մի անգամ մի շիշ գինու փողը կվճարես։

Տանուտէր։ Ուրախութեամբ երկու շիշ գինու փողը կվճարեմ, թէ ճիշտն ասես։

Անտառապահ։ Քառասուն տարի է ես իմ պաշտօնումն եմ և չորս տարեկան հասակիցս իվեր հայրս ինձ, ինչպէս մի փոքրաւորի, կրթել է անտառում։ Նա հիւրանոցներում ու պանդոկներում միշտ պատմում էր գիւղացիներին՝ անտառների բազմաթիւ ուրուականների ու զարհուրանքների մասին, բայց նրանց միայն յիմարացնում էր. ինձ հետ բոլորովին ուրիշ տեսակ էր վարւում։ Ես պէտք է անտառապահ դառնայի, ուստի և այդպիսի բանի ոչ պիտի հաւատայի, ոչ էլ վախենայի։ Այդ պատճառով մեծ պահքին և ծննդի գիշերը, երբ ոչ լուսինն էր երևում, ոչ աստղերը, երբ փոթորիկը շառաչում էր, նա ինձ անտառն էր տանում։ Յետոյ երբ մի

կրակ կամ երևոյթ էր տեսնում, կամ մի շշուկ էր լսում, ես պէտք է նրա հետ մացառների և կոճղների, փոսերի ու ճահիճների վրայով և բոլոր խաչաձև ճանապարհներով շշուկի վրայ յարձակուէի։ Եւ միշտ գնչուներ, գողեր ու մուրացկաններ էին լինում։ Իսկոյն հայրս իր զարհուրելի ձայնով կանչում էր նրանց. կորէք, անպիտաններ։ Եթէ նրանք տասքսան հոգի էլ էին լինում, միշտ փախչում էին և դեռ յաճախ երենց ամանները, տապակներն ու խորովածը թողնում, այնպէս որ զուարճալի էր տեսնելը։ Շատ անգամ այդ շշուկը միայն քամուցն էր լինում, որ երբեմն հրաշալի ձայներ է հանում. հին, փթած ծառերի բներն էլ երևոյթ են առաջացնում և գիշերուայ մէջ ամպիսի կերպարանքներ ձևացնում, որ ամեն մարդու կարող են սարսափահար անել։ Ահա այն ամեն անճիշտ բաները, որ ես իմ կեանքում անտառի մէջ տեսել եմ. բայց պաշտօնիս առաւելութիւնը միշտ պէտք է այն լինի ու մնայ, որ իմ հարևանները կարծեն թէ ես ուրուականների և սատանաների հետ յարաբերութիւն ունեմ։ Տե՛ս ուրեմն, մեզպիսին ծերանում է և ուրախ է, որ մութ գիշերները չպէտք է գողերի ետևից վազէ։

67.

ՍԱՀՄԱՆԱՔԱՐԵՐԸ ՏԵՂԱՓՈԽԵԼ ՑԱՆԿԱՑՈՂ ՄԱՐԴԸ ՇԱ՞Տ Է ՈՒԶՈՒՄ ՈՒՐՈՒԱԿԱՆՆԵՐԻՆ ՉՀԱՒԱՏԱԼ, ԲԱՑՑ ՉԷ ԿԱՐՈՂԱՆՈՒՄ

Այսպէս խօսելով երկուսն էլ հասան այն կողմնակի ճանապարհը, որով անտառապահն անտառը գնաց, իսկ տանուտէրը բոլորովին մենակ մնալով ինքն իրեն սկսեց խօսել։

Նա քառասուն տարուց հետէ անտառապահ է և դեռ ոչ մի ուրուական չի տեսել և ոչ մէկին չի էլ հաւատում. իսկ ես յիմար եմ, որ հաւատում եմ նրանց, և չեմ համարձակուում նոյն իսկ մտածել քառորդ ժամ անտառում մնալ՝ մի քար տեղահան անելու համար։ Գող-աւազակի նման Արները խլում է իմ պանդոկ պահելու իրաւունքը։ Եւ ժայռի վրայ եղած այն շան քարը ճիշտ սահմանը չէ, ես չեմ հաւատում։ Եւ եթէ հէնց այդպէս էլ լիներ, նա աւելի՞ իրաւունք կունենար, քան թէ ես իմ պանդոկի վրայ։ Այդպէս բռնութեամբ մի մարդուց իր սեպհականութիւնը յափշտակե՞լ —

բացի սատանայից ուրիշ ո՞վ կարող է այդպիսի բան թելադրել նրան։ Որովհետև նա ինձ չէ խնայում, ուստի ես էլ ոչ մի հիմք չունեմ՝ նրա անիծեալ կոպճաքարը խնայելու։ —Բայց ես չե՞մ համարձակւում։ Գիշերով չեմ համարձակւում այնտեղ գնալ, ցերեկն էլ չեմ կարող՝ խճուղու վրայ լինելու պատճառով։

Մինչդեռ նա այսպէս ինքն իրեն խօսում էր, հասաւ Մայերի բլրին, որ գիւղի մօտ է գտնւում։ Նա տեսաւ, որ որմնադիրները դաշտի մէջ ածած մեծ մեծ կոպճաքարերի վրայ են աշխատում, որովհետև ժամը դեռ լրիւ վեցը չէր։ Դրա վրայ նա չարացաւ և ինքն իրեն ասաց. բոլորը, ինչ որ ես անում ու ձեռնարկում եմ, բոլորը, բոլորը չէ՞ յաջողւում ինձ։ Բոլորը, բոլորը ինձ մատնում է։ Մի՞թէ պէտք է այժմ էլ անիծեալ Յովսէփի մօտովն անցնեմ և լռեմ։ Ո՛չ, ես այդ չեմ կարող անել։ Ես, աւելի լաւ է, այստեղ սպասեմ, մինչև նրանք տուն գնան։ Եւ նա գետնին նստեց, բայց մի վայրկեանից յետոյ նորից վեր կացաւ և ասաց։ Ես չե՞մ ուզում, չե՞մ կարող նոյնպէս նրանցն այստեղ մտիկ տալ. պէտք է բլրի միւս կողմը գնամ։ Ո՞վ դու անիծեալ Յովսէփ։ Նա վեր է կենում, մի քանի քայլ յետ գնում դէպի բլրի եռևը և կրկին նստում է։

68.

ՄԱՅՐ ՄՏՆՈՂ ԱՐԵԳԱԿԸ ԵՒ ՄԻ ԽԵՂՃ ՈՂՈՐՄԵԼԻ ԷԱԿ

Արեգակը հէնց այժմ մայր էր մտնում և նրա վերջին ճառագայթները դեռ երևում էին այն բարձրութեան կողերի վրայ, ուր տանուտէրը նոր նստեց։ Նրա շուրջն ընկնում էր ընդարձակ դաշտը և բլրի ներքևում ամեն ինչ արդէն ստուերի մէջ էր։ Աստծու արեգակը սքանչելի և գեղեցիկ կերպով մայր էր մտնում առանց քամու և առանց ամպերի. և տանուտէրը, որ արեգակի իր վրայ ընկած վերջին պայծառ ճառագայթներին նայեց, ինքն իրեն ասաց. «Ի՞նչ սիրուն է մայր մտնում արևը», և հիացաւ նրա վրայ նայելով, մինչև որ նա լերան եռևը մտաւ։ «Այժմ ամեն բան ստուերի մէջ է և շուտով գիշերը վրայ կը հասնի»։ Մի վայրկեան յետոյ բացագանչեց նա. «Ո՞վ իմ սիրտ. ստուեր, գիշեր և արհաւիրք շրջապատում են քեզ։ Քեզ համար արեգակը չէ լու-

սաւորում»։ Կամայ-ակամայ նա այդպէս պէտք է ասէր ինքն իրեն, որովհետև մտածելը սարսափ էր բերում նրա վրայ և նա տաճմները կրճատցնում էր։ Փոխանակ խոնարհելու և երկրպագելու Երկնային Տիրոջը, որ գիշերուայ միջից կրկին դուրս է կոչում արեգակը, փոխանակ Տիրոջը յուսալու, որ փոշուց աղատում է և անդունդից փրկում,—աստաճներն էր կրճատցնում։ Այդ միջոցին Բոնապարտը ժամը վեցը խփեց և որմնադիրները դաշտից տուն գնացին. տանուտէրն էլ նրանց հետևեց։

69.

ԹԷ Ի՞ՆՉՊԷՍ ՊԷՏՔ Է ԼԻՆԵԼ ՈՒՐԻՇ ՄԱՐԴԿԱՆՑ ՀԵՏ ՄԻ ԲԱՆ ԱՆԵԼՈՒ ԺԱՄԱՆԱԿ

Որմնադրի բանուորների մեծ մասը նրան սիրեց՝ նրա մօտ բանելու հէնց այս առաջին երեկոյեան։ Լինհարդն ամբողջ օրը նրանց հետ միասին նրանց պէս աշխատում էր. ամենածանր քարերն ինքն էր բռնում, հարկաւոր եղած տեղում ուրիշների պէս ինքն էլ ցեխի ու ջրի մէջ կանգնում էր և դեռ նրանցից էլ առաջ։ Եւ որովհետև նրանք բոլորովին անվարժ էին այս աշխատանքի մէջ, սիրով և համբերութեամբ ցոյց էր տալիս նրանց իրենց պաշտօնն ու աշխատանքի եղանակը և իրենց օգուտը. նոյն իսկ ամենաանշնորհների առաջ ոչ մի անհամբերութեան նշան չէր ցոյց տալիս։ Ոչ մի «յիմա՛ր, ոչխա՛ր» դուրս չէր թռչում նրա բերնից, թէպէտ և հարիւր անգամ առիթ ու դիպուած էր ունենում դրա համար։ Վարպետի այս համբերութեան, հոգացողութեան, նրա անձամբ աշխատելու և եռանդի պատճառով ամբողջ գործը շատ լաւ էր գնում։

70.

ԽԱԲԵԲԱՑ ԵՒ ԳՈՂ ՄԱՐԴՆ ԱԶՆՈՒԱԲԱՐ Է ՎԱՐԻՈՒՄ. ՈՐՄՆԱԴՐԻ ԿԻՆՆ ԻՄԱՍՏՈՒՆ Է

Միխէլն, իբրև ամենաուժեղներից և խելօքներից մէկը, ամբողջ երեկոյեան վարպետի մօտ էր և տեսնում էր այն բոլոր սրտագին սէրն ու բարութիւնը, որով նա նոյն իսկ ամենաանշնորհների հետ վարւում էր, և Միխէլը, որ խաբեբայ և գող էր, այս շիտակութեան ու ազնուութեան հա-

մար Լինհարդին սիրեց և սրանով նրա սիրտը մեղմացաւ։ Այս քաջ ու արդարադատ մարդու վերաբերմամբ նա չէր ուզում խարեբայ գտնուել։

Բայց Կրիխերին և Ռոյտիի բարեպաշտ Մարքսին այնքան էլ դիւր չեկաւ, որ Լինհարդն այդ մարդկանց մէջ ոչ մի տարբերութիւն չէր դնում և մինչև անգամ սրիկայ Միխէլի հետ բարեկամաբար էր վարւում։ Լէնքն էլ հարիւր անգամ գլուխը թափ էր տալիս և ինքն իրեն խօսում. «Նա խենթ է. նա եթէ այնպիսի մարդկանց վերցնէր, որոնք ինձ և եղբօրս պէս աշխատել կարողանային, այդքան աշխատանքի կէսն էլ չէր ունենալ ինքը։ Բայց աւելի շատերը, որոնց նա սիրով ու համբերութեամբ աշխատանքի էր առաջնորդում, սրտի խորքից շնորհակալութիւն էին անում նրան և այստեղ ու այնտեղ ծածուկ հառաչանքներ էին բարձրանում դէպի մարդկանց Հայրը, որ վարձատրում և օրհնում է ամեն մի համբերութիւն ու սէր, որ մարդս ցոյց է տալիս իր թոյլ եղբօրը։ Միխէլն երկար չկարողացաւ ծածուկ պահել տանուտերի հետ շաբաթ օրը կապած չարամիտ պայմանը և տուն գնալիս ասաց իր վարպետին. մի բան ունեմ քեզ ասելու. ուզում եմ հետդ տուն գալ։

Ուրեմն ե՛կ, պատասխանեց Լինհարդը։ Եւ նա վարպետի հետ նրա խրճիթը գնաց ու նրան պատմեց, թէ ի՞նչպէս տանուտէրը շաբաթ օրն իրեն վարձել էր խարդախութեան համար և այդ լաւ գործի յաջողութեան համար արդէն երկու թալէր տուել իրեն։ Լինհարդը վախեցաւ. իսկ Գերտրուդն այս պատմութիւնից սփրթնեց։ Սարսափելի է այդ, ասաց Լինհարդը։

Գերտրուդ։ Այո՛, իսկ որ սարսափելի է։

Միխէլ։ Այժմ այլ ևս մի՛ ցաւիլ, խնդրում եմ, Գերտրուդ։ Այժմ էլ մի՛ նեղանար, խնդրում եմ, վարպետ։ Տեսնո՞ւմ էք, ձեր դէմ հարկաւ չեմ մեղանչի. դրա վրայ կարող էք վստահ լինել։

Լինհարդ։ Շնորհակալ եմ, Միխէլ, բայց տանուտէրն ինձ հետ այդպէս չպէտք է վարուէր. ես նրան վնաս չեմ տուել։

Միխէլ։ Նա մարմնացած սատանայ է։ Դժոխքը չի

կարող հնարել, ինչ որ նա հնարում է վրէժխնդրութեան մասին մտածելիս ու կատաղելիս։

Լինհարդ։ Ջանս դողում է։

Գերտրուդ։ Քիչ է մնում սիրտս գնայ։

Միխէլ։ Երեխայ հօ չէք. ամեն բան վերջ ունի։

Գերտրուդն եւ Լինհարդը (երկուսը միասին)։ Փա՜ռք Աստծոյ, փա՜ռք Աստծոյ։

Միխէլ։ Տեսնո՞ւմ էք, այժմ ձեր ցանկութիւնից է կախուած. եթէ յարմար կհամարէք, ես այնպէս կհաւատացնեմ տանուտէրին, որ իբրև թէ նրան հաւատարիմ եմ և վաղը կամ միւս օրը շէնքի վրայ գործածական իրեղէններից մի քանիսը կվերցնեմ և նրանց տուն կտանեմ։ Յետոյ առանց ձայն հանելու կերթաս Արների մօտ՝ բոլոր տները խուզարկելու հրաման կվերցնես, կսկսես տանուտէրի բնակարանից, յանկարծակի նրանց կողմնակի սենեակը կմտնես և ճիշտ այնտեղ կգտնես կորած իրերը։ Եթէ վճռես այդպէս անել, հէնց որ հրամանագիրը ցոյց տաս, իսկոյն պէտքէ ներս մտնես, եթէ ոչ տանուլ կտանք, որովհետև նրանք հէնց աչքիդ առաջևից կթռցնեն, պատուհանը կբարձրանան կամ թէ անկողնի վերմակի տակ կդնեն. իսկ եթէ քաղաքավարութիւն արիր և չխուզարկեցիր՝ բաներս բուրդ կլինի. աւելի լաւ կլինի, որ դու ուրիշին ուղարկես, այդ քո գործը չէ։

Լինհարդ։ Ո՛չ, Միխէլ, այդ գործը հարկաւ ինձ չի յաջողուի։

Միխէլ։ Այդ միևնոյն է, ես մարդ կգտնեմ քեզ համար, որ այդ բանը ճշտութեամբ կատարէ։

Գերտրուդ։ Միխէլ, ես կարծում եմ, որ մենք պէտք է Աստծուն շնորհակալ լինենք, որ մեզ աղատեց վերահաս վտանգից և ոչ թէ վրէժխնդրութեամբ դրա համար տանուտէրին թակարդի մէջ ձգենք։

Միխէլ։ Նա արժանի է այդպիսի վարձատրութեան, դրա մասին մի՛ մտածիր։

Գերտրուդ։ Ինչին որ նա արժանի է կամ արժանի չէ, դրա մասին դատելը մեր բանը չէ. բայց մեր բանն է վրէժխնդիր չլինել և այդ միակ ուղիղ ճանապարհն է, որով կարող ենք գնալ այս դէպքում։

Միխէլ։ Պէտք է խոստովանեմ, որ իրաւունք ունես, Գերտրուդ. և շատ լաւ է, որ կարողանում ես քեզ յաղթել։ Բայց, այո, դու իրաւունք ունես, նա արդէն իր վարձատրութիւնը կստանայ. ամենից լաւն այն է, որ նրա հետ երբէք գործ չունենանք։ Ես էլ ուզում եմ յարաբերութիւնս կտրել նրա հետ և իր երկու թալէրը վերադարձնել, բայց այժմ միայն մէկուկէս թալէր ունեմ։ (Նա հանում է քսակից փողը, դնում սեղանի վրայ, համրում և յետոյ ասում) Այժմ չգիտեմ թէ այս մէկուկէս թալէրը տանեմ տամ իրեն, թէ սպասեմ մինչև շաբաթ օրը, որ շաբաթական վարձը ստանամ ու բոլորը միասին տամ։

Լինհարդ։ Քո շաբաթական վարձից կէս թալէր կարող եմ այժմեանից տալ։

Միխէլ։ Ես սրտանց ուրախ եմ, որ կարող եմ հէնց այսօրուանից այդ մարդու ձեռքից ազատուել։ Հէնց որ ստանամ, իսկոյն, հէնց այս ժամին փողը կտանեմ նրանց տուն։ —Վարպե՛տ, երէկուայ սուրբ հաղորդութիւնից յետոյ արդէն սրտիս վրայ ծանրանում էր, որ այդպիսի մի չար լան խոստացայ նրան։ Երեկոյեան դէմ էլ քո Եօնասն եկաւ և իր ընթրիքը երեխայիս տուեց. այդ էլ սիրտս փղձկացրեց՝ քանի որ քո դէմ խարդախութիւն պէտք է անէի. ես քեզ հետ լաւ ծանօթ չեմ եղել և հետդ յարաբերութիւն չեմ ունեցել, Լինհարդ, բայց այսօր տեսայ, որ դու համբերութեամբ և սիրով ամեն մէկին կամենում ես օգնել և խորհուրդ տալ և այդ պատճառով մտածեցի, որ չե՞մ կարող երջանիկ մեռնել, եթէ մի այսպիսի քաջ և բարի մարդու լաւութիւնը չարութեամբ փոխարինեմ։ (Նա արտասուք ունէր աչքերում) Տեսէք, որ ասածս լուրջ է։

Լինհարդ։ Այլ ևս ոչ ոքի չարութիւն մի՛ անի։

Միխէլ։ Եթէ Աստուած կամենայ, կհետևեմ ասածիդ։

Գերտրուդ։ Այն ժամանակ ամեն տեղ էլ բանդ լաւ կգնայ։

Լինհարդ։ Այս երեկոյ տանուտէրի մօտ կերթա՞ս։

Միխէլ։ Այո՛, եթէ կարողանամ։

Որմնադիրը տալիս է նրան կէս թալէրն ու ասում. մի՛ բարկացնի նրան։

Գերտրուդ։ Մի՛ ասի նրան, թէ մենք այդ մասին տեղեկութիւն ունենք։

Միխէլ։ Կարճ կկարեմ, որչափ կարող եմ. բայց իսկոյն պէտք է գնամ, որ շուտով անցնի։ Մնաք բարև, Գերտրուդ. շնորհակալ եմ, Լինհարդ։ Ցանկանում եմ ձեզ հանգիստ քուն։

Լինհարդ։ Քեզ նոյնպէս. գնա՛ս բարև, Միխէլ։

Միխէլը գնում է։

71.

ԳԼԽԱՒՈՐ ՏԵՍԱՐԱՆՆԵՐԸ ՄՕՏԵՆՈՒՄ ԵՆ

Տանուտէրը տուն վերադառնալով՝ սենեակում միայնակ գտաւ իր կնոջը. կարող էր ուրեմն ամբողջ օրուայ հաւաքած կատաղութիւնն ու բարկութիւնը նրա գլխին թափել։ Դաշտում, դղեակում և Հերցաու գիւղում նա չէր կարող անել այդ. այդպիսին ուրիշ մարդկանց առաջ դիւրութեամբ չէ բանում իր սիրտը։

Այդ բանը չիմացող տանուտէրը պէտք է որ մի անշնորհ հովիւ լինէր. սակայն Հումէլի մասին այդ չէր կարելի ասել։ Նա կարող էր ամբողջ օրերով իր բարկութիւնն ու նախանձը, ատելութիւնն ու թախիծը ծածկել և շարունակ ժպտալ, զբուցել և խմել. բայց երբ տուն էր գալիս և բաղդաւորաբար կամ դժբաղդաբար իր սենեակը դատարկ էր գտնում՝ մարդկանց առաջ թագցրած կատաղութիւնը ժայթքում էր սոսկալի կերպով։

Նրա ամուսինը լալիս էր մի անկիւնում ու ասում. ի սէր Աստծոյ, այդպէս մի՛ անի, քո այդ կատաղութեամբ Արներին աւելի ևս կզայրացնես. նա չի հանգստանայ, մինչև որ իր նպատակին չհասնի։

Տանուտէր։ Նա չի հանգստանայ, մինչև որ ինձ գետնի հետ հաւասարեցնէ. ինչ որ անեմ միևնոյն է։ Նա մի խաբեբայ, գող, շուն է, անիծեալը բոլոր սնիծեալների մէջ։

Տանուտէրի կինը։ Տէ՛ր Աստուած. ի սէ՛ր Աստծոյ, ինչե՞ր ես խօսում, գժուել ե՞ս։

Տանուտէր։ Պատճառ չունե՞մ. դու չգիտե՞ս. նա տասն և չորս օրուայ ընթացքում կամ պանդոկ պահելու իրաւունքը պէտք է խլէ ինձնից, կամ տանուտէրութիւնը։

Տանուտէրի կինը։ Գիտեմ այդ. բայց ի սէ՞ր Աստ-ծոյ, այժմ այդպէս մի՛ անի. ամբողջ գիւղը գիտէ արդէն։ Դղեակի գրագիրն այդ ասել է Վայբէլին, նա էլ ամեն տեղ պատմել է։ Մինչև երեկոյ ես ոչինչ չգիտէի, բայց երբ անասուններին ջուրը տարայ, տեսայ որ փողոցի երկու կողմերից էլ, բոլոր տների առաջ հաւաքուած մարդիկը ծիծաղում էին և Մարգարիտը, որ նոյնպէս անասուններին ջուրն էր բերել, ինձ մի կողմը քաշեց ու ասաց այդ դըժբաղդ լուրը։ Մի բան էլ. Հանս Վիւստը յետ բերեց ութ գուլդէնը. ո՞վ տուեց նրան այժմ ութ գուլդէն, այդ էլ Արների գործն է։ Ե՞խ, Աստուա՞ծ, ա՞խ, Աստուա՞ծ. ամեն կողմից դժբաղդութիւն է սպառնում մեզ։ «Հանս Վիւստն ութ գուլդէնը յետ բերեց» խօսքերը տանուտէրին կայծակի հարուածի նման սարսափեցրին։ Նա մի վայրկեան կանգ առաւ՝ կիսաբաց բերանը դէպի կինն ուղղած, և ապա ասաց. ո՞ւր է փողը. ո՞ւր է ութ գուլդէնը։ Մի կոտրած բաժակի մէջ ածած փողը կինը դրեց սեղանի վրայ։ Տանուտէրը մի վայրկեան աչքերը սևեռեց փողի վրայ, չհամբեց և ասաց. այդ փողը դղեակից չէ. Արներն այդպիսի խառը դրամներ չի տայ։

Տանուտէրի կինը։ Ես շատ ուրախ եմ, որ այդ փողը դղեակից չէ։

Տանուտէր։ Բայց այնուամենայնիւ այստեղ մի բան կայ. դու չպէտք է վերցնէիր փողը։

Տանուտէրի կինը։ Ինչո՞ւ։

Տանուտէր։ Ես կարող էի նրանից տեղեկանալ՝ թէ ո՞րտեղից է այդ փողը։

Տանուտէրի կինը։ Ես էլ մտածեցի այդ մասին, բայց նա չէր ուզում սպասել և չեմ էլ կարծում, որ դու նրանից մի բան իմանայիր, որովհետև որքան կարելի է կարճ և կցկտուր էր խօսում։

Տանուտէր։ Ամենքն իմ դէմ են ելնում. խելքս կորցնում եմ, խմելու բան տուր։

Կինը մի ման գինի է դնում նրա առաջը. նա վայրենի կատաղութեամբ սենեակում ման է գալիս, խորը շունչ քաշում, խմում ու ինքն իրեն խօսում. ես պէտք է որմնադրին ոչնչացնեմ. այդ իմ առաջին գործը պէտք է լինի. և

այդ պէտք է գլուխ բերեմ, եթէ նոյն իսկ այդ բանն ինձ հարիւր թալէր նստի։ Միխէլը կոչնչացնի նրան, իսկ յետոյ ես սահմանաքարի գործը կտեսնեմ։

Այդ ասելու ժամանակ Միխէլը դուռը բաղխեց. տանուտէրն երկիւղից կուչ եկաւ և ասաց. ո՞վ է այսպէս ուշ, գիշերով և շտապեց պատուհանից նայելու. Միխէլը կանչեց. բա՛ց արա, տանուտէ՛ր։

72.

ՏԱՆՈՒՏԷՐԻ ՎԵՐՋԻՆ ՑՈՑՍՆ ԷԼ Է ԿՏՐԻՈՒՄ

Ի՞նչ յարմար ժամանակն է գալիս, ասում է տանուտէրն և վազելով բաց է անում դուռը, ողջունում Միխէլին և ասում. գալդ բարի՞, Միխէլ. ի՞նչ նոր բարի համբաւ։

Միխէլ։ Ոչի՛նչ. ես ուզում էի քեզ ասել....

Տանուտէր։ Դրան տակը հօ չպէտք է խօսես. նե՛րս արի սենեակը. դեռ ևս քնելու չեմ գնում։

Միխէլ։ Ես պէտք է տուն վերադառնամ, տանուտէր. ուզում եմ ասել միայն, որ շաբաթ օրուայ մեր պայմանի մասին զղջացել եմ։

Տանուտէր։ Այո՛, Աստուած վկայ, այդ լաւ կլինէր. ո՛չ, դու չպէտք է զղջաս։ Եթէ տուածս բաւական չէ, աւելի շատ կտամ. նե՛րս արի, ոչինչ, այդ գործի մասին համաձայնութիւն կկայացնենք։

Միխէլ։ Ո՛չ մի պայմանով, տանուտէ՛ր. ահա՛ քո երկու թալէրը։

Տանուտէր։ Ես այժմ քեզնից յետ չեմ վերցնի այդ փողը, Միխէլ. յիմարութիւն մի՛ արա. այդ գործը քեզ չի վնասի, իսկ եթէ երկու թալէրը քիչ է, նե՛րս արի։

Միխէլ։ Այլ ևս ոչինչ չեմ ուզում լսել, տանուտէ՛ր. ահա՛ քո դրամը։

Տանուտէր։ Աստուած է վկայ, որ յետ չեմ վերցնի. արդէն երդուեցի. դու պէտք է ինձ հետ ներս գաս։

Միխէլ։ Այդ կարելի է անել (նա գնում է նրա հետ). ահա՛ այժմ սենեակումն եմ և ահա՛ քո դրամը։ (նա դրամը սեղանի վրայ է դնում)։ Այժմ մնա՛ք բարև, տանուտէր։

Եւ իսկոյն շուռ գալով՝ դուրս է գնում։

73.

ՆԱ ԳՆՈՒՄ Է ՍԱՀՄԱՆԱԳԼՈՒԽԸ

Տանուտէրը մի վայրկեան կանգնած էր անխօս ու անձայն, աչքերը դէս ու դէն էր շռում, բերանը փրփրացնում, դողում, ոտքով գետնին զարկում. յետոյ յանկարծ աղաղակեց. կին, օղի տուր, պէտք է կատարուի... ես գնում եմ։

Կինը։ Ո՞ւր, ո՞ւր ես ուզում գնալ այս մութ գիշերին։

Տանուտէր։ Ես գնում եմ..... ես գնում եմ քարը դուրս հանելու, շիշն ինձ տուր։

Կինը։ Ի սէր Աստծոյ, մի՛ անի այդ։

Տանուտէր։ Պէտք է անեմ, պէտք է անեմ. գնում եմ։

Կինը։ Սաստիկ մութն է. արդէն տասնևերկուերորդ ժամն է և աւագ շաբաթ սատանան աւելի զօրեղ է։

Տանուտէր։ Եթէ ձին նրա ձեռքն է, թող սանձն էլ առնի. տո՛ւր ինձ շիշը, ես գնում եմ։

Նա արագ վերցնում է քլունգը, թին ու բահը ուսին դնում և գիշերուայ սաստիկ խաւարի մէջ շտապում դէպի բլուրը, որ իր տիրոջ կալուածքի սահմանաքարը տեղափոխէ։ Գինովութիւնը, վրէժխնդրութիւնն ու կատաղութիւնը նրան համարձակութիւն տուին, բայց որտեղ որ մի փայտ էր տեսնում կամ նապաստակի շշիւնը լսում, դողում էր, մի րոպէ կանգ առնում և նորից կատաղութեամբ առաջ վազում, մինչև որ վերջապէս սահմանագլուխը հասաւ։ Նա շտապով սկսեց իր գործը և քանդում ու փորում էր իր շուրջը՝ այն մարդասպանի նման, որ իր զոհի համար մի փոս է փորում։

74.

ԳԻՇԵՐՆ ԱՒԵԼԻ ԽԱՌՈՒՄ Է ԵՐԿԻՒՂ ԿՐՈՂ ԳԻՆՈՎՆԵՐԻՆ ՈՒ ԱՆՊԻՏԱՆՆԵՐԻՆ

Սակայն մի շշուկ յանկարծ սարսափեցրեց նրան։ Շշուկի ետևից դէպի ինքն էր գալիս մի սև մարդ։ Մութը գիշերի մէջ այդ մարդու շուրջը լցած էր և գլխին կրակ էր վառում։ Սա նոյն ինքը մարմնացած սատանան է, ասում է տանուտէրը, սարսափելի կերպով ողբում, փախչում և այնտեղ թողնում քլունգը, թին ու բահը, գլխարկն ու դատարկ շիշը։

Այդ մարդը Աբնհայմի հաւ ծախող Քրիստոֆն էր, որ Օբերհոֆէն, Լունկոֆէն, Հիրցաու գիւղերում և այլ տեղեր ձու էր գնել և այժմ տուն էր վերադառնում։ Նա իր կողովի վրայ մի սև այծի մորթի էր տանում և մի լապտեր էլ կախել էր, որ ճանապարհը գտնի մթնումը։ Այս մարդը ճանաչեց վախուտ տուողի տանուտէրի ձայնը և հասկանալով՝ որ նա մի վատ բան կունենար մտքումը, ինքն իրեն քարկացաւ ու ասաց. այդ անիծեալ սրիկային ցոյց կտամ ես այժմ. նա ինձ սատանայի տեղ է ընդունում։ Նա իսկոյն ցած է դնում կողովը, վերցնում է քլունգը, թին ու բահը և իր երկաթէ ծայր ունեցող ցուպը, միասին կապում և այնպէս քաշ տալիս իր ետևից քարքարոտ ճանապարհի վրայ, որ ահագին և սարսափելի ձայներ էր դուրս գալիս. այդպէս նա վազում է տանուտէրի ետևից և ոռնող ձայնով կանչում. օ՜հ, ա՜հ, ո՜ւհ, Հո՜ւմէլ, օ՜հ, ա՜հ, ո՜ւհ, դու ի՞մն ես. սպա—սի՛ր, Հու—մէլ։

Խեղճ տանուտէրը վազում է որքան իր ուժերը ներում են և վազելիս ողորմելի ձայնով աղաղակում. մարդասպանութի՜ւն, օգնութի՜ւն, պահապանե՛ր, սատանան ուզում է ինձ տանել։ Իսկ հաւ ծախողը շարունակ աղաղակում է նրա ետևից. օ՜հ, ա՜հ, ո՜ւհ. տանու—տէ՛ր, սպա—սի՛ր, տա—նու—տէր, դու ի՞մն ես, տա—նու—տէ՛ր։

75.

ԳԻՒՂԻ ՄԷՋ ԱՂՄՈՒԿ ԵՒ ՇՓՈԹ Է ԸՆԿՆՈՒՄ

Գիւղի պահապանը լսեց սարից եկող վազելու և աղաղակելու ձայնը և հասկացաւ բոլոր խօսքերը, բայց ինքն էլ վախենալով՝ մի քանի գիւղացիների պատուհանները քաղխեց. վե՛ր կացէք, դրացիներ, ասում էր նրանց, և լսեցէք թէ ի՞նչ է պատահել սարի վրայ. կարծես թէ սատանան ուզում է տանուտէրին տանել։ Լսեցէ՛ք, նա սպանութիւն և օգնութիւն է կանչում. բայց նա, Աստուած է վկայ, իր կնոջ մօտն է։ Դեռ երկու ժամ չկայ, որ ես նրան իրենց պատուհանի տակ տեսայ։

Երբ գիւղացիները տասնի չափ միատեղ հաւաքուեցան, խորհուրդ արին, որ բոլորը միասին ղէնքով և ճրագով զինուած՝ այդ շշուկի կողմը գնան, սակայն մախաղի մէջ դնեն

նաև թարմ հաց, սաղմոսագիրքն ու կտակարանը, որ սատանան չկարողանայ իրենց դիպչել։ Այդ մարդիկը գնացին և հասնելով տանուտէրի տան առաջը՝ մի փոքր կանգ առան, որ տեսնեն թէ տանուտէրը տա՞ն է թէ ոչ։

Տանուտէրի կինը մահուան երկիւղով սպասում էր՝ թէ ինչ ելք կունենայ իր ամուսնու սար գնալը և գիշերային այդ աղմուկը լսելով և տեսնելով որ ճրագներով մարդիկ իրենց դուռն են բաղխում, զարհուրեց և աղաղակեց. Տէ՛ր Յիսուս, ի՞նչ էք կամենում։

Մարդիկ։ Թող ամուսինդ ցած գայ։

Կինը։ Նա տանը չէ. սակայն Տէր Աստուած, ի՞նչ է պատահել, որ դուք այստեղ էք։

Մարդիկ։ Հէնց վասն այդ է, որ նա տանը չէ. լսի՛ր թէ ի՞նչպէս է նա սպանութիւն և օգնութիւն կանչում, կարծես սատանան է վազում նրա ետևից։

Տանուտէրի կինը դուրս է ընկնում և փեղջարի նման վազում այդ մարդկանց հետ։ Պահապանը ցարցնում է նրան ճանապարհին. այժմ ամուսինդ ի՞նչ գործ ունի սարի վրայ, նա հօ մի երկու ժամից առաջ տանն էր. նա ոչ մի խօսք չպատասխանեց, այլ սկսեց սարսափելի կերպով ողբալ. տանուտէրի շղթայած շունն էլ սկսեց ոռնալ։

Երբ հաւ ծախողը տեսաւ տանուտէրին օգնութիւն հասնող բազմութիւնն ու լսեց տանուտէրի շան սարսափելի ոռնալը, յետ դարձաւ ու գնում էր այնպէս լուռ ու արագ, որքան կարող էր. նա բարձրացաւ կրկին սարը, հասաւ իր կողովին, կապեց իր աւարը և ապա շարունակեց ճանապարհը։

Կունցը, որ տանուտէրի կնոջ հետ մի քանի քայլ առաջ էր գնացել, տեսաւ որ սատանայ չկայ, բաւականին կոշտ կերպով բռնեց աղաղակող տանուտէրի ձեռքն և ասաց. ի՞նչ է պատահել, ինչո՞ւ ես այդպէս աղաղակում, խե՛նթ։

Օ՜, օ՜, թո՛ղ ինձ, օ՜, սատանա՛յ, թո՛ղ ինձ. նա երկիւղից ոչինչ չէր տեսնում և ոչինչ չէր լսում։

Խե՛նթ դու, ես Կունցն եմ, քո դրացին, և սա էլ քո կինն է. ասաց նրան Կունցը։

Միւս գիւղացիներն առաջ զգուշութեամբ իրենց շուրջը նայեցին, թէ որտեղ կարող է լինել սատանան և վառած ճրագներով լուսաւորեցին թէ բարձր ու ցածը և թէ բո-

լոր կողմերը. ամեն մէկն էլ իր աջ ձեռքը կոխեց ձախ կողմից կախուած քսակի մէջ՝ շօշափելու նոր թխած հացը, կտակարանն ու սաղմոսագիրքը։ Բայց որովհետև երկար ժամանակ ոչինչ չերևաց, հետզհետէ սիրտ առան և մի քանիսն էլ մինչև անգամ աշխոյժ ստացան և սկսեցին տանուտէրին հարցնել. արդեօք սատանան քեզ իր ճիրաններով չանգռե՞ց կամ թէ ոտքերով տրորե՞ց, որ արիւն է գալիս վրայիցդ. իսկ միւսներն ասացին. այժմ ծաղրելու ժամանակը չէ. ամենքս էլ հօ լսեցինք այն սարսափելի ձայները։ Սակայն Կունցն ասաց. ես կարծում եմ, որ գողի կամ խեժ հաւաքողի մէկը տանուտէրին ու մեզ ամենիս յիմարացրեց։ Երբ ես նրան մօտեցայ, գոռում գոչումը դադարեց և մի մարդ վազում էր իր կարողութեան չափ արագ՝ սարն ի վեր. հազար անգամ զղջացի, որ նրա ետևից չվազեցի և մենք յիմարացանք, որ տանուտէրի շունը հետներս չվերցրինք։

Մարդիկ։ Դու խենթ ես, Կունց, այն ձայնը երբէք մարդկային ձայն չէր կարող լինել. նա մարդուս հոգին ու մարմինն էր թափանցում ու ոտքն և ուղեղը մտնում. լեռնային ճանապարհի վրայ երկաթով բարձուած սայլն անգամ չէր կարող այնպէս շառաչել։

Կունց։ Ես չեմ ուզում հակառակել ձեզ, դրացիներ. ես էլ սարսափում էի այդ ձայնը լսելով, բայց չէք կարող ինձ համոզել, որ ես դէպի սարը բարձրացող մարդու ձայնը չլսեցի։

Մարդիկ։ Դու կարծում ես, որ սատանան չի կարող այնպէս վազել, որ լսելի լինի՞։

Տանուտէրը սակայն այդ բոլոր խօսակցութիւններից ոչինչ չէր լսում և երբ տուն հասաւ, խնդրեց այդ մարդկանց, որ այս գիշեր իրեն մօտ մնան. նրանք էլ սիրով մնացին պանդոկում։

76.

ՔԱՀԱՆԱՆ ԳԱԼԻՍ Է ՊԱՆԴՈԿ

Այդ միջոցին գիշերային աղմուկը գիւղում արթնացրել էր ամենքին. քահանայի տանը նոյնպէս ամենքը զարթեցին, որովհետև կարծում էին թէ մի դժբաղդութիւն է պատահել։ Քահանան մարդ ուղարկեց իմանալու թէ ի՞նչ է պա-

տահել և տեղեկացաւ այդ սոսկալի դէպքի մասին։ Քահանան կամենալով օգուտ քաղել տանուտէրի երկիւղից, չնայելով որ երկիւղի պատճառը մի չիմար բան էր, վերկացաւ ու գնաց պանդոկ։ Երբ նա եկաւ, կայծակի արագութեամբ անյայտացան սեղանների վրայ եղած գինու շշերը. գիւղացիները տեղից վեր կացան և ասացին. գալներդ բարի, արժանապատիւ Տէր։

Քահանան շնորհակալութիւն յայտնեց ու ասաց. շատ լաւ է, որ դժբաղդութիւն պատահելիս դուք այդպէս ծառայութեան պատրաստ էք. բայց կարելի՞ է, որ դուք այժմ մի վայրկեան ինձ մենակ թողնէք տանուտէրի մօտ.

Գիւղացիներ։ Այդ մեր պարտականութիւնն է, արժանապատիւ Հայր, ցանկանում ենք ձեզ բարի գիշեր։

Քահանան։ Ձեզ նոյնպէս, դրացիներ. բայց պէտք է խնդրեմ ձեզ, որ այս դէպքի մասին պատմելիս զգոյշ լինէք. շատ անհաճելի է լինում, երբ մի դէպքի համար մեծ աղմուկ ենք անում և վերջը բանից դուրս է գալիս, որ ոչինչ կամ բոլորովին ուրիշ բան է եղել։ Այժմ դեռ ևս ոչ ոք չգիտէ թէ իսկապէս ի՞նչ է պատահել և ինչպէս գիտէք, բարեկամներ, գիշերը շատ անգամ խաբում է մեզ։

Այդպէս է, արժանապատիւ Հայր, ասացին գիւղացիները, իսկ երբ դուրս եկան՝ ասացին. նա միշտ միևնոյն խենթն է և ոչինչ չէ ուզում հաւատալ։

77.

ՀՈԳԵՒՈՐ ՀՕՐ ՋԱՆՔԸ

Քահանան սկսեց տանուտէրի հետ սրտանց խօսել ու ասաց. տանուտէր, լսեցի որ քեզ մի բան է պատահել և եկել եմ՝ կարողութեանս չափ քեզ մխիթարելու. ասա՛ ինձ անկեղծ՝ ի՞նչ պատահեց քեզ։

Տանուտէր։ Ես մի խեղճ ու դժբաղդ մարդ եմ, մարմնացած սատանան էր ուզում տանել ինձ։

Քահանան։ Ի՞նչպէս, տանուտէր, ո՞րտեղ պատահեց այդ։

Տանուտէր։ Սարի վրայ։

Քահանան։ Իսկապէս դու մէկին տեսա՞ր. մէկը քեզ ձեռք տուե՞ց։

Տանուտէր։ Ես տեսայ նրան՝ դէպի ինձ վազելիս. նա մի մեծ, սև մարդ էր և գլխի վրայ կրակ ունէր. նա իմ ետևից վազեց մինչև սարի ստորոտը։

Քահանան։ Գլխիդ ինչո՞ւ է արիւն կաթում։

Տանուտէր։ Վազելիս վայր ընկայ։

Քահանան։ Ուրեմն ոչ ոք քեզ ձեռք չի՞ դիպցրել։

Տանուտէր։ Ո՛չ, սակայն ես իմ աչքով տեսայ նրան։

Քահանան։ Այժմ, տանուտէր, այդ բանի վրայ կանգ չառնենք։ Ես չեմ կարող ըմբռնել իսկապէս՝ թէ ի՞նչ է եղել այդ. սակայն ինչ էլ որ եղած լինի, միևնոյնն է, որովհետև յաւիտենական կեանքում անկասկած անաստուածները կընկնեն նրա ճիրանների մէջ. այդ յաւիտենականութիւնն ու մեռնելուց յետոյ սատանայի ճիրանների մէջ ընկնելու վտանգն է, որ քեզ անհանգիստ է անում կեանքիդ այդ պատկառելի հասակում։

Տանուտէր։ Ո՜հ, տէր-հայր, հոգսից ու անհանգստութիւնից չգիտեմ թէ ի՞նչ եմ անում։ Ի սէր Աստծոյ, ի՞նչ կարող եմ, ի՞նչ պէտք է անեմ, որ ազատուեմ սատանայի ձեռքից. հէնց այժմ էլ ամբողջովին նրա իշխանութեան ներքոյ չե՞մ։

Քահանան։ Տանուտէր, զբաբանութեամբ ու յիմար խօսքերով մի՛ չարչարի անձդ. զգայութիւնդ ու խելքդ վրադ է, ուրեմն գտնուում ես քո իշխանութեան ներքոյ։ Արա՛ ինչ որ ճշմարիտ է ու ինչ որ թելադրում է քո սիրտը, և իսկոյն կնկատես, որ սատանան ոչինչ իշխանութիւն չունի քո վրայ։

Տանուտէր։ Ո՜հ, տէր-հայր, ի՞նչ կարող եմ, ի՞նչ պէտք է անեմ, որ Աստուած կրկին գթայ ինձ։

Քահանան։ Դու պէտք է արած սխալներիդ վրայ լըրջօրէն մտածես և զղջաս, ուղղուես և անիրաւութեամբ ձեռք բերած հարստութիւնդ վերադարձնես։

Տանուտէր։ Կարծում են թէ ես հարուստ եմ, սակայն, տէ՛ր հայր, Աստուած է վկայ, որ ես հարուստ չեմ։

Քահանան։ Այդ միևնոյն է. դու անարդար կերպով ձեռք բերիր Ռուդիի մարգագետինը. իսկ Վիստն ու Կայբախէրը սուտ երդուեցին։ Ես գիտեմ այդ և չեմ հանգստանայ, մինչև որ Ռուդին իր մարգագետինը չստանայ։

Տանուտէր։ Ո՜հ, տէր-հայր, ի սէր Աստծոյ, ողորմեցէ՛ք ինձ։

Քահանան։ Ամենամեծ ողորմութիւնը քեզ համար այն կլինի, որ ըստ կարելոյն քո պարտաւորութիւնը կատարես Աստծոյ և մարդկանց վերաբերմամբ։

Տանուտէր։ Կանեմ՝ ինչ որ կամենում էք, տէր-հայր։

Քահանան։ Ռուդիի արօտը յե՞տ կտաս։

Տանուտէր։ Ի սէր Աստծոյ, այո՛, տէր-հայր։

Քահանան։ Ընդունո՞ւմ ես ուրեմն, որ անիրաւացի ես տիրել նրան։

Տանուտէր։ Ցանուն Աստծոյ, այո՛, տէր-հայր, խոստովանում եմ. բայց եթէ այդ արօտը կորցնեմ, մուրացկանութիւն պէտք է անեմ։

Քահանան։ Աւելի լաւ է մուրացկանութիւն անես, քան թէ աղքատ մարդկանց ունեցածն անիրաւացի կերպով սեպհականես։ (Տանուտէրը հառաչում է) Բայց այս կէս գիշերին ի՞նչ գործ ունէիր սարի վրայ։

Տանուտէր։ Ի սէր Աստծոյ, այդ մի՛ հարցնի, տէր հայր, ես չե՞մ կարող, չե՞մ համարձակուի ասել։ Գթացէ՛ք ինձ, եթէ ոչ կորած եմ։

Քահանան։ Ես չեմ պահանջում, որ չուզեցած բանը դայտնես ինձ։ Եթէ ուզիդը խոստովանես, ես հայրական խորհուրդ կտամ քեզ, իսկ եթէ չես ուզում, այն ժամանակ յանցանքը քոնը կլինի, որ ես չկարողանամ քեզ խորհուրդ տալ գուցէ հէնց ամենակարևոր միջոցին։ Բայց որովհետև առանց քո ցանկութեան բոլոր ասածներիցդ ոչ մէկը չեմ կարող ուրիշին յայտնել, չեմ հասկանում թէ ի՞նչ օգուտ ունի ինձնից բան թագցնելը։

Տանուտէր։ Ուրեմն առանց իմ գիտութեան դուք ոչինչ չէք յայտնի իմ ասածներից, ինչ էլ որ լինի այդ։

Քահանան։ Ո՛չ, հարկաւ ո՛չ, տանուտէր։

Տանուտէր։ Այդ դէպքում, յանուն Աստծոյ, կասեմ Ձեզ. ես ուզում էի կալուածատիրոջ սահմանաքարերից մէկը տեղափոխել։

Քահանան։ Տէ՛ր Աստուած և Փրկիչ. ինչո՞ւ հէնց այդ սիրելի և բարի մարդու սահմանաքարը։

Տանուտէր։ Ա՜խ, նա ուզում էր ինձնից խլել պան-

դոկ պահելու իրաւունքը կամ տանուտէրի պաշտօնը. այդ բանն ինձ կատաղեցրեց։

Քահանան։ Դու մի դժբաղդ և դիւրապատիր մարդ ես, տանուտէր. նա քեզ վնաս չէր ուզում հասցնել, այլ ընդհակառակն ուզում էր վնասից հատուցումը տալ, եթէ կամաւ հրաժարուէիր տանուտէրի պաշտօնից։

Տանուտէր։ Մի՞թէ այդ ճիշտ է, տէր-հայր։

Քահանան։ Այո՛, տանուտէր. իբրև իրողութիւն կարող եմ ասել այդ, որովհետև հէնց իր բերանից լսեցի։ Շաբաթ երեկոյեան որսի էր գնացել և ես նրան պատահեցի Ռոյտիհօֆի ճանապարհին, ուր ես գնացել էի այն պառաւ կնոջն այցելելու։ Այդտեղ նա ինձ որոշ ասաց, որ երիտասարդ Մայերը, որին ինքն ուզում է տանուտէր կարգել, քեզ պէտք տարեկան հարիւր գուլդէն հատուցանէ, որ դու գանգատի տեղիք չունենաս։

Տանուտէր։ Ա՜խ, Ա՜ստուած. տէր հա՛յր, եթէ այդ գիտենայի, այս դժբաղդութիւնն իմ գլուխը չէր գայ։

Քահանան։ Մարդ պէտք հաւատայ Աստծուն, եթէ նոյն իսկ չտեսնէ նրա բարութիւնը. բարի հօրից պէտք միշտ բարի բան սպասել, եթէ նոյն իսկ դեռ չենք տեսնում թէ ո՞ւր և ի՞նչպէս է նա իր բարեսրտութիւնը յայտնում։ Այդպիսով միշտ հաւատարիմ ենք մնում նրան և ամէն դէպքում նրա բարեսրտութեան վրայ յոյս դնում։

Տանուտէր։ Ա՜խ Աստուած, ո՞րքան տարաբաղդ մարդ եմ ես, գոնէ՞ այդ բոլորի կէսը գիտենայի։

Քահանան։ Եղածն էլ չի կարելի փոխել, բայց այժմ ի՞նչ ես ուզում անել, տանուտէր։

Տանուտէր։ Աստուած է վկայ, ես էլ չգիտեմ. յանցանքս եթէ խոստովանեմ՝ մահուան պատիժ է սպասում ինձ. դուք ի՞նչ էք կարծում, տէ՛ր հայր։

Քահանան։ Ես կրկնում եմ, ինչ որ հէնց այս րոպէին ասացի. ես չեմ պահանջում, որ դու խոստովանես. ասածս միայն մի խորհուրդ է. իմ կարծիքով ուղիղ ճանապարհը դեռ ոչ ոքի վատ հետևանքի չէ հասցրել. Արները գթասիրտ է, իսկ դու մեղաւոր ես։ Այժմ արա՛, ինչ որ ուզում ես։ Ես նրա գթասրտութեանը կվստահանայի, թէպէտ տեսնում եմ, որ այդ բաւականին ծանր բայլ է, սակայն նոյն-

պէս ծանր է յանցանքդ նրանից ծածկելը՝ եթէ կամենում ես սրտի ճշմարիտ խաղաղութիւն և հանգստութիւն ձեռք բերել։ (Տանուտէրը հառաչում է և չէ խօսում, սակայն քահանան շարունակում է և ասում կրկին) Յանուն Աստծոյ, արա այժմ, ինչ որ ուզում ես, տանուտէր. ես ոչինչ չեմ պահանջում քեզնից. սակայն որքան մտածում եմ, այնքան ևս առաւել ինձ թւում է, որ պէտք է Արների գթասրտութեան վրայ վստահանաս, և յանցանքդ խոստովանես, որովհետև նա էլ հետախուզել կաայ՝ թէ ինչո՞ւ համար ես դու կէս գիշերին խճուղու վրայ եղել։

Տանուտէր։ Տէր Յիսուս. տէր հայր, ի՞նչ է միտս գալի. քլունգը, քահն ու թին և չգիտեմ էլ ինչ, թողել եմ սահմանաքարի մօտ և այդ քարն էլ կիսով չափ հանուած է. քլունգի ու քահի այնտեղ թողնիլը սարսափեցնում ու զարհուրեցնում է ինձ։

Քահանան։ Եթէ դու այդ ողորմելի քլունգի և քահի համար, որոնց հեշտութեամբ կարելի է լուսանալուց առաջ վերցնել և պահել, այդչափ սարսափում ես, մտածի՛ր թէ քանի՞ հազար այդպիսի հանգամանքներ ու դէպքեր կպատահեն դեռ ևս, որոնք ամեն օր մեծ անհանգստութիւն և դառն հոգսեր կպատճառեն քեզ՝ եթէ լռես։ Տանուտէր, եթէ չխոստովանես՝ ստի անդորրութիւն չես գտնի։

Տանուտէր։ Թող Աստուած խղճայ ինձ, եթէ լռեմ։

Քահանան։ Տանուտէր, եթէ ինքդ էլ այդպէս ես կարծում ու վախենում և կրկին քո խղճի ձայնի ու համոզմունքի հակառակ լռում ես, ի՞նչպէս կարող է այդ գործողութիւնն Աստծուն դիւր գալ և Նա ի՞նչպէս կարող է ողորմած լինել դէպի քեզ։

Տանուտէր։ Ուրեմն պէտքէ խոստովանուե՞մ։

Քահանան։ Աստծոյ ողորմութիւնը քեզ հետ կլինի, եթէ դու խղճիդ թելադրածն անես։

Տանուտէր։ Ես կխոստովանեմ յանցանքս։

Երբ նա այդ խօսքերն ասաց, քահանան նրա առաջ հետևեալն աղօթեց.

Փա՜ռք, շնորհակալութիւն և երկրպագութիւն քեզ, երկնաւոր Հայր։

Դու ձեռքդ մեկնեցիր նրան և նա ընդունեց այդ՝ իբ-

րեալ՝ քարկուքիւն և զարհուրանք. քո ողորմածութեան և սիրոյ ձեռքը նրա գութը շարժեց, այնպէս որ նա այլ ևս ճշմարտութեան ձայնը չէ քամահրում, ինչպէս որ առում էր երկար ժամանակ։

Դու, որ ներողամիտ, ցաւակից և ողորմած ես, ընդունիր ողորմածաբար նրա խոստովանութեան զոհը և ձեռք մի՛ քաշի նրանից։ Ողորմածութեանդ գործը լրացրու և թող նրան կրկին, որ քո զաւակը լինի, ներումն շնորհի նրան։ Ո՞վ երկնաւոր Հայր, մարդկային կեանքն երկրի վրայ սխալանք է ու յանցանք. այդ պատճառով Դու ողորմած ես մարդկային զաւակներին և ներում ես նրանց մեղքերը, երբ նրանք ուղղւում են։ Փա՞ռք և երկրպագութիւն քեզ, երկնաւոր Հայր. Դու ձեռքդ նրան մեկնեցիր, որ նա որոնէ քեզ։ Դու քո ողորմածութեան գործը կլրացնես և նա քեզ կգտնէ, կգովաբանէ քո անունը և իր եղբայրների մէջ կհրատարակէ քո Ողորմութիւնը։

Այժմ տանուտէրը բոլորովին գթաշարժուեց և արտասուքը գլորւում էր նրա այտերի վրայից։ Ո՞վ Ա՞ստուած, ասում էր նա, տէ՛ր Հայր, ես կխոստովանուեմ՝ և կանեմ այն ամենը, ինչ որ կամենաս։ Ես ուզում եմ սրտիս հանգստութիւնը գտնել և Աստծոյ ողորմութիւնը։

Քահանան մի բոպէ ևս խօսեց նրա հետ, մխիթարեց նրան և երբ տուն վերադարձաւ, արդէն ժամի հինգն էր։ Նա իսկոյն Արներին մի նամակ գրեց։

Երէկուայ և այսօրուայ նամակների բովանդակութիւնը հետևեալն է։

78.

ՔԱՀԱՆԱՅԻ ԵՐԿՈՒ ՆԱՄԱԿՆԵՐԸ՝ ԱՐՆԵՐԻՆ ՈՒՂՂՈՒԱԾ

Առաջին նամակ

Աղնուածնունդ, ողորմած Պարոն.

Նամակաբերս, Հանս Վիւստը, այսօր ինձ մի այնպիսի բան յայտնեց, որ ես նրան խորհուրդ տուի նոյնը յայտնել ձեր ողորմածութեան՝ իբրև դատաւորի։ Նրա և Կայլաթէրի տասը տարի առաջ տուած երդումը Հիւբէլբուդիի և տանուտէրի գործին վերաբերեալ՝ սուտ է եղել. նա խղճահա-

ռուելով՝ յայտնում է այժմ։ Այդ մի շատ տխուր պատմութիւն է, որի մէջ երևան են գալիս կապկածելի հանգամանքներ՝ պալատական հանգուցեալ գրագրի և իմ ի տէր հանգուցեալ նախորդի դժբաղդ օգնականի մասին. ես սարսափում եմ այս խոստովանութեան առաջ բերած հետևանքներից։ Սակայն շնորհակալ եմ Աստծուց, որ իմ շատ աղքատներից ամենից չքաւոր, ճնշուած և ցաւագար Ռուդին այս խոստովանութեամբ կարող է նորից ոտքի կանգնել։ Տեսնելով տանուտէրի հետզհետէ չափազանցութեան հասնող չարութիւնն ու յանդգնութիւնը, — Նա այժմ մինչև անգամ տօներն էլ չէ յարգում — ես կարծում եմ, որ նրա խոնարհելու ժամանակը հասել է։ Դժբաղդ ու խեղճ Վիւստի համար խոնարհաբար խնդրում եմ՝ եղէք ողորմած և գթասէր, որքան որ թոյլ կտայ ձեր ողորմածութեան մարդասէր սրտի արդարադատութեան պարտականութիւնը։

Իմ սիրելի ամուսինը ողջունում է Ձեր ազնուասիրտ կնոջը և իմ երեխայքը ձեր ընտանիքին. նրանք հազար շնորհակալութիւն են յայտնում ձեր ուղարկած կոճղեգի համար, որով պէտքէ զարդարեն մեր բանջարանոցը։ Իմ երեխայքը մեծ խնամքով կվերաբերուին դրանց, որովհետև նրանց ծաղկասիրութիւնը անկարագրելի է։

Թոյլ տուէք, ազնուածնունդ, ողորմած տէր, որ ես պարտաճանաչ հպատակութեամբ ինձ անուանեմ

Ձեր ազնուածնունդ ողորմածութեան

Բոննալ, 20 մարտի խոնարհ ծառայ։

1780 թ. Իօահիմ Իրնստ, քահանայ։

Երկրորդ նամակ

Ազնուածնունդ, ողորմած Պարոն.

Ծրարիս մէջ ներփակուած և արդէն կնքուած նամակում երէկ երեկոյեան Ձերդ ողորմածութեան գրեցի, իմ պարտականութիւնը համարելով, Հանս Վիւստի դէպքի առիթով. ամէն բան առաջնորդող և իմաստուն նախախնամութիւնը հաստատեց իմ ցանկութիւնները՝ խեղճ Ռուդիի վերաբերութեամբ. իսկ դէպի տանուտէրն ունեցած կասկածներս էլ հաստատուեց՝ մինչև այժմ ինձ համար մի անբացատրելի դէպքով։

Կէս գիշերին գիւղում մի այնպիսի մեծ և ընդհանուր աղմուկ բարձրացաւ, որ ես կարծեցի թէ մի դժբաղդութիւն է պատահել. մարդ ուղարկեցի բանի էութիւնն իմանալու և լուր առայ՝ թէ սատանան ուզում է տանուտէրին տանել. նա սարի վրայից խղճալի կերպով օգնութիւն էր խնդրում և բոլորն էլ լսել են նրա ետևից վազող սատանայի սարսափելի շչիւնը։ Ես ստիպուած էի այս լուրի վրայ, թող Աստուած ներէ ինձ, սրտանց ծիծաղել։ Բայց հետզհետէ գալիս էին ուրիշները և հաստատում այդ զարհուրելի դէպքը և վերջը յայտնեցին թէ տանուտէրն իրեն օգնութեան հասնող մարդկանցով տուն է վերադարձել, բայց դժնեայ սատանան նրան այնպէս ողորմելի կերպով թրևեալ ու ջարդել է, որ հաւանականաբար նա շուտով հոգին կտայ։

Այդ բոլորը հարկաւ անհաւատալի էր ինձ համար, սակայն ի՞նչ պէտք է անէի. մարդ պէտք է աշխարհի հետ վարուի, ինչպէս որ նա կայ, որովհետև նրան չէ կարելի փոխել։ Ես մտածեցի, որ ինչ էլ պատահած լինի միևնոյնն է. գուցէ տանուտէրն այժմ մեղմացած լինի, ուրեմն պէտք է նգուտ քաղեմ յաջող դէպքից։ Ես իսկոյն գնացի նրա մօտ և շատ ողորմելի դրութեան մէջ գտայ նրան։ Նա հաստատ համոզուած էր, որ սատանան ուզում էր իրեն տանել։ Ես շատ հարց ու փորձ արի՝ իսկական եղելութիւնից մի բան հասկանալու համար, սակայն ոչ մի հեռևանքի չէր հասսյ և մինչև այժմ դեռ ևս ոչինչ չգիտեմ։ Միայն այսչափը ճշմարիտ է, որ ոչ ոք նրան ձեռք չէ տուել և նրա գլխի վերքը, որ շատ թեթև է, յառաջացել է վայր ընկնելուց։ Սատանան էլ վերջը դադարել է ոռնալուց ու շառաչելուց։

Սակայն բաւական է, այժմ ասեմ էականը։

Տանուտէրը կակղել էր և ինձ երկու քստմնելի իրողութիւն խոստովանեց և ազատակամ թոյլ տուեց, որ ես Ձեր ողորմածութեան յայտնեմ։ Առաջին. ինչ որ ինձ երէկ Հանս Վիւստն ասաց՝ ճշմարիտ է, այսինքն Ռուդիի գործում նա սխալեցրել է Ձեր ի Տէր հանգուցեալ պապին և արօտանարդարութեամբ է նրա ձեռքն ընկել։ Երկրորդ. նա կամեցել է այս գիշեր Ձեր սահմանաքարերից մէկը տեղափոխել և իսկապէս այդ գործի վրայ է եղել, երբ այն սարսափելի դէպքն է տեղի ունեցել։

Խոնարհաբար խնդրում եմ Ձերդ ողորմածութիւնից խնայել և գթալ նոյնպէս այս տարաբաղդ մարդուն, որ փա՞ռք Աստծոյ, զղջացած և խոնարհած է երևում։

Որովհետև երեկուանից մինչև այժմ հանգամանքները փոխուեցան, այլ ևս Հանս Վիւստի ձեռքով չեմ ուղարկում այն նամակը, այլ երկուսը միասին ուղարկում եմ Վիլհելմ Էբիի ձեռքով և սպասում եմ թէ Ձերդ ողորմածութիւնն ի՞նչ հրամաններ կտայ ինձ՝ այդ գործին վերաբերեալ։

Ձերդ ազնուածնունդ ողորմածութեան

Բօննալ, 21 Մարտի 1780 թ. Խոնարհ ծառայ՝ Յօաքիմ Լիրնատ, քահանայ։

79.

ՀԱՒ ԾԱԽՈՂԻ ՏՈՒԱԾ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆԸ

Վիլհելմ Էբին շտապեց նամակները տանել Արնբուրգ, բայց հաւ ծախող Քրիստոֆն արդէն նրանից առաջ էր հասել դղեակ և երկար ու բարակ պատմում էր Արներին բոլոր պատահածը։ Արները նստած էր բազկաթոռի վրայ և լսելով այդ պատմութիւնը՝ տանուտէրի սարսափը, հաւ ծախողի օհ, ահ, ուհը՝ ծիծաղից փորը բռնել էր։

Թէրէզան, նրա ամուսինը, որ դեռ ևս կողքի սենեակում պառկած էր, լսելով այդ բարձրաձայն ծիծաղը և հաւ ծախողի օհ, ահ, ուհը՝ կանչեց. Կա՛րլ, ի՞նչ է այդ, ներս ե՛կ և ասա թէ ի՞նչ է պատահել։ Արներն ասում է հաւ ծախողին. ամուսինս նոյնպէս ուզում է լսել թէ դու ի՞նչպէս կարողացար սատանայի դերը կատարել, նե՛րս եկ։ Եւ նա հաւ ծախողի հետ միասին մտաւ իր ամուսնու ննջարանը և հաւ ծախողը նորից պատմեց՝ թէ ի՞նչպէս ինքը հալածել է տանուտէրին մինչև դաշտը, թէ ինչպէս նրա դրացիները ճրագներով ու գէնքով խեղճ տանուտէրին օգնութեան էն հասել և թէ ինքն ինչպէս լուռ բարձրացել է սարը։

Թէրէզան ու Արներն անկողնի վրայ ծիծաղում էին մանուկների նման և հաւ ծախողին տուին իրիկուանից մնացած թանկագին գինին, որ նա ուզածին չափ խմէ։ Սակայն Արները պատուիրեց նրան այդ մասին ոչ մի խօսք չասել ոչ ոքի։

Այդ միջոցին հասաւ Վիլհելմ Էբին՝ քահանայի երկու նամակներով. Արները կարդաց և Հանս Վիւստի պատմու-

թիւնն ամենից շատ շարժեց նրա սիրտը։ Իր պապի անզգուշութիւնն ու Բուդիի դժբաղդութիւնը նրա սիրտը շարժեց, բայց քահանայի իմաստուն գործողութիւնն ուրախացրեց նրան։ Նա այդ նամակներն իսկոյն տուեց Թէրէզային ու ասաց. Բօննալի քահանան մի պատուական մարդ է։ Նա չէր կարող դրանից աւելի մարդասիրաբար և հոգացողութեամբ վարուել։

Թէրէզան կարդաց նամակներն ու ասաց. Վիւստի գործը սարսափելի բան է. դու պէտք է Բուդիին օգնութեան հասնես։ Մի՛ ուշանայ և եթէ տանուտէրը չուզենայ նրան վերադարձնել արօտը, բանտարկել տուր. նա այնպիսի մի սատանայ է, որին դու չպէտք է խնայես։

Ես նրան կախել կտամ, պատասխանեց Արները։

Ա՛խ, ոչ, դու ոչ ոքի չես սպանի։

Կարծո՞ւմ ես, Թէրէզա, ասաց Կարլը և ծիծաղեց։ Այո՛, կարծում եմ, ասաց Թէրէզան և համբուրեց իր Կարլին։

Ես կարծում եմ, որ դու էլ ինձ չես համբուրի, եթէ մէկին սպանեմ, ասաց Կարլը։

Թէրէզան ծիծաղելով ասաց. այո՛, այդպէս է։

Արները գնաց իր առանձնասենեակը և պատասխանեց քահանային։

80.

ԱՐՆԵՐԻ ԳՐԱԾ ՊԱՏԱՍԽԱՆԸ ՔԱՀԱՆԱՅԻՆ

Արժանապատիւ, սիրելի տէր-հայր.

Տանուտէրի հետ պատահած դէպքը՝ Ձեր գրութիւնը ստանալուց մի ժամ առաջ պատմեց ինձ ինքը սատանան, որ հալածեց տանուտէրին սարի վրայից. դա իմ սիրելի հաւծախող Քրիստոփն է, որին դուք ճանաչում էք։ Ես հէնց այսօր կպատմեմ Ձեզ բոլոր պատմութիւնը, որ շատ զուարճալի է. ես կգամ Ձեզ մօտ և սահմանաքարի առիթով համայնական ժողով կկազմեմ. միևնոյն ժամանակ ես ուզում եմ իմ գիւղացիների հետ մի կատակերգութիւն խաղալ նրանց՝ երևոյթներին հաւատալու առիթով և դուք էլ սիրելի տէր-հայր, ինձ հետ միասին պէտք է մասնակցէք այս կատակերգութեանը։ Դուք երևի շատ կատակերգութեան ներկայ չէք եղել, եթէ ոչ այդպէս երկչոտ, բայց միևնոյն ժամանակ և այդպէս բարեսիրտ և գոհ չէիք լինի։

Իմ սրտանց շնորհակալութեան ու ողջոյնի հետ ի միասին ուղարկում եմ Ձեզ իմ ամենալաւ գինիներից, որ դուք այդպէս քաջ ու ազնիւ կերպով օգնեցիք ինձ՝ իմ սիրելի պապի սխալմունքը նորից ուղղելու։ Այս գիշեր ի յիշատակ նրա՝ այդ շիշերից մէկը միասին կդատարկենք։ Սիրելի տէր-Հայր, պապս շատ լաւ մարդ էր, թէև անպիտան մարդիկ աճախ նրա բարի սիրտն ու վստահութիւնը ի չարն են գործածել։ Շնորհակալ եմ Ձեզնից, սիրելի տէր-Հայր, այն հոգացողութեան և աշխատանքի համար, որ ցոյց էք տալիս յօգուտ Հիւբէլրուդիի. իհարկէ ես նրան կօգնեմ։ Հէնց այսօր նա պէտքէ գոհ մնայ իմ պապից և եթէ Աստուած կամենայ, քանի կենդանի է՝ նրան յիշելիս այլ ևս չի տխրի։ Հոգուով չափ ցաւում եմ, որ նա այդպէս քամբաղդ է եղել և ես կաշխատեմ, ինչպէս որ կարող եմ, այնպէս անել, որ այդ մարդն իր թշուառութեան ու վշտերի փոխարէն հանգստութիւն գտնէ և նորից կազդուրուի։ Հարկաւ մեր պարտականութիւնն է մեր ծնողաց սխալներն ուղղել մեր կարողութեան չափ։ Ուղիղ չէ, սիրելի տէր Հայր, որ հաստատում են թէ դատաւորը վտանգի չէ ենթարկւում, կամ թէ պարտական չէ փոխարէնը հատուցանելու։ Ա՜խ, Աստուած, տէր Հայր, ո՞րչափ քիչ են ճանաչում մարդկանց, երբ չեն տեսնում, որ բոլոր դատաւորներն իրենց ստացուածքի վանգով՝ ոչ միայն պէտքէ ձգտեն ազնուութեան, այլ նաև հոգացողութեամբ և լարուած ուշադրութեամբ պէտքէ գործեն։ Սակայն ի զուր տեղն ինչո՞ւ եմ շաղակրատում։

Ամուսինս և բոլոր երեխաներս սիրով ողջունում են Ձերոնց և Ձեր աղջիկներին ուղարկում են էլի մի զամբիւղ ծաղիկ։ Մնաք բարև, սիրելի տէր Հայր. այժմ բոլոր սենեակները տակն ու վրայ մի՛ անէք և երշիկ ու խոզենիներ մի՛ պատրաստէք՝ կարծէք սովածութիւնից ստիպուած եմ Ձեզ այցելում. եթէ ոչ միւս անգամ էլ Ձեզ մօտ չեմ գայ՝ որչափ որ դուք սիրելի էք ինձ։

Կրկին շնորհակալ եմ Ձեզնից, սիրելի տէր Հայր. մնամ ամենայն համակրանքով՝ Ձեր անկեղծ բարեկամ

Արնբուրգ։ 21 մարտի 1780 թ. Կարլ Արներ Արնհայմի։

Ց. Գ. Իսկոյն ամուսինս յայտնեց, որ ինքն էլ ցանկանում է տեսնել հաւ ծախողի կատակերգութիւնը. ուրեմն մենք բոլորս, երեխայոց հետ ի միասին, մեծ կառքով կգանք։

81.

ԲԱՐԻ ՏԱՒԱՐԱԾԸ

Արները Վիլհելմին ճանապարհ ձգելով՝ մտաւ իր գոմը, այնտեղ կապած յիսուն կովերից մէկն ընտրեց Հիւբէլրուդիի համար և ասաց իր տաւարածին. սրան կուշտ կերակրիր և ասա՛ տղային, որ նրան Բօննալ տանի ու քահանայի գոմում կապի՝ մինչև որ գամ։

Տաւարածը պատասխանեց իր տիրոջը. տէ՛ր, ինչ որ հրամայում էք՝ պէտք է անեմ, բայց այս յիսուն կովի մէջ սրա նման ոչ մէկն այնպէս ափսոսս չէ գալիս. սա դեռ ևս ջահել ու գեղեցիկ է և լաւ կազմուածք ունի. շուտով դրա կաթ տալու ամենալաւ ժամանակը կլինի։

Արներ։ Այդ լաւ նշան է քո կողմից, տաւարա՛ծ, որ գեղեցիկ կովն ափսոսդ գալիս է, բայց ես շատ ուրախ եմ, որ հէնց դրան եմ ընտրել, որովհետև ես էլ հէնց ամենասիրունն էի որոնում։ Դա մի աղքատ մարդու գոմը պէտք է գնայ, տաւարա՛ծ, ուրեմն մի ափսոսա, դա նրան կուրախացնէ։

Տաւարած։ Ա՜խ, պարոն, շա՜տ ափսոս է այդ կովը. աղքատ մարդու ձեռքի տակ նա կլղարի ու կտգեղանայ։ Ա՜խ, պարոն, եթէ ես իմանամ որ նա մի որ և է պակասութիւն ունի, ամեն օր Բօննալ կվազեմ և քսակներով լի աղ ու հաց կտանեմ նրա համար։

Արներ։ Բարի՜ մարդ. այդ աղքատը մի սիրուն արօտ կստանայ, որ և բաւականին խոտ կտայ կովի համար։

Տաւարած։ Գոնէ նրա դրութիւնը լա՛ւ կլինի՝ ինձնից բաժանուելուց յետոյ։

Արներ։ Գո՛հ եղիր, տաւարա՛ծ, նա ոչինչ պակասութիւն չի զգայ։

Տաւարածը խոտ ածեց կովի առաջը և հառաչում էր, որ իր տէրը գոմի ամենալաւ կովն ուրիշին է ուղարկում։ Յետոյ իր նախաճաշի աղ և հացը տուեց կովին և տղային ասաց. հագի՛ր մաքուր շապիկդ ու կիրակնօրեայ զգեստդ, կօշիկներդ մաքրիր և գլուխդ սանրիր. այս կովը պէտք է Բօննալ տանես։ Տղան կատարեց տաւարածի ասածներն ու կովը Բօննալ գիւղը տարաւ։

Արները լուռ և լուրջ կերպով մտածում էր այժմ՝ թէ ի՞նչ պատիժ տայ տանուտէրին։ Ինչպէս որ հայրն իր չարաբարոյ և վայրենի մանկան բանտարկելիս ու պատժելիս բացի որդուն ուղղելուց՝ ուրիշ ոչինչ չէ ցանկանում, ինչպէս որ նրա սիրտը կտրտւում է պատժելու միջոցին և աւելի սիրով կկամենար խնայել ու վարձատրել նրան. ինչպէս որ նա պատժելու ժամանակ հայրաբար արտայայտում է իր թախիծը և նոյն իսկ այդ միջոցին սիրում նրան, այդպէս էլ պէտք է ես պատժեմ, մտածում էր Արները, եթէ իմ արդարադատութիւնը հայրական խնամք է հպատակներիս համար։

Այս մտածմունքներով նա վճռեց՝ թէ ի՞նչ պատիժ պէտք է տայ տանուտէրին. իսկ այդ միջոցին նրա ամուսինն ու օրիորդները շտապում էին, որ այսօր սովորականից աւելի շուտ ճաշեն։

82.

ԻՐ ՏԻՐՈՋ ՈՐԴՈՒՆ ՍԻՐՈՂ ԿԱՌԱՊԱՆԸ

Փոքրիկ Կարլը, որ տասնից աւելի անգամ խնդրել էր կառապանին՝ շտապով պատրաստել կառքը, ճաշի սեղանից վեր թռչելով գնաց ախոռն ու կանչեց. արդէն ճաշեցինք, Ֆրանց, ձիերը լծիր և դղեակի մեծ դրան մօտ սպասիր։

Ֆրանց։ Սո՞ւտ ես ասում, այ տղայ, դեռ նրանք ճաշը չեն վերջացրել, դեռ նոր են ճաշի զանգը խփում։

Կարլ։ Ինչ ասացի՞ր, ես սուտ եմ ասո՞ւմ, այդ չեմ կարող տանել ես, դու ծեր ընչացքաւոր։

Ֆրանց։ Սպասի՛ր դու մանկիկ, ես կսովորեցնեմ քեզ՝ թէ ի՞նչ է նշանակում ընչացքաւոր. ես դեռ ձիերի պոչերն ու բաշի մազերը կհիւսեմ, նրանց մէջ ժապաւէններ ու ծաղիկներ կկապեմ և այդպիսով մի ժամ կանցնի. իսկ եթէ մի խօսք էլ ասես, հայրիկիդ կասեմ որ Հերովդէսը—ձիու անուն է—խիթք (փորացաւ) ունի—տե՛ս ի՞նչպէս է նա գլուխը շարժում—այդ դէպքում հայրիկդ կհրամայէ նրան ախոռում թողնել ու փոքրիկ կառքը լծել. այդպիսով դու տանը կմնաս։

Կարլ։ Չէ՛, Ֆրանց, այդպէս մի՛ անի. ձիերի պոչերը մի հիւսի և ժապաւէնի կապոցներ մի՛ շինի, ես սիրում եմ

քեզ, Ֆրանց, և էլ ընչացքաւոր չե՞մ անուանի քեզ։

Ֆրանց։ Դու պէտք է ինձ համբոյր տաս, Կարլ, դու պէտք է իմ մօրուքը համբուրես, թէ չէ ժապաւէնները կը վերցնեմ և կհիւսեմ։

Կարլ։ Հէ, այդ մի՛ անի, Ֆրանց։

Ֆրանց։ Ինչու ես ինձ ընչացքաւոր անուանո՞ւմ. դու պէտք է ինձ համբուրես, եթէ ոչ ժապաւէնները կվերցնեմ և այն ձին էլ տանը կթողնեմ։

Կարլ։ Եթէ ուրիշ ճար չկայ՝ կհամբուրեմ. բայց այն ժամանակ դու էլ կառքը շուտով կպատրաստե՞ս։

Ֆրանցը ցած դրեց ձիու խոզանակը, փոքրիկ պարոնին վեր բարձրացրեց և մի համբոյր ստացաւ. յետոյ սրտին սեղմեց նրան ու ասաց. շա՞տ լաւ, մանկիկս։ Նա շտապեց և կառքը շուտով կանգ առաւ դղեակի մեծ դրան առաջը։

Արներն իր ամուսնու և մանուկների հետ կառք նըստեց, իսկ փոքրիկ Կարլը խնդրեց հօրը. հայրիկ, կարո՞ղ եմ կառապանի նստարանի վրայ, Ֆրանցի կողքին նստել, կառքի մէջ նեղուածք է ու տաք։ Նստի՛ր, ասաց Արները և ձայն տուեց Ֆրանցին. երեխային լա՞ւ նայիր։

83.

ԱԶՆՈՒԱԿԱՆՆ ԻՐ ԲԱՆՈՒՈՐՆԵՐԻ ՄՕՏ

Ֆրանցն իր քաջ երիվարները քշելով՝ շուտ հասաւ Բօնալի դաշտավայրը, ուր բանուորները քար էին կտրում։ Արները կառքից ցած իջաւ՝ նրանց աշխատութիւնը դիտելու և բոլոր բանուորներին իրենց տեղը գտաւ։ Նրանց բանած ժամանակին նայելով՝ բաւականին շատ քար էր պատրաստուած և Արները գովեց նրանց գործի կանոնաւորութիւնը. այդպիսով ամենքն էլ նկատեցին, որ իրենք պատուով չէին դուրս գալ՝ եթէ մի փոքրիկ անկանոնութիւն լինէր կամ թէ կարգ ու կանոնը միայն և եթ ըստ երևոյթին լինէր։ Այս բանն ուրախացրեց Լինհարդին, որովհետև նա մտածում էր. այժմ ամենքն էլ տեսնում են, որ ես անկարգութեան ու անհոգութեան չեմ կարող համբերել։ Արները հարցրեց վարպետին, թէ ո՞րն է Հիւբէլրուդին և հէնց այն րոպէին, երբ որմնադիրը ցոյց տուեց այդ մարդուն, սփրթնած և ակնյայտնի թոյլ Ռուդին մի մեծ քար

էր տեղահան անում։ Արներն արագ կանչեց. ուժասպառ մի՛ լինիք, բարեկամներ, և աշխատեցէք որ դժբաղդութիւն չը պատահի. յետոյ պատուիրեց վարպետին, որ նրանց ըմպելիք տայ երեկոյեան՝ և շարունակեց իր ճանապարհը դէպի Բոննալ։

84.

ԵՐԿՈՒ ՀԱՒԱՍԱՐԱՁԱՓ ԲԱՐԵՍԻՐՏ ՄԱՐԴԻԿ, ԱՐՆԵՐՆ ՈՒ ՔԱՀԱՆԱՆ, ՊԱՏԱՀՈՒՄ ԵՆ ՄԻՄԵԱՆՑ

Արները շուտ նկատելով, որ բարի քահանան դէպի ինքն է գալիս, արագացրեց իր քայլերը, հասաւ նրան ու ասաց. այսպիսի վատ եղանակին ինչո՞ւ էք ձեզ նեղութիւն տուել. յետոյ նրա հետ մտնելով քահանայի սենեակը, հաղորդեց նրան հաւ ծախողի պատմածները։ Այդ վերջացնելով՝ աւելացրեց. ես բաւականին շատ գործ ունեմ, տէր հայր, այդ պատճառով այժմ շտապեմ գործերս վերջացնելու, որ յետոյ մի երկու ժամ հանգիստ և ուրախ ժամանակ անցկացնենք։ Նա մարդ ուղարկեց երիտասարդ Մայերի մօտ և պատուիրեց, որ իր մօտ գայ և յետոյ ասաց քահանային. ամենից առաջ պէտք է տանուտէրի հաշուեմատեանները կնքել տալ, որովհետև ուզում եմ իմանալ՝ թէ նա ո՞ւմ հետ հաշիւ ունի և հէնց իմ աչքի առաջ նա պէտք է այդ բոլորը կարգի դնէ։

Քահանան։ Այդ միջոցով, ողորմած տէր, ձեր հպատակների մեծ մասի հետ լաւ կծանօթանաք։

Արներ։ Եւ յուսով եմ, որ դրանով կարող եմ այս գիւղի ընտանեկան խառնաշփոթութիւններին վերջ դնելու միջոցները գտնել. այդ առիթով ես ամեն մէկին պարզ ու հասկանալի կերպով ցոյց կտամ թէ ինչպէս մարդիկ անդարձ կերպով իրենց ոչնչացնում են՝ տանուտէրի նման վաշխառուների հետ մինչև իսկ մէկ կոպէկի հաշիւ ունենալով։

Քահանան։ Ողորմած տէր. բացի հայրական սրտից, ոչ մի օրէնսդրութիւն չի կարող անել այդ։

85.

ԱՐՆԵՐԻ ՍԻՐՏՆ ՈՒ ՑԱՆՑԱՒՈՐ ՏԱՆՈՒՏԷՐԸ

Այդ միջոցին եկաւ երիտասարդ Մայերը. Արներն ա-

սաց Նրան. Մայեր, ես ցանկանում եմ տանուտէրին փոխել. թէև նա յանցաւոր է, բայց այնուամենայնիւ ի նկատի ունենալով մի քանի հանգամանքներ, ես ցանկանում եմ, որ քանի նա կենդանի է՝ ստանայ իր նախկին պաշտօնի եկամտի մի մասը։ Դու կարողութեան տէր մարդ ես, և կարծում եմ, որ եթէ քեզ տանուտէր նշանակեմ, թոյլ կտաս, որ քո եկամտից տարեկան մի հարիւր գուլդէն այդ ծեր մարդը ստանայ։

Մայեր։ Եթէ դուք ինձ այդ պաշտօնի համար յարմար էք գտնում, ողորմած տէր, այս դէպքում ես, ինչպէս որ միշտ, կկատարեմ Ձեր հրամանը։

Արներ։ Ուրեմն վաղն եկ ինձ մօտ Արնբուրգ. այնտեղ ես այդ գործը կարգի կդնեմ։ Այժմ միայն այսքանն ասեմ քեզ, որ դու իմ գրագրի և դատաւոր Էբիի հետ ի միասին պէտք է կնքես Հումելի հաշիւներն ու գրքերը։ Դուք պէտք է խիստ հետևէք որ ոչ մի թուղթ կամ հաշիւ չը կարողանան թաքցնել։

Մայերն ու Արների գրագիրը վերցրին իրենց հետ դատաւոր Էբիին, գնացին միատեղ և կնքեցին տանուտէրի գրքերն ու հաշիւները։ Տանուտէրի կինն այդ տեսնելով՝ թաց սպունգը ձեռքին՝ գնաց դէպի գրատախտակը, որի վրայ կաւիճով գրուածներ կային, բայց Մայերը տեսնելով այդ՝ արգելեց ջնջելը և իսկոյն արտագրել տուեց այնտեղ գրուածները։ Մայերը, գրագիրն ու դատաւորը զարմացան, երբ գրատախտակի վրայ կարդացին հետևեալը. «Շաբաթ, 18 այս ամսի. Լինհարդի Յովսէփին երեք թալէր փող»։ Ինչո՞ւ համար էք այս փողը տուել, ասացին Մայերը, գրագիրն ու դատաւորը տանուտէրին ու իր կնոջը՝ սակայն նրանք չէին կամենում պատասխանել։ Երբ այդ պարոնները տախտակի վրայ գրածի պատճէնը քահանայի տունը բերին, Արները նոյնպէս զարմացաւ այդ երեք թալէրի վրայ ու ասաց այդ մարդոց. Դիտէ՞ք թէ ինչի համար է նա այդ փողը տուել Յովսէփին։

Մարդիկը։ Մենք հարցրինք, բայց նրանք չկամեցան պատասխանել։

Արներ։ Ես շուտ կիմանամ այդ. երբ Ֆլինկն ու բան-

տի պահապանը գան՝ ասացէք նրանց, որ տանուտէրին ու Հանս Վիւստին սյստեղ բերեն։

86.

ՔԱՀԱՆԱՆ ՆՈՐԻՑ ՑՈՑՑ Է ՏԱԼԻՍ, ՈՐ ԲԱՐԻ ՍԻՐՏ ՈՒՆԻ

Երբ բարի քահանան այդ լսեց՝ իսկոյն աննկատելի կերպով թողեց այդ մարդոցը, գնաց պանդոկ ու ասաց տանուտէրին. ի սէր Աստծոյ, այդ ի՞նչ երեք թալէր է, որ տուել ես Ցովսէփին, դու կրկին գլխիդ դժբաղդութիւն կբերես, եթէ չասես այդ, որովհետև Արները բարկացած է։ Տանուտէրը խոստովանեց քահանային արտասուալի աչքերով այդ երեք թալէրի ու Ցովսէփի պատմութեան հանգամանքները. քահանան շտապեց կրկին Արների մօտ, ասաց նրան բոլորը և պատմեց նոյնպէս թէ ի՞նչպէս թախծալի կերպով է այդ ամենը խոստովանել տանուտէրը։ Նա կրկին Արներից գթասրտութիւն ու ողորմութիւն խնդրեց խեղճ տանուտէրի համար։ Այդ մասին մի՛ հոգաք, տէր-հայր, ասաց Արները. ինչպէս կտեսնէք՝ ես մարդկօրէն և ցաւակցաբար կվարուեմ։

Յետոյ նա հրամայեց Ցովսէփին կապել և աշխատելու տեղից բերել իրեն մօտ՝ տանուտէրի և Վիւստի հետ միասին։ Տանուտէրը դողդոջուն կաղամախի լայն տերևի նման դողում էր. Վիւստը ներքուստ յուզուած և զղջացած էր երևում ու համբերող. իսկ Ցովսէփը կրճտացնում էր ատամներն ու ասում տանուտէրին. անպիտա՛ն, այս բոլորի պատճառը դո՛ւ ես։

Արները պատուիրեց բանտարկեալներին հերթով՝ մէկ մէկ բերել իր մօտ և Մայերի, դատաւորի ու Վայբէլի ներկայութեամբ նրանց հարցաքննեց։ Երբ գրագիրը նրանց բոլոր ասածները բառ առ բառ գրեց և բանտարկեալների առաջ կրկին կարդաց ու սրանք էլ նորից հաստատեցին իրենց ասածները՝ Արները հրամայեց որ նրանց տանեն համայնքի ժողովատեղիի լոռենու տակ, իսկ գիւղացիներին համայնքի ժողովի հրաւիրեց։

87.

ԱՐԻՈՒԹԵԱՆ ԵՒ ՈՒՐՈՒԱԿԱՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Արները նախ մի քանի վայրկեանով գնաց քահանայի սենեակն ու ասաց. մի բաժակ էլ խմեմ, տէր Հայր, որովհետև ուզում եմ արիասիրտ գտնուել համայնքի առաջ։ Այսպէս պէտք է անենք՝ եթէ կամենում ենք այդ մարդկանցը մի բան հասկացնել։

Շատ ճիշտ է, ասաց քահանան։

Արները նրան էլ ստիպեց մի բաժակ խմել ու ասաց. լաւ կլինէր որ հոգևորականներն էլ սովորէին առանց ձեւականութեան վարուել ժողովրդի հետ. ժողովուրդը սիրում է արիասիրտ, պարզ և սրտաբաց մարդկանց։

Ա՜խ, պարոն, ասաց քահանան, ժողովրդի հետ հէնց այդպէս վարուելիս՝ մարդ հազար ու մի դժուարութիւնների է հանդիպում։

Արներ։ Այդ մի դժբաղդութիւն է ձեր պաշտօնի համար, տէր-Հայր։

Քահանան։ Իրաւունք ունիք. հոգևորականներից աւելի պարզ, սրտաբաց յարաբերութիւն ոչ ոք չի կարող ունենալ ժողովրդի հետ. նրանք պէտք է ժողովրդի մարդիկը լինէին և դրա համար պատրաստուէին. նրանք պէտք է ժողովրդի աչքերին նայելով հասկանային՝ թէ ի՞նչ և ո՞րտեղ պէտք է խօսեն ու լռեն։ Իրենց խօսքերը ոսկու պէս պէտք է խնայէին և այնպէս դիւրութեամբ, տեղին ու մարդասիրաբար արտասանէին՝ ինչպէս իրենց Վարդապետը։ Բայց ա՜խ, նրանք ուրիշ դպրոցներում են կրթութիւն ստանում. պէտք է համբերութիւն ունենանք, պարոն։ Ամեն դասակարգերի մէջ էլ հաւասարաչափ արգելքներ են առաջանում պարզութեամբ գործելու համար։

Արներ։ Այդ ճիշտ է. ամեն դասակարգերի մէջ էլ մարդիկ շեղւում են նրանից, ինչ որ պէտք է լինէին։ Յաճախ մենք ստիպուած ենք մեր դասակարգի նշանաւոր պարտաւորութիւնները կատարելու ժամանակի մեծ մասը գործ դնել արտաքին ձևերի և կատակերգութիւնների վրայ և շատ քիչ մարդ կլինի, որ կարողանայ ձևականութիւնների ու սոփեստութիւնների լծի տակ՝ իր պարտաւորութիւնների

զգացումն և իր ներքի էութիւնն այնպէս անբիծ պահպանել, ինչպէս որ այդ յաջողուել է Ձեզ, սիրելի տէր-Հայր։ Ինձ էլ ուրախութիւն և զուարճութիւն է պատճառում, որ զգում եմ հայրական երանելի արժանապատուութիւնը։ Ես էլ կաշխատեմ այդ արժանապատուութեան ինձ վրայ դրած պարտաւորութիւնը մաքուր սրտով կատարել և Ձեզ նման՝ արտաքին ձևականութիւններից անել միայն այն, ինչ որ հարկադրուածեմ անելու։

Քահանան։ Դուք ամաչացնում էք ինձ, տէր։

Արներ։ Ես ասում եմ, ինչ որ զգում եմ — բայց շուտով կզանգահարեն. ես շատ փափագում եմ՝ շուտ տեսնել համայնքի հետ խաղացած կատակերգութիւնը. այս անգամ կարծում եմ, որ նրանց սնոտիապաշտութիւնը մի բանով կը պակասացնեմ։

Քահանան։ Տայ Աստուած, որ այդ յաջողուի Ձեզ. մարդ երբ ցանկանում է բարի բան հասկացնել ժողովրդին՝ սնոտիապաշտութիւնը միշտ արգելք է հանդիսանում։

Արներ։ Ես էլ զգում եմ, որ յաճախ սնոտիապաշտութիւնը մարդոց յիմարացնում, շփոթում և երկչոտ է դարձնում։

Քահանան։ Սնոտիապաշտութիւնը մարդուս գլխին մի այնպիսի հարուած է տալիս, որ խառնակում է նրա բոլոր գործողութիւնը, խօսակցութիւնն ու դատողութիւնը. և որ աւելի գլխաւորն է՝ նա փչացնում է մարդու սիրտը և կոշտութիւն ու կոպտութիւն է ներշնչում նրան։

Արներ։ Այո՛, տէր-Հայր, անկարելի է դիւրութեամբ զանազանել բնութեան պարզութիւնը և սնոտիապաշտութեան կեղծ յիմարութիւնը։

Քահանան։ Դուք իրաւացի էք, պարոն. բնութեան անապական պարզութիւնն ընդունակ է ճշմարտութեան և առաքինութեան իւրաքանչիւր տպաւորութիւնն ընդունելու. նա նման է կակուղ գրատախտակին։ Սակայն սնոտիապաշտութեան յիմարութիւնը նման է ձուլուած մետաղաքարին, որ բացի կրակից ու բոցից՝ ընդունակ չէ ոչ մի տպաւորութիւն ընդունելու։ — Պարոն, քանի որ դուք սկսեցիք այդ տարբերութեան մասին խօսել, որ իմ պաշտօնիս համար մեծ նշանակութիւն ունի, ես ուզում եմ մի փոքր շարունակել այդ մասին։

Արներ։ Խնդրեմ, տէր-հայր, այդ ինձ համար նոյնպէս մեծ նշանակութիւն ունի։

Քահանան։ Մարդս իր բնութեան անապական պարզութեամբ շատ քիչ բան գիտէ, բայց նրա գիտեցածը կարգաւորուած է։ Նրա ուշադրութիւնը զօրեղ կերպով դարձուած է իրեն հասկանալի ու գործածութեան համար պէտքական բաների վրայ. նա երևակայութեամբ չէ ուզում գիտենալ այն, ինչ որ ինքը չէ հասկանում և գործադրելու չէ։ Սակայն սնոտիապաշտութեան յիմարութիւնը կարգաւորութիւն չունի։ Նա պարծենում է՝ թէ գիտէ այն, ինչ որ չգիտէ և չէ հասկանում. նա վճռում է՝ թէ իր գիտութեան անկանոնութիւնը աստուածային կարգաւորութիւն է և նրա արձակած փամփուշտների անցողական փայլը՝ աստուածային իմաստութեան լոյս է։

Պարզ ու անմեղ բնութեան ծառայում են բոլոր զգայարանները, նա առանց մտածելու չէ դատում, ամեն բանի վրայ նայում է հանդարտ և մտածելով, համբերում է հաւաճառութեան, եռանդով աշխատում է կարիքների համար և ոչ թէ կարծիքների. շրջում է մեղմ, հանդարտ և սիրով լի։ Սակայն սնոտիապաշտութիւնն իր և բոլոր մարդկանց մտքի դէմ իր կարծիքն է առաջ բերում. նա միայն իր անապարծութեան յաղթանակի մէջ է հանգստութիւն գտնում և նրանով իր ամբողջ կեանքը վայրենի և կոշտ ու կոպիտ կերպով աղմկում։ Անարատ պարզութեան մէջ մարդուս առաջնորդում են՝ նրա անապական սիրտը, որի վրայ նա միշտ կարող է յուսալ, և միտքը. սակայն սնոտիապաշտ մարդու առաջնորդն է իր կարծիքը, որին նա զոհ է բերում իր սիրտը, միտքը և յաճախ Աստծուն, հայրենիքը, իր մերձականերին և ինքն իրեն։

Արներ. Այդ ցոյց է տալիս պատմութիւնն իր իւրաքանչիւր էջի վրայ և մի փոքր փորձառութիւնն ու աշխարհաճանաչողութիւնը համոզում է ամեն մէկին, որ խստասրտութիւնն ու սնոտիապաշտութիւնը ձեռք ձեռքի տուած են գնում և որ նրանք թշուառ ու վնասակար հետևանքներից աւելի ոչինչ չեն բերում իրենց հետ։

Քահանան։ Պարոն, բարի, անզարգացած մարդու պարզութեան և սնոտիապաշտութեան յիմարութեան այս

էական տարբերութիւնից լոյսի նման պարզ երևում է, որ սնոտիապաշտութեան դէմ գործելու ամենալաւ միջոցն այն է, որ ժողովրդին դաստիարակելիս ճշմարտութեան ուսուցումը հիմնենք քնքոյշ ու բարի անմեղութեան և սիրոյ անարատ զգացման վրայ, նրա ուշադրութեան ոյժը կենդրոնացնենք այն մերձակայ առարկաների վրայ, որոնք իրենց անհատական դրութեամբ հետաքրքրական են։

Արներ։ Ես հասկանում եմ Ձեզ, տէր-հայր. ես էլ համաձայն եմ, որ այդպիսով սնոտիապաշտութիւնն ու նախապաշարմունքը կկորցնեն իրենց խայթոցը, իրենց ներքին վնասակարութիւնը, և այդպիսով նախապաշարմունքի ու սնոտիապաշտութիւնների մնացորդը կլինէր միայն մի մեռած տառ և իրի ստուերը՝ առանց ներքին թոյնի և ինքն իրեն կընկնէր։

Քահանան։ Ես այդպէս եմ կարծում, պարոն. կարգ ու կանոնը, մերձակայ իրերն ու մարդկային ձգտումների մեղմ զարգացումը պէտք է ժողովրդի ուսուցման հիմքը կազմեն, որովհետև դրանք անկասկած ճշմարիտ մարդկային իմաստութեան հիմնաքարերն են։ Կարծիքների և հեռաւոր առարկաների վրայ մեծ, իսկ պարտականութեան, գործի և մերձակայ յարաբերութեանց վրայ թոյլ ուշադրութիւն դարձնելն անկանոնութիւն է մարդկային հոգւոյ էութեան համար։ Նա մեր ամենանշանաւոր գործառնութեանց մէջ տգիտութիւն է սերմանում և յիմարաբար նախապատութիւն է տալիս՝ մեզ հետ ոչինչ կապ չունեցող գիտութեանը։ Ամեն հպարտութեան և մեծ համարումի բնական հետևանքն է սրտի կոշտութիւնն ու կոպտութիւնը. այդ պատճառով և սնոտիապաշտութեան ու նախապաշարմունքի թոյնի աղբիւրը պէտք է որոնել այն հանգամանքի մէջ, որ ժողովրդին դաստիարակելիս նրա ուշադրութիւնը հաստատապէս չեն դարձնում այն առարկաների վրայ, որ նրա անհատական դրութեան համար աւելի նշանաւոր ու շահագրգիռ են և նրա սիրտն ընդունակ են դարձնում՝ ամեն հանգամանքներում անարատ և մեղմ մարդկային լինելու։ Եթէ լուրջ ու եռանդուն կերպով անէին այդ, ինչպէս որ լրջութեամբ ու եռանդով կարծիքներ են ընդունում, սնոտիապաշտութեան արմատները կոչնչանային և նրա զօրութիւնը կչքանար. բայց

օրն օրի վրայ աւելի զգալի է ինձ համար, թէ այս գործում ի՞նչքան ենք յետ մնացել։

Արներ։ Աշխարհում ամեն բան՝ համեմատաբար ճիշտ է կամ անճիշտ. աւելի վատ ժամանակներ կային. կար ժամանակ, երբ մարդիկ կամ պէտք է ուրուականներին հաւատային կամ թէ հերետիկոս ճանաչուէին. կար ժամանակ որ ծեր կանանցը՝ կասկածի և չարամիտ գանգատների հիման վրայ տանջելով հարցնում էին՝ թէ նրանք ի՞նչպիսի յարաբերութիւն են ունեցել սատանաների հետ. այդպէս չվարուող դատաւորներն իրենց իրաւունքն ու պաշտօնը կորցնելու վտանգի մէջն էին։

Քահանան։ Փա՞ռք Աստծոյ, այդ ժամանակներն անցան, բայց հին խմորից դեռ շա՞տ բան է մնացել։

Արներ։ Արիանանք, տէր-հայր. սնոտիապաշտութեան տաճարի քարերը մէկմէկու ետևից կընկնեն, եթէ նոյն եռանդով Աստծոյ տաճարի շինութեան վրայ աշխատէինք, ինչ եռանդով որ սնոտիապաշտութեան տաճարի քարերն ենք գլորում ու վայր գցում։

Քահանան։ Հէնց այդ է որ չկայ. սնոտիապաշտութեան դէմ մղուած կռուի պատճառով իմ զգացած ուրախութիւնը թուլանում կամ ոչնչանում է, որովհետև տեսնում եմ, որ մարդիկ չեն հոգում Աստծոյ սրբութիւնը, կրօնը, իր զօրութեամբ և ոյժով աշխարհիս վրայ պահպանելու։

Արներ։ Այդպէս է. սակայն բոլոր յեղափոխութեանց ժամանակ սկզբում ցանկանում են՝ լոգարանի հետ երեխային ևս դուրս շպռտել։ Իրաւունք ունէին Աստծոյ տաճարը մաքրելու, սակայն այժմ արդէն զգում են, որ եռանդով գործելու ժամանակ իրենց պարիսպն են քանդել, որ պէտք է նորից վերաշինել։

Քահանան։ Ես յոյս ունեմ առ Աստուած և իմ աչքով տեսնում եմ, որ մարդիկ սկսում են զգալ, որ կործանող անկրօնութիւնը թաղում է յաւիտեան մարդկային երջանկութիւնը։

Արներ։ Այժմ գնանք. այսօր ես պէտք է մի յարձակում գործեմ սնոտիապաշտութեան դէմ և հարուած տամ Բօննալի ուրուականների տաճարին։

Քահանան։ Աստուած տայ որ յաջողէք. ես իմ յարձակումներով ու քարոզներով դեռ ևս շատ բան չկարողացայ անել։

Արներ։ Ես չեմ ուզում խօսքերով փորձել, տէր-Հայր։ Իմ հաւ ծախողն իր զամբիւղով ու լապտերով, քլունգով ու բահով պէտք է խօսքերիս տեղը բռնէ։

Քահանան։ Ես լրջօրէն հաւատացած եմ, որ նա իր գործը շատ լաւ կանի, որովհետև ճշմարիտ որ եթէ մարդ գիտէ այդպիսի դէպքերից օգուտ քաղել, նա մի վայրկեանում աւելի շատ բան է անում, քան թէ ճարտասանական բոլոր ձևերով՝ կէս դարի ընթացքում։

88.

ԿՐԿԻՆ ՈՒՐՈՒԱԿԱՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ, ԲԱՑԾ ԱՇԼ ՁԵՒՈՎ

Այդ միջոցին բոլոր գիւղացիները հաւաքուել էին համայնքի ժողովատեղում. երէկուայ դէպքը և բանտարկեալների մասին տարածուած լուրերն առիթ էին տուել գիւղացիներին՝ ահագին բազմութեամբ շտապել դէպի ժողովատեղին։ Սատանայի սարսափելի երևոյթը նրանց զգացումները շարժել էր և նրանք առաւօտուանից արդէն խորհրդակցել ու վճռել էին, որ այլ ևս չհամբերեն քահանայի անհաւատ քարոզներին և չթոյլ տան, որ նա ծաղրէ ուրուականներին։ Նրանք կամենում էին դիմել Էհեգաուսմէր Հարտկնոպֆին, որ նա համայնքին մի դասախօսութիւն կարդայ այդ խնդրի առիթով. բայց երիտասարդ Մայերն ընդիմադրեց ու ասաց. ես չեմ կարող տանել, որ այն ագահ շունը, որ իր երեխայոցը քաղցած թողնելով՝ կեղտոտ ապուրների ետևիցն է ընկնում, մեր հաւատի մասին խօսէ։ Մեզ համար յաւիտենական խայտառակութիւն կլինի, եթէ այդ շողոքորթին խօսելու իրաւունք տանք։ Գիւղացիները պատասխանեցին. մենք էլ լաւ գիտենք, որ նա ագահ ու շողոքորթ է, գիտենք նոյնպէս որ նրա աղախինն իրեն պէս անուանարկի մէկն է և որ նրանք կենակցում են։ Ճշմարիտ է, մեզնից ոչ ոք այնպէս համարձակ չէ ստում ինչպէս նա. նրա նման ոչ ոք գետինը հերկելիս՝ ուրիշի ահմանը չէ անցնում և հնձի ժամանակ էլ նրա նման ոչ ոք մաքուր չէ հնձում հերկի երկու կողմն էլ, բայց մեզնից ոչ ոք էլ

նրա նման կարող չէ քահանայի հետ խօսել կամ թէ մի հոգևոր գործ պաշտպանել։ Եթէ դու ճանաչում ես մէկին, որ նրա կիսի չափ էլ կարողանայ և կամենայ անել, շատ բարի։—Բայց Մայերն այդպիսի մարդ չէր ճանաչում։

Այդ պատճառով գիւղացիները դիմեցին Էհէգաումէրին ու ասացին. Հարտկնոպֆ, դու ես այն մարդը, որ կարող է մի հոգևորականի պատասխանել. բացի քեզանից մեզանում այդպիսի մարդ չկայ։ Այսօրուայ համայնքի ժողովին դու պէտք է Արներին գանգատուես քահանայի անհաւատ լինելու մասին և մի օր պահք պահանջես՝ դժնդակ սատանայի երևոյթի առիթով։ Սակայն գիւղացիները յայտնապէս չխօսեցին նրա հետ, այլ միայն գիւղի առաջաւոր մարդկանց ձեռքով, որովհետև քահանան աղքատ գիւղացիների մէջ բարեկամներ շատ ունէր, իսկ հարուստներն ատում էին նրան, մանաւանդ այն օրուանից, երբ մի անգամ նա առաւօտեան քարոզի մէջ բացատրեց՝ թէ Արների յօգուտ աղքատների մշակել տուած այն ողորմելի արօտի բաժանմանն ընդդիմանալը՝ իրաւացի չէ։ Էհէգաումէր Հարտկնոպֆն ընդունեց այդ յանձնարարութիւնն ու ասաց. թէպէտ շատ ուշ էք անում այդ յանձնարարութիւնը, բայց կաշխատեմ պատրաստել ճառս։ Եւ նա գիւղացիներից բաժանուելով՝ գնաց տուն և առաւօտուանից մինչև երեկոյ սովորում էր իր ասելիքը, մինչև որ գիւղացիները համայնքի ժողովի հրաւիրուեցան։ Երբ բոլոր դաւադիրները ժողովուեցան՝ զարմանում էին թէ ինչո՞ւ չէ եկել Հարտկնոպֆը։ Նիքէլ Շպիցն ասաց. հաւանականաբար նա սպասում է, որ դուք գնաք և բերէք նրան. ի՞նչ անենք, ասացին գիւղացիները, պէտք է հպատակուենք այդ խենթին, եթէ ոչ՝ չի գայ։ Նրանք երեք պատգամաւոր ուղարկեցին, որ Ղրան բերեն. սրանք շուտով վերադարձան նրա հետ միասին և Էհէգաումէրը գիւղացիներին քահանայի նման ծանրութեամբ ողջունեց և իրեն շրջապատող առաջաւորներին ու դատաւորներին ապահովացնում էր ծածուկ և մտախոհ կերպով՝ թէ դասախօսութիւնը պատրաստ է։

Այդ միջոցին Արները հաւ ծախողին սովորեցնում էր, որ երբ ինքը մի մեծ ու սպիտակ թաշկինակ հանի գրպանից, առաջ գայ և կարգով պատմէ ու անէ այն բոլորը,

ինչ որ արդէն խօսել ու որոշել են։ Յետոյ նա քահանայի ու գրագրի հետ միասին գնաց համայնքի մօտ. բոլորն էլ տեղից վերկենալով ողջունեցին ողորմած պարոնին ու արժանապատիւ քահանային։ Արները հայրական բարութեամբ շնորհակալութիւն յայտնեց ու ասաց գիւղացիներին, որ իրենց նստարանների վրայ նստեն, որպէս զի ամէն բան կարգին լինի։

Իսկ Թէրէզան, տիրուհին ու դղեակի ու քահանայի տանն եղող երեխաներն ու ծառաները կանգնած էին եկեղեցու բակում, որտեղից պարզ երևում էր համայնքի ժողովատեղին։

Արները պատուիրեց, որ բանտարկեալներին մէկի միւսի ետևից հերթով առաջ բերեն և նրանց ասածն ու խոստովանածը հրապարակով կարդան. երբ բանտարկուածները համայնքի առաջ կարդացածը հաստատեցին, Արները հրամայեց տանուտէրին իր դատավճիռը ծնկաչոք լսել և սկսեց այսպէս.

89.

ԴԱՏԱՎՃԻՌ

Տարաբա՜ղդ մարդ։

Սրտանց ցաւում եմ, որ ծերութեանդ օրերում գործածդ յանցանքների պատիժը պէտք է կրես։ Դու արժանի ես մահուան պատժի՝ ո՛չ թէ նրա համար, որ Հիւբէլրուդիի արօտը կամ իմ սահմանաքարը մարդու կեանք արժեն, այլ որովհետև ստերդումն գործողութիւններն ու աւազակային կեանքը կարող են մի երկրի համար անսահման վնասանգաւոր լինել և դժբաղդութիւն պատճառել։ Երդմնահար մարդն ու աւազակը պատահած դէպքում մարդասպան են դառնում և մեծ մասամբ նրանք այդպէս են դառնում՝ իրենց պատճառած թշուառութեան, վշտի, կասկածի ու խառնակութեանց շնորհիւ. դու արժանի ես մահուան։ Ծերութեանդ և այն հանգամանքի պատճառով՝ որ գործած յանցանքներիդ մի մասն իմ դէմ է ուղղուած, կեանքդ շնորհում եմ. քո պատիժը կլինի հետևեալը.

Դու պէտք է հէնց այսօր գիւղի բոլոր առաջաւոր մարդկանց և ցանկացողների հետ միասին՝ գնաս իմ սահ-

մանագլուխը և շղթայած դրութեամբ՝ սահմանաքարը նո-
ւրից իր նախկին դրութեան մէջ դնես. յետոյ քեզ կտանեն
տեղական Թօննալ գիւղի բանտը. այդտեղ տասնեւչորս օր
շարունակ քահանան կգայ քեզ մօտ և կիմանայ քո կենսա-
գրութիւնը, որ պարզ ու որոշ կարելի լինի տեսնել, թէ
որտեղից է առաջացել սրտիդ այդպիսի կոպտութիւնն ու
անզգամութիւնը։ Ինքս անձամբ բոլոր պէտք եղած միջոց-
ները ձեռք կառնեմ՝ գործած յանցանքներիդ պատճառներն
ու հանգամանքները որոշելու, որպէս զի իմ ուրիշ հպա-
տակներն էլ այդպիսի դժբաղդութեան մէջ չընկնեն։ Տասն-
եւչորս օրից յետոյ, կիրակի, քահանան հրապարակով, ամ-
բողջ համայնքի ներկայութեամբ, կպատմէ քո կեանքի պատ-
մութիւնը, քո ընտանեկան անկարգութեան, խստասրտու-
թեան, բոլոր երդումների ու պարտաւորութեանց յեղաշըր-
ջելու, խեղճերի ու հարուստների հաշիւները պահելու ե-
րևելի եղանակի մանրամասն նկարագրութիւնը՝ քո իսկա-
կան խօսքերի հաստատութեամբ։ Ինքս անձամբ ներկայ կը-
լինեմ և քահանայի հետ ամեն միջոց ձեռք կառնեմ, որչափ
կարելի է, իմ հպատակներին ապագայում ազատ պահելու
այդպիսի վտանգներից և գիւղում տիրող շատ ընտանեկան
թշուառութեանց աղբիւրն ու պատճառը գտնելու և օգնե-
լու ու խորհուրդ տալու համար։ Այսքանով կբաւականա-
նայի և քեզ կարձակէի, եթէ իմ հպատակները քնքոյշ ու
լաւ կրթուած լինէին ու հասկանային՝ ճշմարտութեան ու
իրենց ժամանակաւոր ու յաւիտենական փրկութեանը հե-
տևել ոչ թէ զզուելի, խիստ ու կոպիտ պատիժների թը-
շուառ երկիւղից, այլ հէնց ճշմարտութեան ու փրկութեան
ձգտումից։ Սակայն այսքան բիրտ, անզուսպ ու անկիրթ ամ-
բոխի համար կարևոր է, որ դու կրես և հետևեալ պատի-
ժը. վաղը դահիճը կտանի քեզ Թօննալի կախաղանի տակ,
աջ ձեռքդ մի բարձր ձողի վրայ կկապի և քո առաջին ե-
րեք մատը չանցնող սև գոյնով կներկէ. այդ ժամանակ, իմ
կամքս այդպէս է, ոչ ոք չհամարձակուի ծաղրել կամ ծի-
ծաղել կամ թէ մի որևէ հայհոյական խօսքով չարչարան-
քիդ այդ ժամը դառնացնել. այլ ընդհակառակը բոլոր
ժողովուրդը, առանց շշուկի ու խօսակցութեան, լուռ և
գլխաբաց ականատես լինի։

Հանս Վիւստին Արները դատապարտեց ուլթնօրեայ բանտարկութեան. իսկ Յովսէփին, իբրև օտարականի, հրամայեց աքսորել իր երկրից և ապագայում արգելել նրան՝ մտնել իր սահմանը, իսկ հակառակ դէպքում՝ բանտարկել նրան։

Այդ միջոցին քահանայի սանահայրը, Հանս Ռէնօլդը, ծածուկ յայտնել էր քահանային գիւղացիների մտադրութեան և Էհէգաուսմէրի ճառի մասին՝ ասելով որ նրանք անպատճառ պէտք է իրեն մեղադրեն անհաւատ լինելու համար։ Քահանան շնորհակալութիւն յայտնեց Ռէնօլդին և ժպտալով ասաց նրան. Հանգի՛ստ եղիր, գործը վատ չի վերջանայ։

Այդ շատ լաւ է, ասաց Արները, քահանայից լսելով այդ պատմութիւնը, որ հէնց իրենք են սկսելու խաղը. այդ միջոցին Էհէգաուսմէրը վերկացաւ տեղից ու սկսեց խօսել։

90.

ԷՀԷԳԱՈՒՄԷՐ ՀԱՐՏԿՆՈՊՖԻ ՃԱՌԱԽՕՍՈՒԹԻՒՆԸ

Տէ՛ր։

Թոյլ կտա՞ք յանուն Բօննալի Ձեր հաւատարիմ համայնքի մի բան խօսել, որ վերաբերում է խղճի ազատութեան։

Արներ։ Խօսի՛ր, ո՞վ ես, ի՞նչ ես ուզում։

Էհէգաուսմէր։ Ես Յակոբ, Քրիստոֆ Ֆրիդրիխ Հարտկնոպֆն եմ, Բօննալի Էհէգաուսմէրն [1]) ու եկեղեցու հոգաբարձուն. 56 տարեկան եմ։ Գիւղի առաջաւորներն ինձ յանուն հասարակութեան ընտրել են ու խնդրել, որ իրենց կողմից, քանի որ իրենք հոգևոր գործերին հմուտ չեն, մի բան խօսեմ։

Արներ։ Ուրեմն սկսեցէ՛ք, Հարտկնոպֆ։

Հարտկնոպֆ։ Ողորմա՛ծ տէր. մենք մեր նախնիքներից սովորել ու հաւատում ենք, որ սատանան ու իր ուրուականները յաճախ երևում են մարդոց. և որովհետև այժմ բոլորին պարզ յայտնուեց, որ մեր հին հաւատն ուրուականների վերաբերութեամբ ճիշտ է, ինչպէս որ մենք

---

[1]) Էհէգաուսմէր կոչւում էր համայնքի պատուոյ դատարանի անդամը։

մի բոպէ անգամ չէինք կասկածում, այդ պատճառով յանուն Աստծոյ համարձակւում ենք մեր ողորմած տիրոջը յայտնելու, որ մեր քահանան, — Աստուած ներէ նրան — այդ հաւատը չունի։ Մեզ այն էլ յայտնի է, որ ուրուականների վերաբերութեամբ դուք ևս քահանայի կարծիքին էք. բայց որովհետև հաւատի գործում աւելի Աստծուն պէտք է հնազանդուել քան մարդուն, յուսով ենք, որ Ձեր ողորմածութիւնը կներէ մեզ՝ եթէ խնդրենք, որ մեր քահանան այսուհետև սատանայի վերաբերութեամբ մեր հին հաւատի համաձայն ուսուցանէ և այլ ևս ուրուականների հակառակ չխօսէ, որոնց մենք հաւատում ենք և ուզում ենք հաւատալ։ Կցանկայինք նոյնպէս, որ մօտակայ կիրակի օրերից մէկը յատկապէս նշանակուէր իբրև պահքի և ապաշխարանքի օր, որ կարողանանք ուրուականներին չհաւատալու հետզհետէ տարածուող մեղքն ապաշխարել։

Արներն ու քահանան հարկաւ հաղիւ էին կարողանում իրենց ծիծաղը պահել, մինչև որ նա վերջացրեց, բայց այնուամենայնիւ համբերութեամբ լսեցին նրան։ Իսկ գիւղացիներն իրենց սրտում ուրախանում էին այս ճառի վրայ և վճռեցին այդ թանկագին մարդուն հարիւրներով ճանապարհ գցել դէպի տուն, թէև երեք մօրդով էին կանչել։ Նրանք տանտեակներով վեր կացան տեղներից ու ասացին. ողորմած տէր. ինչ որ Հարտկնոպին ասաց՝ մեր բոլորի կարծիքն է։

Սակայն աղքատներն ու նրանք, որոնց սիրելի էր քահանան, շատ էին վախենում նրա համար. երանի՜ թէ նա այդպէս դժբաղդ չլինէր ու հաւատար ինչ որ հաւատում են ուրիշները. նա հօ ուրիշ բաներում ա՛յնպէս քաջ է. սակայն սրանք չէին համարձակւում խօսել, չնայելով որ քահանայի թշնամիներն այժմ ցնծում էին։

91.

ԱՐՆԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԸ

Արները գլխարկը ծածկեց, լուրջ կերպով շուրջը նայեց ու ասաց. բարեկամնե՛ր, այդ յիմարութեան համար ճառախօսի կարիք չկար. ինքը գործը և սատանայի երևոյթը սխալանք է և ձեր քահանան ամենահասկացող հոգեորականներից մէկն է։ Դուք պէտք է ամաչէիք և ձեր

Էհեգաուամերի պէս մի ողորմելի մարդու ձեռքով նրան չը-հայհոյէիք։ Եթէ դուք պարտուպատշաճ յարգանք ունենա-յիք նրա խելացի ուսուցման վերաբերութեամբ, աւելի խե-լօք ու հասկացող կդառնայիք, ձեր հին կանանց սնոտիա-պաշտութիւնը կթողնէիք և ոչ թէ անհիմն ու բոլոր խելա-ցի մարդկանց հակառակ կարծիքներ կունենայիք։

Գիւղացիներն սկսեցին տասնեակներով խօսել. այս գի-շեր յայտնապէս սատանան երևաց տանուտէրին և ուզում էր նրան տանել։

Արներ։ Սխալանքի մէջ էք, բարեկամներ և դեռ ըն-թրիքից առաջ կամաչէք ձեր յիմարութեան համար. բայց ես յուսով եմ, որ դուք բոլորդ էլ միասին չէք պնդի ձեր յիմարութեան վրայ։ Մայէր, դու ե՞ւս այն կարծիքի ես, որ չպէտք է նոյն իսկ կասկածել, որ սարի վրայ տանու-տէրին վախեցնողը դժնդակ սատանան էր։

Երիտասարդ Մայէրը պատասխանեց. ես ի՞նչ գիտեմ, ողորմած տէր։ Էհեգաուամերն ու շատ գիւղացիներ բարկա-ցան Մայէրի վրայ, որ նա այդպէս պատասխանեց. Էհե-գաուամերը շշնչում էր. ինչո՞ւ ես հակառակ խղճիդ ու գի-տեցածիդ խօսում, Մայէր. շատ գիւղացիներ էլ ասում էին. չէ՞ որ ամենքս էլ լսեցինք սատանայի սարսափելի ձայնը։

Արներ։ Ես գիտեմ, որ դուք լսել էք աղաղակ, մռըն-չիւն և շաչիւն, բայց ի՞նչպէս կարող էք ասել, որ դա սա-տանան էր. արդեօք չէ՞ր կարող պատահել, որ մի կամ մի քանի մարդիկ կամենային վախեցնել տանուտէրին, որ այդ-պէս անժամանակ այնտեղ է եղել։ Անտառն երբէք դատարկ չէ, այնտեղ մարդիկ են լինում և խճուղին էլ մօտ է, ու-րեմն այդ բանը սատանայից աւելի հեշտութեամբ մարդիկ կարող էին անել։

Գիւղացիներ։ Տասն և քսան մարդ միատեղ չէին կա-րող այդպիսի աղմուկ անել. եթէ դուք էլ այնտեղ լինէիք, ողորմած տէր, և լսէիք՝ Ձեր մտքովն էլ չէր անցնի՝ թէ այդ աղմուկ հանողները մարդիկ են։

Արներ։ Դիշերը խաբում է, բարեկամներ, և երբ մարդ վախեցած է, ամեն բան կրկնակի է տեսնում ու լսում։

Գիւղացիներ։ Մեր սխալուելու մասին չի կարելի խո-սել, այդ անկարելի է։

Արներ։ Բայց ես ասում եմ ձեզ հաստատ կերպով, որ դուք սխալւում էք։

Գիւղացիներ։ Ո՛չ, ողորմած տէր, հաստատ գիտենք, որ մենք չենք սխալւում։

Արներ։ Ես կարծում եմ, որ կարող եմ ապացուցանել, որ դուք սխալւում էք։

Գիւղացիներ։ Այդ կցանկանայինք տեսնել, ողորմած տէր։

Արներ։ Այդ շատ հեշտ է։

Գիւղացիներ։ Ձերդ ողորմածութիւնը կատակ է անում։

Արներ։ Ո՛չ, ես կատակ չեմ անում. եթէ կարծում էք թէ չեմ կարող, կփորձեմ. եթէ դուք համայնքին պատկանող արօտը չքաւորներին կբաժանէք, ես խօսք եմ տալիս ապացուցանելու, որ միայն մի մարդ է արել այն բոլոր աղմուկն ու շաչիւնը։

Գիւղացիներ։ Այդ անկարելի է։

Արներ։ Ուզո՞ւմ էք փորձել։

Գիւղացիներ։ Այո՛, կամենում ենք. մենք կարող ենք համարձակ երկու համայնական արօտ գրաւ դնել և ոչ թէ մէկը, որ դուք չէք կարող այդ ապացուցանել։

Այդ խօսքի վրայ շշնջոց բարձրացաւ։ Մի քանի գիւղացիներ ասում էին իրար. խոստանալիս պէտք է զգոյշ լինել։ Միւս գիւղացիներն էլ ասում էին իրար. նա այդ չի կարող ապացուցանել, ինչպէս որ սատանան չի կարող երկինք գնալ։

Ուրիշները։ Վախենալու բան չունինք. նա պէտք է յետ քաշուի. թող գրաւ բռնենք, նա չի կարող ապացուցանել։

Գիւղացիներ։ (բարձր) Այո՛, եթէ խօսք էք տալիս, խօսեցէք. մենք համաձայն ենք։ Եթէ դուք ապացուցանէք ինչ որ ասում էք, այսինքն թէ՝ մեր երեկուայ լսած աղմուկը մի մարդ է բարձրացել, այն ժամանակ մենք կբաժանենք համայնքի արօտը. հակառակ դէպքում հարկաւ ոչ։

Արները վերցնում է մի մեծ, սպիտակ թաշկինակ, նշան է տալիս հաւ ծախողին և ասում գիւղացիներին. միայն մի քառորդ ժամ մտածելու միջոց տուէք։

Գիւղացիները բոլոր անկիւններից ծիծաղ բարձրացրին

և մի քանիսը աղաղակեցին, եթէ կամենում էք՝ մինչև վաղը, պարոն։

Արներն այս կոպտութեանը չպատասխանեց. բայց եկեղեցու բակում եղողները հեռուից տեսնելով հաւ ծախողի դէպի համայնքի ժողովատեղին գնալը, բարձրաձայն ծիծաղեցին։ Իսկ գիւղացիները լսելով այդ բարձրաձայն ծիծաղն ու սև զամբիւղով ու լապտերով իրենց մօտեցող օտարական մարդու տեսնելով՝ չարի մասին երազեցին։

Այս խե՞նթն ով է.—լոյս ցերեկով վառած լապտեր ունի, ասացին գիւղացիները։

Արներ։ Դա Արնհայմի հաւ ծախողն է—Քրիստոֆ, ի՞նչ գործ ունիս այստեղ։

Քրիստոֆ։ Ես մի բան ունիմ հաղորդելու, ողորմա՛ծ տէր։

Արներ։ Ասա՛ տեսնենք։

Հաւ ծախողը ցած դրեց իր զամբիւղն ու ասաց.

92.

ՀԱՒ ԾԱԽՈՂԻ ՀԱՄԱՑՆՔԻՆ ԱՍԱԾ ՃԱՌԸ

Ողորմա՛ծ տէր, արժանապատիւ հայր և բարեկամնե՛ր։ Ահա՛ ձեր տանուտէրի քլունգը, բահը, թին, օղիի շիշը, ծխամորճն ու մեծ բրդեայ գլխարկը, որ նա սարսափի ժամանակ թողեց սահմանաքարի մօտ, երբ ես նրան իր սիրուն գործի միջոցին վրայ հասնելով՝ սարից ցած հալածեցի։

Գիւղացիներ։ Կարծում ես թէ կհաւատանք, որ այն աղմուկ հանողը դու է՞իր. ոչ այսօր և ոչ էլ վաղը կհաւատանք այդ բանին։ Պարո՛ն, այդ ապացոյցը գոհացուցիչ չէ, ուրիշն առաջ բերէք։

Արներ։ Մի փոքր սպասեցէ՛ք. նա հօ մի լապտեր ունի իր մօտ, նա կարող է գուցէ աւելի լաւ լուսաւորել։ (յետոյ բարձրաձայն ու լրջօրէն. լռութիւն, մինչև որ նա վերջացնէ։

Գիւղացիները լռեցին. հաւ ծախողն սկսեց. դուք աւելի անքաղաքավարի էք, քան թէ սովորական է այս երկրում. ինչո՞ւ չէք թողնում, որ վերջացնեմ. մտաբերեցէ՛ք Արնհայմի հաւ ծախողին. եթէ դուք ինձ ականջ չէք դնի, ապագայի տարեգրութիւնը ձեր անուններով լիքը կլինի, որովհետև

սատանայի՝ տանուտէրին երևալու զբոյցի և ոչ մի կէտը ճիշտ չէ։ Ե՛ս վախեցրի ձեզ, ե՛ս, հաւ ծախողս, հէնց այն-պէս, ինչպէս որ այժմ տեսնում էք. այս զամբիւղով և այս նոր սև այծի մորթով, որ գցել էի զամբիւղի վրայ, որով-հետև երէկ առաւօտ դեռ անձրևում էր. այս լապտերն էլ բռնած ունէի զամբիւղի առաջ, ինչպէս որ մի քանի րոպէ առաջ ինձ տեսաք։ Հիրցաու գիւղում ես լապտերս ձիւթով լցրի, որ լաւ վառուի, որովհետև շատ մութն էր և ինչպէս գիտէք՝ Հիրցաուի կողմը ճանապարհը շատ վատ է։ Ծամի տանևամէկին ես դեռ Հիրցաուի պանդոկումն էի, այդ կա-րող են վկայել պանդոկատէրն ու տանից աւելի ուրիշներ-կայ եղող մարդիկ։ Երբ ես լերան բարձրութեան վրայ հա-սայ, Բօննալում նոր խփեց ժամի տասնևերկուսը։ Եւ լսելով թէ ի՞նչպէս տանուտէրը խճուղուց հազիւ կէս քարընկէց հեռու անիծում էր ու աշխատում և ճանաչելով նրան իր ձայնից ու հաղից, զարմացայ թէ նա ի՞նչ է անում այն-տեղ այս կէս գիշերին։ Ես կարծեցի թէ նա գանձ է փո-րում և եթէ ճիշտ ժամանակը վրայ հասնեմ, կէսն ինձ կտայ. և ահա այդ պատճառով շշուկի ուղղութեամբ գնացի։ Բայց ինչպէս երևում է, երէկ տանուտէրը սովորականից աւելի էր կոնծել, որովհետև նա ինձ, խեղճ, մեղաւոր մարդուս տեսնելուն պէս՝ մարմնացած սատանայ կարծեց։ Ես էլ տես-նելով որ նա մեր տիրոջ սահմանաքարն էր ուզում տեղա-փոխել, մտածեցի. նա վախենում է, ես էլ աւելի կսաստ-կացնեմ նրա երկիւղը։ Եւ շուտով քյունգը, բահն ու թին և իմ ձեռնափայտը միասին կապեցի և այդ բոլորն իմ ետևից քաշ տալով՝ ցած իջայ նեղ շաւղով և սկսեցի ուժե-րիս ներածին չափ ալաղակել. օ՜հ, ա՜հ, ո՜ւհ, տանուտէր, դու ի՞մն ես Հո՜ւ—մէ՞լ։ Ես նրանից հազիւ մի քարընկէց հեռու էի, երբ դուք լապտերներով հանդարտ ու լուռ ձեր տանուտէրին օգնութեան եկաք։ Բայց չուզենալով անմեղ մարդ-կանց էլ, տանուտէրի նման, մոտիկից վախեցնել իմ աղա-ղակներով, լռեցի, նորից սարը բարձրացայ աւարիս հետ միասին, զամբիւղս էլ վերցրի և ուղիղ ճանապարհով տուն հասայ։ Ծամի երկուսից մի քառորդ անց էր, երբ մեր պա-հապանն ինձ պատահեց և հարցրեց. այդ ի՞նչ գործիքներ ես կրում ձուի զամբիւղիդ վրայ. չեմ յիշում թէ ինչ պա-

տասխանեցի նրան, բայց ճիշտը չասացի, որովհետև ուզում էի լռել, մինչև որ յայտնէի մեր պարոնին. այդպէս էլ արի այսօր առաւօտեան ժամի վեցից էլ առաջ։—Բարեկամնե՛ր, եթէ ասածս ճշմարիտ չէ, ի՞նչ էք կարծում, ինչպէ՞ս կարող էի այս պատմութիւնն անել և այդ գործիքներն ունենալ՝ դեռ ևս լուսանալուց առաջ։

Մի քանի գիւղացիներ ականջի ետևները քորեցին, մի քանիսն էլ ծիծաղեցին. հաւ ծախողը շարունակեց.

Եթէ նորից ձեզ այդպիսի բան պատահի, բարեկամնե՛ր, այն ժամանակ, բարեկամական խորհուրդ եմ տալիս ձեզ՝ Բոննալի պահապանին, առաջաւորներին ու բոլոր համայնքին, գիւղի ամենամեծ շունն արձակեցէք շղթայից և այդպիսով շատ շուտ կգտնէք սատանային։

Հաւ ծախողը լռեց և մի ընդհանուր քրթջիւն բարձրացաւ։

93.

ՁՔԱՒՈՐՆԵՐՆ ՕԳՏՈՒՄ ԵՆ ԱՅՍ ԿԱՑԱԿԵՐԳՈՒԹԻՒՆԻՑ

Մի քանի գիւղացիներ։ Աստուած է վկայ, որ այնպէս էր, ինչպէս նա պատմեց. բոլոր հանգամանքները ճիշտ են։

Ուրիշ գիւղացիներ։ Ի՞նչ յիմարներ էինք։

Կունց։ Ես ուզում էի այդ ստահակի ետևից վազել։

Մի քանի առաջաւոր մարդիկ։ Երա՞նի թէ համայնքի արօտը մէջ չէինք բերել։

Հարուստներ։ Անիծեա՜լ լինի։

Ձքաւորներ։ Փա՜ռք Աստուծոյ։

Թէրէզէ։ Գլուխ գործոցը համայնքի արօտն է։

Տիրուհին։ Ճշմարիտ որ ամենն էլ գլուխ գործոց էր։

Էհէգաուէր։ Քարերն ուզում են արեան արցունք թափել. մեր հաւատը կորած է. Եղիա՛, Եղիա՛, կրակ թափիր երկնքից։

Եկեղեցու զաւթում եղող մանուկները։ Օ՜հ, ա՜հ, ո՜ւհ, դու ի՞մն ես, տանուտէ՛ր։

Քահանան։ Ամբոխի վրայ այսպիսի ազդեցութիւն ես դեռ չէի տեսել։

Տանուտէր։ Արթո՞ւն եմ, թէ երազում. ամեն բան պատրանք էր և ես կախաղանի տակ պէտք է կանգնեմ.

ես չեմ կարող բարկանալ. վրէժխնդրութիւնը չէ կատաղեցնում ինձ և ես կախաղանի տակ պիտի երթամ։

Այսպէս այդ ընդհանուր քչփչոցի մէջ ամէն մարդ խօսում էր իր լեզուով և արտայայտում իր զգացմունքը։

Մի քանի րոպէից յետոյ Արները ոտքի կանգնեց, գիւղացիներին նայելով ժըպտաց ու ասաց. այժմ պէ՞տք է առանձին քաւութեան օր նշանակել սատանայի սարսափելի երևոյթի համար. տրդար պէտք է լինել, Աստծուն սիրել և ոչ ոքից չերկնչել, ահա՛ այս է միակ հին և ճշմարիտ հաւատը և ձեր տեսիլներն ու ուրուականների պատմութիւնները յիմարութիւններ են, որ փչացնում են ձեր սիրտն ու միտքը։ Բայց վե՞ր ջապէս գլուխ եկաւ ձեր համայնքի արօտի բաժանումը և կարճ միջոցում դուք կտեսնէ՛ք՝ թէ ի՞նչպէս օգտակար կլինի այդ՝ ձեր որդոց ու թոռների համար և թէ ինչո՞ւ էի ես սրտանց ցանկանում։ Ես հրամայել եմ որ ձեզ համայնքի տանը խմելու բան տան. խմեցէք իմ կենացը, նոյնպէս և ձեր միջի աղքատների կենացը, որոնք արօտը բաժանելիս ուրիշներից աւելի չենստանալու, բայց այդ դրանց համար մեծ բաղդ է, որովհետև դիանք ոչինչ չունին։ Ձեզնից դեռ ոչ ոք չգիտէ՝ թէ ի՞նչ դրութեան մէջ կլինին ձեր որդիքն ու թոռները։

Արները համայնքն արձակեց և Հիւբէլուդիին կանչելով իր մօտ՝ ասաց, որ քառորդ ժամից յետոյ իր մօտ գայ, քահանայի տուն։ Յետոյ Արներն ու քահանան գնացին եկեղեցու բակը իրանց ընտանիքի մօտ և այնտեղից էլ քահանայի տուն։

Քահանան գովեց Արներին՝ այն իմաստութեան ու մարդասիրութեան համար, որով նա վարուեց իր հովուութեանը յանձնուած ժողովրդի հետ և ասաց. այլ ևս ո՛չ մի դէպքում չեմ խնդրի Ձեզնից, որ խնայող և ցաւակից լինէք դէպի ուրիշները, որովհետև Ձեր հայրական սիրտն ու գորովը շատ բարձր է իմ խնդիրներից ու խրատներից։

94.

ԱՐՆԵՐԸ ՀՈՐՀԱԿԱԼՈՒԹԻՒՆ Է ՑԱՑՏՆՈՒՄ ՔԱՀԱՆԱՅԻՆ

Արները պատասխանեց քահանային. խնդրում եմ, մի՛ ամաչացնէք ինձ։ Ես դեռ երիտասարդ եմ ու պարզասիրտ.

տայ Աստուած, որ աւելի լաւ սովորեմ։ Ես սրտանց ուրախ եմ, որ գոհ էք իմ դատավճռից, բայց մի կարծէք, թէ ես չգիտեմ, որ դուք ինձնից շատ բան արիք. ձեր հոգացողութիւնն ու բարութիւնն ամեն բան այնպէս կարգի ձգեց, որ ինձ դատավճիռ տալուց աւելի ոչինչ չմնաց։

Քահանան։ Ողորմած տէր, Ձեր բարութեամբ դուք շատ հեռու էք գնում։

Արներ։ Ո՛չ, բարեկամ, ես միմիայն ճշմարիտ եմ ասում. ես անշնորհակալ ու անարդար կլինէի, եթէ այդ չխոստովանէի։ Դուք մեծ աշխատանքով ու խելացիութեամբ կարողացաք իմ պապի սնդգոյշ դատավճիռն երևան բերել և նրա հետևանքներին վերջ տալ։ Այն պատուաւոր և բարի մարդն երկնքումը կուրախանայ Ձեր արածը և վերջապէս չար բանը բարի դարձած տեսնելով. հարկաւ նա չի ների ինձ, տէր-հայր, որ ես ձեր այդ գործն առանց վարձատրութեան թողնեմ։ Ի նշան իմ երախտագիտութեան՝ Ձեզ եմ նուիրում գիւղի տուած կալուածավարձի փոքրիկ տասանորդը։

Այդ ասելով՝ նա քահանային տուեց մի կնքուած վաւերագիր, որ գրուած էր խորին շնորհակալութիւն արտայայտող մտքերով։

Թէրէզան Արների կողքին կանգնեց և քահանայի ձեռքը տուեց մի ճնպիսի հրաշալի ծաղկեայ փունջ, որի նմանը չէր տեսնուած երբէք մի քահանայի տանը։ Այս մեր պապի յիշատակի համար է, տէ՛ր-հայր, ասաց նա։

Միայն միւս օրուայ առաւօտը նկատեց տիրուհին, որ փունջը կապուած էր մի շալ մարգարտով։ Բարի քահանան զգացուած էր, աչքերում արտասուք ունէր, բայց չէր կարողանում խօսել։

Արներ։ Խօսելն աւելորդ է։

Քահանան։ Ի՛սկ իշխանաւորի սիրտ ունիք։

Արներ։ Մի ամաչացնէք ինձ, սիրելի տէր-հայր. եղէ՛ք իմ բարեկամը. ձեռք ձեռքի տուած աշխատենք մեր ժողովուրդը բաղդաւորացնել, ինչքան կարող ենք։ Ապագայում կուզէի աւելի շուտ շուտ տեսնել Ձեզ, տէր-հայր, դուք էլ աւելի շուտ շուտ կգաք ինձ մօտ, այնպէս չէ՞։ Իմ կառքը ձեր տրամադրութեան տակ եմ դնում։ Ինձ

մոտ գալիս՝ ամեն անգամ վերցրէք, առանց արտաքին ձեւականութիւնների։

95.

ԱՐՆԵՐԸ ՆԵՐՈՂՈՒԹԻՒՆ Է ԽՆԴՐՈՒՄ ԱՅՆ ՄԱՐԴՈՒՑ, ՈՐԻՆ ԻՐ ՊԱՊԸ ԶՐԿԵԼ Է

Այդ միջոցին եկաւ Հիւբէլրուդին. Արները ձեռքը մեկնեց դէպի այդ խեղճ մարդն ու ասաց. Ռուդի, իմ պապն անարդար է վարուել քեզ հետ և քո արօտը խլելով ուրիշին է տուել։ Այդ մի դժբաղդութիւն էր, բարի մարդուն խաբե՞լ են. դու պէտք է ներես նրան և ոչ չպահես սրտումդ։

Ռուդի։ Ա՞խ, Աստուած, պարոն, ես շա՞տ լաւ գիտէի որ նա մեղաւոր չէր։

Արներ։ Բարկացած չէ՞իր նրա վրայ։

Ռուդի։ Սկզբում հարկաւ ինձ մե՞ծ ցաւ էր պատճառում, որ աղքատ տեղովս զրկւում եմ իմ արօտից. բայց ողորմած տիրոջս դէմ ես երբէք տրտունջ չեմ յայտնել։

Արներ։ Անկե՞ղծ ես ասում, Ռուդի։

Ռուդի։ Ի հարկէ, ողորմած տէր. Աստուած գիտէ, որ ասածս ճշմարիտ է և ես նրա դէմ չէի կարող բարկանալ. ես շա՞տ լաւ գիտէի, որ նա մեղաւոր չէր։ Ի՞նչ պէտք է անէր նա, քանի որ տանուտէրը կեղծ վկաներ գտաւ և նրանք էլ իմ դէմ երդուեցին։ Բարի, ծեր և ողորմած պարոնն այնուհետև ինձ պատահելիս ողորմութիւն էր տալիս և բոլոր տօներին ինձ միս, գինի ու հաց էր ուղարկում և թշուառութիւնս փոքր ինչ սփոփում։ Աստուած փոխարէնը հատուցանէ այդ բարի, սիրելի և ողորմած պարոնին, քանի՞ քանի անգամ նա մխիթարել է խեղճ ընտանիքս (արտասուքն աչքերին). Ա՞խ, Աստուած, պարոն, եթէ նա էլ Ձեզ նման մեզ հետ մենակ խօսէ՞ր, շատ բան այնպէս չէր լինի, ինչպէս որ եղաւ. բայց տրիւնարբուները միշտ նրա շուրջն էին և ամեն բան յեղաշրջում էին։

Արներ։ Այժմ պէտք է մոռանաս այդ, Ռուդի։ Արօտն այժմ կրկին քոնն է։ Արձանագրութեան միջից տանուտէրի անունը հանել տուի. իսկ քեզ սրտանց երջանկութիւն եմ ցանկանում, Ռուդի։

Ռուդի։ (Դողալով ու կակազելով) չե՞մ կարողանում շնորհակալութիւնս արտայայտել, տէր։

Արներ։ Ինձ շնորհակալ լինելու պատճառ չունիս, Ռուդի. արօտն օրէնքով քոնն է։

Ռուդին ձեռքերը կցեց, բարձրաձայն լաց եղաւ ու ասաց. Ո՜հ, մօրս օրհնութիւնն է այս. նա կրկին հեկեկաց ու ասաց. Ողորմած տէր, նա ուրբաթ օրը մեռաւ և մեռնելուց առաջ ինձ ասաց. քանդ լաւ կլինի, Ռուդի, յիշի՛ր ինձ, Ռուդի,—Ո՜հ, ո՞րքան ցաւում եմ, պարոն, խե՜ղճ, սիրելի մայրս։

Արների ու քահանայի աչքերում արտօսրներ երևացին. Արներն ասաց. բարի՜, երկիւղած Ռուդի. Աստծու օրհնութիւնը քեզ հետ կլինի, քանի որ այդպէս բարեպաշտ ես։

Մօրս օրհնութի՜ւնն է, ա՜խ ամենալաւ, ամենաերկիւղած և ամենից համբերող մօրս օրհնութիւնն է, պարոն, ասաց Ռուդին և լալիս էր շարունակ։

Ո՞րքան խղճում եմ այս մարդուն, տէր-հայր, որ այսքան երկար ժամանակ զրկուած էր իր սեպհականութիւնից, ասաց Արները քահանային։

Ռուդի։ Արդէն անցաւ, պարոն, թշուառութիւնն ու վիշտը։ Բայց ես չե՞մ կարող սրտիս շնորհակալութիւնը յայտնել, որ դուք ինձ գործ տուիք եկեղեցու շինութեան վրայ. այդ բանը մօրս մահուան օրերում նրան մխիթարեց նոյնպէս և արօտի համար։ Ես չգիտեմ թէ ի՞նչ պէտք է ասեմ և ի՞նչ պէտք է անեմ, պարոն։ Ա՜խ, երանի թէ մայրս էլ տեսնէր այդ։

Արներ։ Բարեպաշտ մարդ, նա երկնքում էլ կուրախանայ քո բարւոք դրութիւնը տեսնելով։ Քո թախիծն ու երկիւղած սէրն ա՜յնպէս գրաւեցին սիրտս, որ համարեա՝ մոռանում էի ասել քեզ, որ տանուտէրը պարտական է տալ քեզ քո վնասն ու քո արօտից ստացած օգուտը։

Քահանան։ Այդ մասին, ողորմած տէր, Ռուդիին բան ունիմ ասելու։

Ռուդի, ասաց քահանան, տանուտէրը շատ նեղ դրութեան մէջ է։ Ի հարկէ նա պարտական է տալ քեզ քո վնասն և իր ստացած օգուտը, բայց ես գիտեմ, որ դու այնքան ցաւակցութեան զգացումն ունիս, որ նրա հետ հաշիւ

չես անի և նրան իր ծերութեան օրերում բոլորովին մուրացկանութեան չես մատնի։ Ես նրա տխուր հանգամանքների մէջ խոստացայ, որ գթասրտութիւն և ցաւակցութիւն խնդրեմ նրա համար, ինչքան կարող եմ. ուրեմն միևնոյնը պէտք է և քեզ խնդրեմ, Ռուդի։ Խղճա՛ նրան իր թշուառ օրերում և խստասիրտ մի լինի նրա դէմ։

96.

ԱՂՔԱՏ ՄԱՐԴՈՒ ԲԱՐԵՍԻՐՏՈՒԹԻՒՆԸ ԴԷՊ ԻՐ ԹՇՆԱՄԻՆ

Ռուդի։ Նրա ստացած օգտի յետ պահանջելու մասին խօսք անգամ թող չլինի, արժանապատիւ հայր, ես չեմ ուզում ինձ գովել, բայց եթէ տանուտէրն աղքատանայ, ես կանեմ այն՝ ինչ որ արդար է. տեսէք, տէր-հայր, արօտն այնքան խոտ է տալիս, որ աւելի քան բաւական է երեք կովի համար. իսկ եթէ ես երկու կով ունենամ, Աստուած է վկայ որ բաւական է, և աւելի՝ քան թէ ես կհամարձակուէի ցանկանալ։ Ես ամենայն սիրով թոյլ կտամ տանուտէրին, որ քանի կենդանի է, մի կովի խոտ վերցնի իմ արօտից։

Քահանան։ Դու քրիստոնէաբար ես վարուում և շատ լաւ ես անում, Ռուդի։ Աստուած էլ քո ունեցածը կօրհնէ։

Արները։ Այդ շատ արդար ու լաւ բան է, տէր-հայր, բայց այս բարի մարդն այժմ ուրախութիւնից զգացուած է, —Ռուդի, գովում եմ առաջարկութիւնդ, բայց դու պէտք է այդ բանը մի երկու օր մտածես. յետոյ կարող ես մի այդպիսի խոստմունք անել, եթէ ապահով կլինես, որ ապագայում արածդ չես զղջալ։ Առ այժմ խորհուրդ եմ տալիս քեզ, որ այդ բանում չշտապես։

Ռուդի։ Ես աղքատ մարդ եմ, ողորմած տէր. բայց երբ պատուաւոր բան եմ խոստանում, երբէք չեմ զղջում։

Քահանան։ Պարոնն իրաւունք ունի, Ռուդի. այս անգամ այն էլ բաւական է, որ դու նրա ստացած օգտից շատ բան չես պահանջում. երբ յետոյ տանուտէրն աւելի կարիք ունենայ և դու էլ լաւ մտածած կլինես այդ մասին, միշտ կարող ես անել ցանկացածդ։

Ռուդի։ Հարկաւ, տէր-հայր, ասածս կանեմ, եթէ տանուտէրն աղքատանայ։

Արները։ Ռուդի, ես սրտանց ուզում եմ, որ այսօր

դու ուրախ լինես և լաւ տրամադրուած. կուզէ՞ս այստեղ մեզ հետ միասին մի բաժակ գինի խմել՝ թէ աւելի լաւ կհամարես տուն գնալ՝ երեխաներիդ մօտ։ Ես արդէն հոգացել եմ, որ տանը քեզ համար այս գիշեր լա՜ւ ընթրիք լինի պատրաստ։

Ռուդի։ Դուք շա՜տ բարի էք, տէր. բայց ես պէտք է տուն շտապեմ, երեխայոցս մօտ, նրանք մենակ են։ Ա՜խ, կինս գերեզմանումն էր և մայրս էլ գնա՜ց։

Արներ։ Ուրեմն գնա՛ տուն, երեխաներիդ մօտ, Տէր ընդ քեզ. ներքևը գոմում կապուած կովը քե՜զ եմ ընծայում, որ դու նորից գոհ լինես իմ պապից, որ այնպէս անարդար վարուեց քեզ հետ. այսօր երեխաներիդ հետ միասին ուրախացիր և յիշիր նրան։ Հրամայել եմ նոյնպէս, որ տանուտէրի խոտից մի մեծ սայլ չոր խոտ բերեն կովիդ համար։ Հէնց այժմ բարձած սայլը քո տան առաջը կգտնես. իսկ եթէ տունդ կամ գոմ ու ախոռդ նորոգութեան կարօտ է, կարևոր փայտը կարող ես իմ անտառից կտրել տալ։

97.

ՆԱ ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԻՒՆ Է ՑԱՑՏՆՈՒՄ ԻՐ ԱԶՆԻՒ ՊԱՐՈՆԻՆ

Ռուդին զգացուած էր և չգիտէր թէ ի՞նչ ասէր. բայց այդ մարդու շփոթութիւնը, որ մի խօսք անգամ չէր կարողանում արտասանել, աւելի ուրախութիւն պատճառեց Արներին, քան թէ կարող էր պատճառել խօսքերով արտայայտուած շնորհակալութիւնը։ Վերջապէս Ռուդին սկսեց կակազելով մի քանի շնորհակալութեան խօսքեր ասել, բայց Արներն ընդհատեց՝ ու ժպտալով ասաց. տեսնում եմ, Ռուդի, որ շնորհակալութիւն ես ուզում յայտնել. յետոյ իր ձեռքը մեկնեց դէպի նա և ասաց. այժմ գնա, Ռուդի, կովը հետդ տար տուն և յոյս ունեցիր, որ եթէ կարող լինեմ քո և ընտանեացդ կեանքը քաղցրացնել, ուրախութեամբ կանեմ։ Ռուդին հեռացաւ Արներից և ուրախ ու շնորհակալ սրտով իր ստացած կովը քշեց, տարաւ տուն։

98.

ՍԻՐՏ ՑՈՒԶՈՂ ՏԵՍԱՐԱՆՆԵՐ

Քահանան, կանայքն ու աղջիկներն այս տեսարանից սրտաշարժուած, արտասուում էին և այդ մարդու գնալուց յետոյ մի բոպէ դեռ լուռ էին։

Թէրէզէ։ Ի՞նչ երեկոյ անցրինք, Արներ. Աստուծոյ ստեղծած երկիրը սիրուն է և ամբողջ բնութիւնը տալիս է մեզ ամեն տեսակ ցնծալի բերկրութիւն և ուրախութիւն, բայց մարդկութեան զմայլումը մե՞ծ է քան երկրի գեղեցկութիւնը։

Արներ։ Ճշմարիտ որ, սիրելիս, նա մե՞ծ է քան երկրի բոլո՞ր գեղեցկութիւնները։

Քահանան։ Իմ արտասուները շնորհակալութիւն են յայտնում Ձեզ, պարոն, այն բոլորի համար, ինչ որ այսօր տեղի ունեցաւ։ Կեանքումս երբէք մարդկային սրտի ներքին վեհութիւնն այնպէս անարատ և ազնիւ չէի զգացել, ինչպէս որ զգացի այս մարդու գործողութեան ժամանակ։ Բայց, պարոն, Աստուած է վկայ, որ մարդկային սրտի վեհութիւնը պէտք է որոնել խեղճ լքեալների ու թշուառների մէջ։

Տիրուհին բոլոր արտասուող երեխաներին իր կրծքին սեղմեց, մի խօսք չարտասանեց, երեսը դէպի մանուկները դարձրեց և սկսեց նրանց պէս լալ։ Մի քանի վայրկեանից յետոյ երեխաներն ասացին նրան. Հէնց այսօր գնանք այն մարդու խեղճ երեխաների մօտ. մեր ընթրիքը նրանց ուղարկեցէք։

Տիրուհին ասաց Արների ամուսնուն. եթէ հաւանում էք այս առաջարկութիւնը, երեխաների հետ միասին գնանք։

Սիրով, պատասխանեց Թէրէզէն. Արներն ու քահանան ևս ցանկութիւն յայտնեցին նրանց հետ գնալու։

Արները կառքով այդ խեղճ ընտանիքի համար իր հետ բերել էր մի ամբողջ քառորդ խորոված հորթ. տիրուհին էլ մի լաւ և սննդարար արգանակ եփել տուեց. սրա վրայ աւելացնելով նաև իրենց և երեխայոց ընթրիքը և Կլաուսը տարաւ այդ բոլորը խեղճ Ռուդիի խրճիթը։ Գիւղի բոլոր ամբոխը, երիտասարդ թէ ծեր, կին թէ մարդ և դրպրոցի բոլոր աշակերտներն ու աշակերտուհիները կանգնած

էին Ռուդիի խրճթի մօտ և նայում խոտի սայլին ու սիրուն կովին։ Կլաուսից միայն մի քանի քայլ հեռու գալիս էին Արներն ու քահանան, Արների ամուսինն ու տիրուհին երեխայոց հետ. սրանք բոլորը ներս մտան Ռուդիի սենեակը և ամբողջ տան մէջ բացի կիսամերկ երեխաներից, քաղց ու կարիք արտայայտող ստեղծուածներից ոչինչ չգտան ու չը-տեսան։

Այս տեսարանը նորից լցրեց Արների սիրտը թախիծով և այժմ նա առաւել լաւ զգաց՝ թէ մի դատաւորի անզգուշութիւնն ու թուլութիւնն ի՞նչպիսի թշուառութիւններ կարող են առաջացնել։ Ամենքը գթաշարժուած էին այս ընտանիքի թշուառութիւնը տեսնելով։ Վերջապէս Արներն ասաց կանանցը. Ռուդին այժմ կամենում է իր արօտի մի երրորդ մասը ցմահ տալ տանուտէրին, որ նրան ձգեց այս տասնամեայ թշուառութեան մէջ, ինչպէս տեսնում էք։

Թէրէզէ (արագ և եռանդով՝ այս խորին թշուառութիւնից զգացուած)։ Ո՛չ, չպէտք է թոյլ տալ, որ այս մարդը այսքան երեխաներ ունենալով՝ մի կոպէկ անգամ տայ այն անաստուած անպիտանին։

Արներ։ Բայց, սիրելիս, մի՞թէ կցանկանայիր այն առաքինութեան և վեհանձնութեան ընթացքը սահմանափակել, որ Աստուած տանջանքով ու թշուառութեամբ այս բարձրութեանն է հասցրել, մի բարձրութեան, որ հենց նոր քո սիրտը յուզեց և իմ արտասուքը քամեց։

Թէրէզէ։ Ո՛չ, ո՛չ, այդ չեմ ցանկանում ես, թող նուիրէ նա իր բոլոր ստացուածքը, եթէ կարող է. այսպիսի մարդուն Աստուած երեսի վրայ չի ձգի։

Այժմ Արներն ասաց Ռուդիին. երեխայոցդ ուտելու բան տուր։ Ռուդելին բռնեց հօր թևն ու փսփսաց նրա ականջում. հայրիկ, Գերտրուդի համար էլ մի բան կտանեմ։ Այո՛, ասաց Ռուդին, միայն սպասիր դեռ։

Արները լսեց Գերտրուդ խօսքը և հարցրեց Ռուդիին. ի՞նչ է ասում փոքրիկը Գերտրուդի մասին։ Ռուդին պատմեց Արներին՝ գողացած դետնախնձորի, իր մօր մահուան անկողնի, Լինհարդի ու Գերտրուդի բարութեան մասին և ասաց, որ նոյն իսկ իր հագած գուլպան ու կօշիկն էլ դրանք են տուել։ Ցետոյ աւելացրեց, տէր, այսօրուայ օրն

ինձ համար օրհնաբեր եղաւ, բայց ես ուրախ սրտով մի պատառ անգամ չէի կարող ուտել, եթէ այդ մարդոց էլ չհրաւիրէի։

Ես չեմ կարող մանրամասնաբար պատմել, թէ ինչպէս Արները գովեց այդ, ինչպէս տիկնայք տրտասուքն աչքերին հիացան մի խեղճ որմնադրի կնոջ գաղտնի արած գործերի վրայ, ինչպէս Ռուդելին բաբախող սրտով Լինհարդի ու Գերտրուդի մօտ վազեց՝ նրանց հրաւիրելու, ինչպէս արանք՝ ոչ թէ Ռուդելիի ասելով, այլ Արների հրամանով, որ Կլաուսին ուղարկել էր նրանց բերելու, իրանց երեխաների հետ ամաչելով և աչքերը գետին յառած եկան վերջապէս, ինչպէս Կարլը Ռուդելիի համար հօրից և Էմիլիան Գրիտէի ու Լիզէի համար մօրից կոշիկ ու գուլպաններ և գործածուած զգեստներ էին խնդրում, ինչպէս նրանց իրանց լաւ կերակրից շարունակ մի մի բան էին տալիս նրանց, ինչպէս Արների ամուսինն ու տիրուհին սիրով էին վարուում երեխանց հետ, ինչպէս սրանք այն ժամանակ աւելի ուրախացան, երբ Գերտրուդն եկաւ, բոլորը դէպի նա վազեցին ու նրա ձեռքերն էին որոնում, ժպտում և նրա գիրկն ընկնում։

Արներն ու Թէրէզէն որքան կարողացան լսեցին ներքին յուզման այս տեսարանի և թշուառ դրութիւնից ազատուելու նկարագիրը և վերջապէս լռելեայն ու արտասուքն աչքերին մնաք բարև ասացին ու գնացին։

Արներն ասաց կառապանին. մի փոքր ծանր գնա. տիրուհին էլ ժողովեց մնացած կերակուրն ու երեխաներին տուեց։ Լինհարդն ու Գերտրուդը Ռուդիի մօտ մնացին մինչև ժամի ութը և շատ ուրախ էին։

99.

ՄԻ ՀԱՃԵԼԻ ՊԱՏԿԵՐ

Անցեալ շաբաթուանից մեր գիւղում մի ընդհանուր խօսակցութիւն է տարածուած՝ թէ Գերտրուդն աշխատում է երիտասարդ Մայերի քրոջը, իր ամենալաւ ընկերուհուն, ամուսնացնել Ռուդիի հետ։ Եւ որովհետև Ռուդիի կրկին ձեռք բերած արօտը եղբայրների մէջ երկու հազար գուլդէն արժէ և ինչպէս ասում են, Արներն էլ նրա եղբօրն ասել է, որ այդ ամուսնութիւնն իրեն ուրախութիւն կպատճա-

ռէ, ամենքն էլ կարծում են, որ նա կհամաձայնի ամուսնանալ Բուդիի հետ։

Ոլիմեադրի գործն էլ շատ լաւ է գնում շինութեան վրայ և հետզհետէ աւելի սիրելի է դառնում Արներին։

100.

ՀԱՒ ԾԱԽՈՂԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹԻՒՆԸ

Հաւ ծախողն էլ բաղդի արժանացաւ։ Կառքով տուն գնալիս Թէրէզան տեսաւ նրան ու ասաց Արներին. սա էլ պէտք է մի բան ստանայ, որովհետև իսկապէս նա էր, որ իր գիշերային ճանապարհորդութեան ժամանակ տեսաւ տանուտէրի արարքն ու ամեն բան կարգի բերեց։

Արները կանչեց հաւ ծախողին ու ասաց. Քրիստոֆ, ամուսինս չէ ցանկանում, որ դու քո սատանայական գործն առանց վարձատրութեան արած լինէիր. ահա՛ քեզ մի զոյգ թալէր։

Հաւ ծախողը խոնարհ գլուխ տուեց ու ասաց. տէր, կցանկայի որ կեանքիս մէջ ամեն օր սատանայական գործ ունենայի։

Այո՛, պատասխանեց Արները, եթէ ապահով լինէիր, որ շներն ամեն անգամ շղթայուած ճային։

Այդ էլ ճշմարիտ է, տէր, ասաց հաւ ծախողն ու կառքն առաջ գնաց։

101.

ՏԱՆՈՒՏԷՐԸ ԿՐԿԻՆ ԳՆՈՒՄ Է ՍԱՀՄԱՆԱՔԱՐԻ ՄՕՏ

Տանուտէրը պէտք է նոյն օրն երեկոյեան սարը բարձրանար և կիսահան սահմանաքարը նորից իր նախկին դրութեան մէջ դնէր։ Ամբոխը շղթայից ազատուածի նման առաջ էր վազում և կարելի է ասել համարեա՛ թէ՝ եթէ դահիճը մերկ սրով այդ մարդոց առաջը կտրէր, չէր կարող նրանց յետ կանգնացնել։ Նոյն իսկ դպրոցի երեխաներն աղմկելով առաջ էին վազում և կէս ժամ նրանից առաջ հասան։ Մի քանիսն աղաղակում էին. տանուտէրին բերում են, միւսները պատասխանում էին. երեկ նրան սատանան էր տանում, այսօր դահիճն է բերում։ Որտեղից նա անց էր կենում, պատանիները պարիսպների ու ծառերի վրայ էին

լցու�. աղջիկները ձեռք ձեռքի տուած տասնեակներով կանգնած էին ցանկապատների ետևը և բարձրութեանց վրայ՝ ճանապարհների երկու կողմերում և ուրախ ու զուարթ ծիծաղում էին մի այսպիսի զբօսանքի վրայ։ Բայց ամենքը չէին ծիծաղում։ Էմիլիայի Գրիտէն մօր ձեռքը բռնած կանգնած էր իրանց դրան ետևը և սրբում էր արտասուքը. տանուտէրը տեսաւ նրանց ցաւագին կսկիծը և սփրթնեց։ Աղջիկն երեսը դարձրեց դէպի մայրն ու սկսեց բարձրաձայն լալ։ Շատ ժամանակ չէր անցել, որ տանուտէրը նրանց սիրելուն զինուորագրողին վաճառել էր ինչպէս որ անասունը վաճառում են մսագործին։ Համարեա թէ տանուտէրի անցկացած բոլոր պատուհանների ու դռների ետևից անէծք էր լսւում։ Այստեղ ու այնտեղ չարամիտ կանայքը բաց էին արել իրանց բերանն ու աւելով և աղբի երկժանիքով սպառնում։ Այսպէս անցաւ տանուտէրն ամբողջ ճանապարհը դէպի սարն ու այնտեղից էլ յետ. միայն Լինհարդի տան առաջ ոչ ոք չերևաց. ոչ մի դուռն ու պատուհան բաց չէր։

102.

ՔԱՀԱՆԱՆ ԽԱՌՆԻՈՒՄ Է ԽԱՂԻ ՄԷՋ

Բայց քահանան տեսնելով այդ անկարգութիւնն և լսելով որ վաղն աւելի վատ կլինի, նոյն գիշերը հետևեալ նամակը գրեց Արներին։

Աղնուածնունդ, մեծարգոյ Տէր։

Այս երեկոյ, տանուտէրին դէպի սահմանագլուխը տանելիս, այնպիսի անկարգութիւններ են տեղի ունեցել, որ ես չեմ կարող ձերդ աղնուութեան չյայտնել և չարտայայտել իմ երկիւղը, որ այս անկարգութիւնը վաղը կարող է աւելի մեծ ծաւալ ստանալ։ Ընդհանրապէս լսւում է, որ երեք-չորս ժամ հեռու տեղերից ամենքը գալու են. պէտք է խոստովանեմ, որ շատ ցաւում եմ նախագուշակելով՝ որ մի այսպիսի խառնաշփոթ աղմուկի մէջ այդ տարաբաղդ մարդու պատիժը ոչ ոքին չի ուղղի, այլ ընդհակառակն այսպիսի անկարգութիւնը կամ չափազանց զուարճութիւնն այսպիսի տխուր առիթով ժողովրդին կարող է աւելի խստասիրտ դարձնել։ Այդ պատճառով ես կցանկայի, որ վաղն եկեղե-

ցում օտար մարդ չլինէր, որ ես իմ հօտի հետ լրջօրէն խօսէի այդ դժբաղդ հանգամանքի մասին և աշխատէի որ պատիժ կրողն ու դիտողները մի այնպիսի տրամադրութիւն ստանային, որ երկուսին էլ ճշմարիտ օգտակար լինէր։ Ինչպէս որ երկրի դրութիւնը ցոյց է տալիս, նախագուշակում եմ, որ առանց ձեր օգնութեան և ամեն կողմերից այստեղ հաւաքուած երիտասարդների աղմկայոյզ շփոթութեան մէջ իզուր աշխատած կլինիմ պարտքս կատարելու։ Այդ պատճառով խնդրում եմ վաղուան համար այնպիսի կարգադրութիւն անել, որ օտարներին արգելուի մեր գիւղը գալ և մեզ մօտ էլ ամեն անկարգութիւնների և չափազանցութիւնների առաջն առնուի։

Եօխիմ Էրնստ, քահանայ։

Արներն անմիջապէս պատասխանեց քահանայի նամակին այսպէս.

Արժանապատիւ, սիրելի տէր-Հայր։

Ես զգում եմ, որ այդ բոլորի մասին պէտք է մտածէի. շնորհակալ եմ ձեզնից, որ այս անգամ էլ ինձ արթնացրիք։

Ահա ուղարկում եմ իմ կարգադրութիւնը վաղուայ համար, որ յուսով եմ ձեր ցանկութեան կհամապասխանէ։

Տանուտէրի պատժին ներկայ կարող են լինել միայն նրանք, որոնք առաւօտը եկեղեցում ժամասացութիւն կլսեն։ Ամենքը պէտք է կարգի բերուած ու լուռ ընթացքով եկեղեցուց պատժատեղին գնան։ Պահապաններ կդրուին օտարականների մուտքն արգելելու, որ դուք խոնուելուց ապահով՝ միայն ձեր համայնքը գանէք եկեղեցում։ Ով որ կհամարձակուի անարգել կամ մի անպատշաճ խօսք ասել տանուտէրին, կամ թէ անկարգութիւն կամ աղմուկ կանի, իսկոյն տեղն ու տեղը նրան պէտք է բռնեն և Բօննալում քանտարկեն՝ մինչև այլ հրաման լինի։

Այս բոլորի համար, սիրելի տէր-Հայր, բոլոր հրամանները տրուած են որոշ և յուսով եմ որ ձեռք առնուած միջոցները կապահովեն այս հրամանների ճիշտ կատարումը։

Պատիւ ունիմ լինելու և այլն Արնհայիմի։

Շտապ. համարեա՛ կէս գիշերին։

103.

ԱԴԱՄՆ ՈՒ ԵՒԱՆ

Շատ լաւ եղաւ, որ Արնէրն այդպիսի հրաման տուեց, որովհետև յաջորդ առաւօտը վաղ՝ շատ հեռու տեղերից դէպի Բօնալի կախաղանն էին ուղևորուել բոլոր պարապ մարդիկ, աղմկող պատանիներն ու ամեն բանով հետաքրքրքրուող կանայք։ Սրանք բոլորն էլ ոչխարները բաց ու աչքերը չռած տեսնում էին, որ ամեն տեղ պահապաններ կան և իրանց յետ են մղում։ «Երևում է, որ Բօնալի պարոններն իրանց կախաղանը միայն իրանց համար են ուզում ունենալ, որ ոչ ոք չմօտենայ.—հա՛, դրա տակը մի բան կայ, մերժուած սատանայի բանն երևի այնպէս չէ, ինչպէս որ կամենում էին ուրիշներին հաղորդել»։—

Այսպէս ամեն մէկը իր կարծիքն էր յայտնում. մի քանիսը լեզուները կծեցին, ուրիշները ծիծաղում էին այն երկար քթերի վրայ, որոնցով իրանք այժմ տուն պէտք է վերադառնային։ Ուրախ տուն գնացողները՝ երիտասարդներն ու ամբոխն էին, քիթը կախողները հաստափոր գիւղացիներն էին իրանց մեծ ձեռնափայտերով։ Բայց ոմանք չբաւականացան քիթները կախելով. այդ կանայքն ու մարդիկը սաստիկ ցանկանալով արգելուած տեղը գնալ՝ մտածում էին թէ ինչ խորամանկ ու նենգ միջոցներով կարողանան իրագործել իրանց ցանկութիւնը։

Հապա որ մենք նրանց հրամանի համեմատ այժմ չը-ցանկայինք տուն դառնալ, ասաց Էօյբախի տանուտէրի կինը Պիլխտալի երդուեալ դատաւորի կնոջը։

Դատաւորի կինը։ Ուրիշ ի՞նչ կարող ենք անել։

Տանուտէրի կինը։ Խենթ, կողմնակի ճանապարհներով գիւղը մտնենք։

Դատաւորի կինը։ Ցետոյ։

Տանուտէրի կինը։ Ցետոյ կթագնուենք ամբոխի մէջ և ուրիշների հետ կվազենք, ուր որ նրանք կերթան։

Դատաւորի կինը։ Ցետոյ որ եկեղեցու մօտ էլ պահապաններ լինեն։

Տանուտէրի կինը։ Կը գայ ժամանակը, կը գայ և խորհուրդը, յամենայն դէպս գրպանումս էլ փող ունեմ։

Դատաւորի կինը։ Սիրով ծախսի կէսը կվճարեմ, եթէ այդ յաջողուի։

Տանուտէրի կինը։ Փորձերն է վարպետութիւնը. արդեօք մեր ամուսիններին հետներս վերցնե՞նք, թէ տանը թողնենք։

Դատաւորի կինը։ Տանը թողնել և վրաները ծիծաղել. այս է իմ կարծիքը։

Տանուտէրի կինը։ Բայց եթէ մարդս մեզ հետ լինի, աւելի շուտ կանցնենք, որովհետև նա տանուտէր է և պահապանները նրանից կվախենան։

Դատաւորի կինը։ Ուրեմն ես էլ իմ մարդուն կանչեմ։

Էյ տանուտէր, էյ դատաւոր, թաշկինակս կորցրել եմ, դուք հօ չէք գտել. կանչեց տանուտէրի կինը, որ ուրիշները չնկատեն իրանց արածը։—Խենթ, հոգայի՛ր որ չկորցնէիր, պատասխանեց տանուտէրը և շարունակեց ճանապարհը դատաւորի հետ։ Մի բոպէ կանգնի՛ր, քոնը պէտք է ինձ տաս, կանչեց կրկին տանուտէրի կինը և ծիծաղեց բարձրաձայն։ Մրմռալով յետ նայեց տանուտէրն ու ասաց. ի՞նչ խաբար է, ի՞նչ ես փողոցում ըղաւում. բայց նա նշան արեց նրան և հասկացրեց, որ թաշկինակ չէ իր ուզածն, այլ ուրիշ բան և տանուտէրը կանգ առաւ։

Ադամի ժամանակից յայտնի է, որ երբ կանայք ծառիցը խնձոր են քաղում, տղամարդիկն էլ կծում են խնձորը։ Տանուտէրն ու դատաւորը հետևեցին իրանց կանանցը և ուռենիների ետևից կիրճերի միջով և ցանկերի ու մացառների վրայով անցնելով՝ առանց տեսնուելու և փորձանքի մտան գիւղը։ Բայց նրանք մենակ չէին. ամեն կողմերից եկած մեծամեծներն ու ճամարտակները փողով ու խնդիրքով մտան եկեղեցի։ Սկզբում կարծես թէ չէր յաջողում նրանց. դրան մօտ կանգնած պահապանը չէր համոզւում ու կաշառւում. բայց երբ մէկը ներս մտաւ, բանը հետզհետէ հեշտացաւ։ Վերջը ներս մտնել ցանկացողների թիւն այնքան շատացաւ, որ պահապանն երկիւղից էլ ոչ ոքին չէր ուզում ներս թողնել. բայց արդէն ուշ էր. նա չկարողացաւ դիմադրել։—Ի՞նչ, պատասխանում էին նրան կանայքն ու չարաճճիները. ուրիշները մեզնից լա՞ւ էին. կամ մեզ էլ ներս թող կամ թէ բոլոր օտարականներին էլ մեր աչքի առաջ

եկեղեցուց դուրս արա. ուրիշ կերպ տեղներից չենք շարժուի. լռութիւն, լռութիւն պատասխանում էր պահապանը, ներս գնացէք, բայց թագնուեցեք անկիւններում որ ոչ ոք չնկատէ ձեզ։ Եւ այսպիսով ամենքն էլ ներս մտան։

104.

ՔԱՀԱՆԱՆ ՇԱՏԵՐԻՆ ԱՐՏԱՔՍՈՒՄ Է ԵԿԵՂԵՑՈՒՑ

Քահանան բեմ բարձրանալով կարդաց առաջ Արների հրամանն ու ասաց. հրամանը պէտք է կատարուի և բոլոր օտարներն առանց պլէպլութեան եկեղեցուց դուրս գան։ Օտարները տեսնելով որ նա լրջօրէն է ասում, մէկ-մէկ վեր կացան և դուրս գնացին. ոմանք այնպէս էին դուրս փախչում, կարծես նրանց ետևից վազում են. ոմանք էլ գնում էին կամաց և շուրջները չէին նայում. մի քանիսը մինչև անգամ գլուխ էին տալի քահանային, չնայելով որ բարկութիւնից կարմրել էին։ Տանուտէրի կինն ու Կիլխթալի դատաւորի կինը չէին ուզում դուրս գնալ և կարծում էին թէ հանդարտ մնալով, կամարի սիւների տակ ու իրանց առաջը կանգնած կանանց ետևը թագնուելով կարող են մնալ. բայց միւս կանայքն ամեն կողմից գլուխները դարձնում էին դէպի այդ թագկացածներն ու քչփչում և ծիծաղում էին նրանց վրայ, այնպէս որ քահանան նկատեց և լուսարարին ասաց, որ հրամանը վերաբերում է ինչպէս տղամարդոց նոյնպէս և կանանց. այնպէս արա, որ դրանք էլ հեռանան եկեղեցուց. այդպիսով այդ թագնուած կանայքն ևս ստիպուած էին մեռնների հետ եկեղեցուց դուրս գալ։

105.

ՄԻ ՀԱՏՈՒԱԾ ՔԱՀԱՆԱՑԻ ՔԱՐՈԶԻՑ

Երբ օտարները դուրս գնացին՝ քահանան սկսեց իր քարոզը և խօսեց ժողովրդի հետ՝ տանուտէրի, իր մասին, մեղքի թշուառութեան և իսկական երջանկութեան մասին։ Նրա խօսքը կարծես ամեն մէկի սրտիցն էր բղխում, կարծես ամեն մէկի բնակարանը մտնելով՝ նկարագրում էր թէ ինչպէս է վարուում նա իր կնոջ ու երեխայոց, հօր և եղբօր, ծառայի և աղախնի հետ. նա նկարագրեց թէ ինչպէս երբեմն մարդ

անընկերսիրութեամբ և անզգուշութեամբ, թեթևամտութեամբ ու անփութութեամբ, աջ ու ձախ, իր շուրջը, բարի մարդկանցը վատացնում է, փոքր սխալները ներելով մեծերի առաջացման առիթ է տալիս և այդպիսով մարդ ինքն իր սիրելիներին փոխանակ բաղդաւորեցնելու ու գոհ վիճակի մէջ դնելու, անբաղդացնում ու թշուառացնում է և խղճալի դրութեան հասցնում։ Այսպիսով տանուտէրը քահանայի ձեռքին մի հայելի էր, որի մէջ նա տեսանելի դարձրեց իր համայնքի կեանքը։ Ժողովուրդն այդ դժբաղդ մարդու մէջ իր պատկերը տեսաւ և Աստուծոյ օրհնութիւնը քահանայի հետ էր։ Ունկնդիրներից շատերը քարոզը լսելով՝ մոռացան տանուտէրին և միմիայն իրանց մասին էին մտածում։ Այդ քարոզի մի երկու հատուածներն առաջ բերենք.

Սիրելի՛ եղբայրներ. ձեզանից և ոչ մէկի մասին կարելի չէ ասել՝ թէ միևնոյնը չէր կարող և նրա հետ պատահել։ Բարձրացրէ՛ք վեր ձեր աչքերը և տեսէ՛ք ինչո՞ւ է այդ խեղճ մարդը ձեր առաջ կանգնած. պատասխանեցէ՛ք. որովհետև նա մեծամիտ, ժլատ, խստասիրտ և անշնորհակալ էր Աստուծոյ և մարդկանցից։ Ուրեմն աչքերդ ուղղեցէ՛ք վեր դէպի Բարձրեալը և ասացէ՛ք, ո՞վ ձեզանից ժլատ, խստասիրտ և անշնորհակալ չէ. ասացէ՛ք, խօսի՛ր, մարդ կին, վե՛ր կաց և խօսի՛ր. կա՞յ մէկը ձեր մէջ որ մեծամիտ, ժլատ, խստասիրտ և անշնորհակալ չէ. եթէ կայ այդպիսի մէկը, թող վե՛ր կենայ. նա մեր ուսուցիչն է. ես նրա ոտի տակը կնստեմ, նրան կլսեմ և նրան կյարուցիմ, ինչպէս մանուկն իր հօրը։ Որովհետև ես, ո՞վ Տէր, մեղաւոր եմ, և հոգիս մաքուր չէ այն բոլոր չարիքներից, որոնց-համար ձեր առաջը կանգնած այս խեղճ մարդը չարչարւում է։ Սկզբնական մեղքի և տանուտէրի վարած վայրենի կեանքի տարբերութեան մասին նա հետևեալ նմանութիւնն արեց.

Մեծ զանազանութիւն կայ մի հասկի և մի ամբողջ քառորդ (չափ) պտղի մէջ։ Բայց երբ հասկը ցանում ես և մի տարուց յետոյ հնձում, գուցէ հարիւրն ես ստանում՝ իսկ եթէ այդ հարիւրը նորից ցանես, երկրորդ տարին կունենաս այդ մի հասկից մի քառորդ չափ։ Սիրելի եղբայրներ, երբ սաղմը մեր մէջն է, ծլում և արմատներ է ձգում՝

պտուղ է տալիս. և ինչպէս որ միակ մի հասկը ժամանակ ու տարիներ անցնելուց յետոյ մի քառորդ պտուղ է տալիս, քո մեղքն էլ, ո՜վ մարդ, ժամանակ ու տարիներ անցնելուց յետոյ կզօրեղանայ ու կծանրանայ։ Այդ պատճառով հասկի և քառորդներով չափած պտուղի մէջ եղած գանազանութիւնը շատ մեծ մի՛ համարի. և մի՛ կարծիր թէ դու էլ ամեն մի մեղքից այս խեղճ մարդու օրը չես ընկնի, եթէ դու չաշխատես ու չհոգաս այդ մեղքի սաղմերը քո մէջ խեղդելու և արմատախիլ անելու։

Նրա քարոզի մի ուրիշ հատուածն հետևեալ բովանդակութիւնն ունէր.

Որդե՛ք, տեսէ՛ք այժմ աշխարհի արդարութիւնն ու դողացէ՛ք։ Երկրիս արդարութիւնը ջարդում, փշրում և սպանում է։ Լա՛ց եղէք այն թշուառների և այն բոլոր մարդկանց վրայ, որոնք արդարութեան ձեռքն են ընկել և աղաչեցէ՛ք Աստծուն, որ իշխանները գթան ու ողորմեն այդ խեղճերին ու թշուառներին և նրանց չարչարանքը չափից դուրս չմեծացնեն։ Դո՛ւք էլ, որդեակք, եղէ՛ք մարդասէր և խնայելով ու խղճով վարուեցէ՛ք այդպիսի դժբաղդների հետ և հաւատացէ՛ք որ ստրուկների ցոյց տուած օրինակն ազդեցութիւն կունենայ նաև երկրի տէրերի վրայ և նրանք էլ խնայող և ցաւակից կլինեն տարաբաղդներին։

106.

ԵԹԷ ԲԱՆՏԵՐԻ ԵՒ ՈՒՂՂԻՂ ՏՆԵՐԻ ՄԷՋ ՄԻ ԱՑՍՊԻՍԻ ԱԶԴԵՑԻԿ ՔԱՀԱՆԱՑ ԼԻՆԻ, ԿԱՐՈՂ Է ԲԱՆՏԱՐԿԵԱԼՆԵՐԻ ՀԵՏ ՎԱՐՈՒԵԼՈՒ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ ՊԱՐԶԵԼ

Քարոզը վերջացնելով՝ քահանան իջաւ բեմից, մի փոքր ժամանակ էլ նստեց դժբաղդ տանուտէրի կողքին, խօսեց նրա հետ եղբայրաբար, ինչպէս որ արել էր այս ամբողջ օրը։ Եւ որովհետև այդ դժբաղդ մարդը շուտով պէտք է ճանապարհ ընկնէր, քահանան նկատեց որ խեղճը թուլութիւնից հազիւ է ոտքի կանգնում և տեղեկանալով որ նա դեռ ևս անօթի է, շուտով պատուիրեց, որ իրենց տնից ուտելու և խմելու բան բերեն։ Հանսը բերելով պատուիրածը, դրեց աւաղանի վրայ, որի կողքին նրանք կանգնած էին։ Այդ բարկացրեց լուսարարին և նա նշան արաւ Հանսին, որ

ուրիշ տեղ դնի։ Հանսը նշանը հասկանալով ուզում էր խոկոյն վերցնել և ուրիշ տեղ դնել, բայց քահանան նկատեց այդ ու ասաց. Հանս, թող մնայ, վնաս չունի։

Եւ քահանան իրաւունք ունէր։ Սիրով սրբուածը չի պղծում բեմը. իսկ այն բեմը, որի վրայ սրբապղծւում է սէրը, պղծում է այն սրբութիւնը, որին ինքը նուիրուած է։ Նոյն իսկ ամենից սուրբ բանը, չսիրելով՝ սրբութիւնից զրկւում է. և քահանայի անկեղծ սիրով առաջարկած հացն ու գինին իրաւամբ դրուած էր աւազանի վրայ։

Տանուտէրը աւազանի վրայ կերաւ ու խմեց. ամենքն էլ սիրով ու ցաւակցութեամբ էին վարւում նրա հետ. քահանան ասաց նրան. չե՞ս կամենայ ներողութիւն խնդրել այս մարդկանցից, որոնց մէջ շատ քչերը կլինեն, որոնց դու անպատուած ու վիրաւորած չլինես։—Ա՜խ, Աստուած, սիրով, տէր տայր, ասաց տանուտէրը, երեսը շրջեց դէպ իրեն շրջապատողներն ու ասաց. Ի սէ՞ր Աստծոյ, բոլորդ էլ ներեցէք ինձ. նա աւելի չկարողացաւ խօսել, բայց այնպէս թախծալի՝ ու խոնարհ նայեց բոլորին, որ ամենի սիրտն էլ մեղմացաւ։ Կանայքն ու տղամարդիկ ամեն կողմից իրենց ձեռքը մեկնեցին դէպի նա ու ասացին. աւելի քան ներում ենք. թէ նա ինչպէս ուրախացաւ, որ ամենն էլ ձեռք են տալիս իրեն, թէ ինչպէս երկար ժամանակ աջ ու ձախ երկու ձեռքով էլ բոլորի ձեռքերը դողալով սեղմում էր—կարող ես երևակայել, ընթերցո՛ղ, բայց նկարագրել ես չեմ կարող։ Մի քանի վայրկեանից յետոյ քահանան ասաց տանուտէրին. կարծեմ որ այժմ ժամանակ է գնալու։ Տանուտէրը գթութիւն հայցելով նայեց նրան, բայց ոչինչ չկարողացաւ խօսել։ Ցանուն Աստծոյ պէտք է կատարուի, ասաց քահանան, նրա ձեռքից բռնեց, ուզեց բարձրացնել ու ասաց. ուշացնելով աւելի կծանրացնես, արի՛ այժմ և համբերութեամբ կրիր խաչդ։ Ուշադրութիւն մի՛ դարձրու թէ ի՞նչ կայ և ինչ է գործւում շուրջդ, միմիայն քեզ վրայ մտածիր։

107.

ՄԱՐԴԱՕԻՐՈՒԹԻՒՆԸ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹԵԱՆ ՀԵՏ

Յետոյ նրանք միասին գնացին պատժի տեղը. քահանան ամբողջ ճանապարհին աղօթում էր բարձրաձայն և ամ-

բոխը խորին լռութեամբ հետևում էր նրանց։ Այսպիսի համր լռութիւն է տիրում այն քաղաքացու դագաղի շուրջը, որի անտէր մնացած մանուկներին ցաւակցաբար դէպի գերեզմանն է ընկերակցում գթաշարժուած ամբոխը։ Լուռ զգացուելու ժամը, որի միջոցին Բօննալում մահագոյժ զանգակներ էին խփում, տանուտէրի ու ամբոխի սրտի վրայ բարի ազդեցութիւն ունեցաւ։ Տե՛ս, այդ մի կատաղի գազանի պատիժ չէր, որին բոլորովին ոչնչացնում են երկրի երեսից՝ որ այլ ևս ուրիշներին չվնասէ. այդ մի մարդու պատիժ էր, որ կատարւում էր իրեն և իր մերձականերին առաջուանից աւելի խելօք ու աւելի լաւ դրութեան մէջ դնելու համար։

Տանուտէրը կանգնած էր գլխաբաց ու բոկոտն և երեք անգամ բարձր ձայնով կրկնեց այս խօսքերը. այստեղ փտելուն արժանի եմ. դատաւորը ուժեղ ձայնով պատասխանեց. այո՛, արժանի ես, որ ոսկրներդ փտեն այստեղ և մարմնդ երկնքի թռչուններն ուտեն։ Տանուտէրը կրկին երեք անգամ պատասխանեց. այո՛, արժանի եմ։—Նա ողորմութեան արժանացաւ, արդարադատութեան ստրուկ, մի՛ սպանի նրան, աղաղակեց այժմ բարձր ձայնով գայիսոնը ձեռքին բռնած դատաւորը։—Ապա ի՞նչ պէտք է անեմ նրան պատասխանեց արդարադատութեան ստրուկը։—Նրան պէտք է կախաղանի սիւնին կապես, ձեռքը մի ձողի վրայ ամրացնես և այդ մատներն երեք անգամ սեւացնես անջնջելի ներկով. արդարադատութեան ստրուկը կատարեց տուած հրամանն ու մերկ սրով կանգնեց դժբաղդ տանուտէրի ետևը։

Այդ միջոցին դատաւորը գայիսոնը ձեռքին դարձաւ դէպի ժողովուրդն ու բարձրաձայն ասաց. Լսի՛ր, ժողովուրդ. քո տէրն ու հայրը պատուիրում է ասել ձեզ. ով ձեզնից այսպիսի խայտառակութիւնից աւելի չէ վախենում քան մահից, նա իր ընտանիքով, երեխանցով ու ցեղով դէպի թշուառութիւնն է դիմում, որի մէջ ընկած էք տեսնում այժմ այս խեղճ մարդուն։ Ցետոյ համարեա՛ թէ մի ամբողջ ժամ խօսեց քահանան և ժողովուրդը ոչ մի եկեղեցում այնպէս ուշադրութեամբ և սրտաշարժ չէր լսել, ինչպէս լսում էր այժմ։

Տանուտէրը համարեա՛ թէ անշնչացել էր և հազիւ

կարողանում էր կանգնել. երբ քահանան նկատեց այդ, կանչեց իր Հանսին ու ասաց նրան. գնա փոքր կառքը բեր և վրան էլ անկողին ձգիր. Հանսը գնաց ու բերեց։ Որովհետև արդէն ժամն անցել էր և տանուտէրին կապանքից ազատել էին, քահանան բռնեց նրա ձեռքն ու ասաց. այժմ, ի սէր Աստծոյ, կառք նստիր, տեսնում եմ որ պէտք ունիս և հազիւ թէ կարողանաս ոտքով տուն գնալ։ Ճշմարիտ է, ասաց տանուտէրը, բոլորովին դողում եմ, շնորհակալութիւն յայտնեց, կառք նստեց ու ասաց. արժանի չեմ սրան։ Քահանան ժողովրդով շրջապատուած՝ կառքի կողքին ոտքով գնաց մինչև Բօննալի բանտը և կառքի անկողինն էլ տուեց նրան, մինչև որ իր տանից անկողին բերել տայ։

108.

ԳԻՒՂԱՑԻՆԵՐԻ ԽՕՍԱԿՑՈՒԹԻՒՆՆ ՈՒ ԶԳԱՑՈՒՆՈՒԹԻՒՆԸ

Այսօր Լինհարդը մենակ էր բանում եկեղեցու գաւթում, որովհետև նրա բանուորները բոլորն էլ գնացել էին տանուտէրի ետևից։ Նա սրտանց լաց եղաւ երբ լսեց իրանից ոչ հեռու գտնուող աշտարակի զանգի ձայնը, որ նշան էր թէ տանուտէրի պատիժն ի կատար ածին։ Մի քանի վայրկեանից յետոյ բանուորները յետ եկան և համարեա ամբողջ օրը միմեանց հետ խօսում էին այդ դէպքի մասին։

Սիրտս շատ ցաւեց, ասացին Էբին ու Կինաստը։

Կրիխէր։ Իմը նոյնպէս, կարծես թէ վրաս սառը ջուր էին ածել։

Ռիտի-Մարքս։ Բայց անպիտան լինելն այդպէս է։

Լէէման։ Նրա համար այնպէս էին հոգում, կարծես ծննդական լինէր։

Լէնկ։ Եթէ ես լինէի տանուտերի տեղը կամ մէկ ուրիշը, ի հարկէ այդպէս չէր լինի։

Էբի։ Ինձ այնպէս է թւում, որ ոմանք էլ նախանձում են, որ նրան չկախեցին։

Լէէման։ Դեռ ուրիշ պատմութիւններ էլ դուրս կգան։

Միխէլ։ Ինչո՞ւ։

Լէէման։ Արները կամենում է քրքրել տաս տարուայ ընթացքում բոլոր պատահածները։

Ռիտի-Մարքս։ Դրա համար ոչ ոք չի հոգայ։

Միխէլ։ Ինչո՞ւ ես այդպէս կարծում։

Ռիւտի-Մարքս։ Կարծում եմ, որ այդ բանն այնպէս հաստատորներին կդիպչի, որոնք հեշտութեամբ կծածկեն ամեն բան։

Կրիխէր։ Սատանան գիտէ. այդ դեռ ապահովչի կարելի համարել։

Էրի։ Բայց լսե՞լ էք՝ թէ ի՞նչ էր խօսում Հարտկոպֆը քարոզի մասին։

Միխէլ։ Նա խենթ է։

Մարքս։ Բայց նա մի մի անգամ էլ ճիշտ է ասում։

Միխէլ։ Այո՛, երբ նա ասում է թէ տանուերկու ժամն է, կէսօրը տալիս են։

Մարքս։ Ցիմար բան ես ասում. հաւատի վերաբերութեամբ ինձնից ու քեզնից էլ լաւ է հասկանում. եկեղեցուն նա շահէնի նման ուշադիր է և կարող է քրիստոնէական հաւատի նշանաւոր խօսքերը քահանայի հետ միասին ասել։

Միխէլ։ Այդ շատ աստուածահաճոյ գործ է։

Մարքս։ Այդտեղից կարելի է քո կարծածից աւելի շատ բան եզրակացնել. երևակայի՛ր նա նզովում է, որ քահանան իր վերջին քարոզի մէջ ոչ մի անգամ Քրիստոս խօսքը չէ արտասանել։

Մարքսը ուէխը կախ է գցում, իսկ Միխէլը շարունակում է։

Քահանան իրաւունք ունի, որ իր խօսքերն այնպէս չէ ասում, որ ամեն մի վանկը բարեպաշտութիւն արտայայտի։ Դուք բառեր համարելով ու վանկեր շրջելով այնքան շփոթում էք մարդկանց, որ նրանք երբ ուզում են ուղեղը գործածել՝ աչքերն են չռում և ձեռքը գործածելու փոխարէն՝ ուէխն են բաց անում։

Մարքս։ Մի՞թէ։

Միխէլ։ Այո՛, ի հարկէ. սէրն ու խելքը հէնց քահանայի ասածների մէջն է. նրա մասին խօսողները պէտք է ամաչեն։

Մարքս։ Մի՞թէ։

Միխէլ։ Խե՞նթ ես, ինչ է, Մարքս։

Կինասատ։ Իմ կարծիքով այդ մասին կարելի է լռել։

մարդ քար պէտք է լինէր, որ այսօրուայ քարոզից չսրտաշարժուէր։

109.

ՏՆԱՑԻՆ ԿԱՐԳԱՊԱՀՈՒԹԻՒՆ ԵՒ ԱՆԿԱՐԳԱՊԱՀՈՒԹԻՒՆ

Այս առաւօտ Գերտրուդը գնաց իր բարի դրացի Հիւքէլրուդիի մօտ, որ այլ ևս եկեղեցու շինութեան վրայ չէր բանում։ Նա գիտէր որ չքաւորութիւնն ու ճնշուած դրութիւնը այնպէս խանգարում է մարդու տնային կարգապահութիւնը, որ եթէ դիպուածով կրկին ոտքի կանգնի ու խորհրդատու չգտնէ, այդ բաղդաւորութիւնը նրա ձեռքից այնպէս կփախչի, ինչպէս օձաձուկը ջրի մէջ։ Եւ որովհետև մեծ մօրը մահուան անկողնում խոստացել էր հոգացողութիւն ունենալ երեխաների վրայ, Գերտրուդը ոչ մի բոպէ չէր ուզում կորցնել Բուդիին օգնելու, իր կարողացածին չափ, ամեն բան կարգի բերելու, քանի որ նոր ձեռք բերածի կէսն անկարգապահութեան շնորհիւ կրկին չէր ոչնչացել։

Նա բոլոր երեխաներին դեռ ևս անկողնում գտաւ. Բուդին էլ նոր էր վերկացել։ Երեխայոց զգեստները յատակի վրայ այս ու այն կողմն էին ածած. կատուն էլ նըստած էր սեղանի վրայ այն սև ամանի մօտ, որից երեկ իրենք կերակուր էին ընդունել։ Գերտրուդը զգում էր այսպիսի անկարգութեան փչացնող հետևանքներն ու երկարաբարակ բացատրեց Բուդիին՝ թէ այդպիսով մինչև ուր կարելի է հասնել։ Գերտրուդի խօսելու ժամանակ նա քնաթաթախ լսողի նման աչքերը չռում էր. նա այնպէս սովորել էր այդ անկարգութեան, որ այժմ կրկին իր արօտը ստանալով՝ կարծում էր թէ ամեն բան կարգի է ընկել և երկար ժամանակ չէր կարողանում ըմբռնել՝ թէ Գերտրուդն ի՞նչ է ուզում ասել իր քարոզով։ Վերջապէս հասկացաւ ու պատասխանեց արտասուքն աչքերին. Ա՜խ Աստուած, դու իրաւունք ունիս, Գերտրուդ. բայց Աստուած է վկայ, որ մեր թշուառութեան միջոցին ուրիշ տեսակ չէր էլ կարող լինել։ Վերջին ժամանակները ես ժամերով ու օրերով թափառում էի և համարեա՝ չգիտէի թէ գլուխս որտեղ է գտնուում—կամ թէ ինչ պէտք է անեմ։

Գերտրուդ։ Հէնց այդ է իմ ասածն էլ. այժմ դու

պէտք է ուրիշի խորհուրդն ու օգնութիւնը չմերժես։

Ռուդի։ Սրտանց շնորհակալ կլինեմ քեզնից, եթէ այդպէս անես։

Գերտրուդ։ Ես սրտանց ու սիրով կանեմ, ինչ որ կարող եմ։

Ռուդի։ Աստուած վարձատրէ քեզ՝ իմ և երեխայոցս մասին ունեցած հոգացողութեանդ համար։

Գերտրուդ։ Ռուդի, եթէ ուզում ես որ երեխաներդ լաւ դաստիարակուին, ամեն բան պէտք է ուրիշ կերպ կարգաւորես։ Սակայն այժմ խօսելու ժամանակը չէ, այլ գործելու։ Այսօր դեռ արևը մայր մտնելուց առաջ ամեն բան պէտք է այնպէս փոխուի այստեղ, որ այլ ևս կարելի չլինի ճանաչել. սեղանը, պատուհանները, յատակը, ամեն բան պէտք է մաքուր լուանալ ու դուրս դնել. շնչել անգամ կարելի չէ այստեղ։ Հաւատա՛ որ քո երեխաների առողջութիւնն էլ միւսների հետ համեմատելով նրա համար է վատ, որ սենեակիդ մէջ այսչափ աղտոտութիւն կայ։ Դժբաղդութիւն էր, որ քո ողորմած հոգի ամուսինդ էլ վերջին ժամանակներն արիութիւնը կորցրել էր և տնային կարգապահութեան վրայ բոլորովին ուշադրութիւն չէր դարձնում։ Որքան որ աղքատ լինի կինը՝ նա պէտք է գոնէ իր ամուսնու և երեխաների համար անէ այն, ինչ որ փող չարժէ։

Ռուդի։ Նոյնը հազար անգամ ասել է նրան տատը, բայց նա վերջին ժամանակները վշտից փայտ էր կտրել և ես երբեմն համարեա թէ կարծում եմ՝ որ ինձ և երեխաներիս համար բաղդաւորութիւն էր նրա մահը, եթէ նա չպէտք է փոխուէր։ Բայց, Գերտրուդ, եթէ նա դեռ ևս կենդանի լինէր և տեսնէր մեր այժմեան դրութիւնը, նա խելքի կգար և առաջուայ նման կլինէր։ Երեկուանից նա մտքիցս չէ հեռանում և ուր որ գնում եմ, կարծում եմ թէ նա էլ այնտեղ պէտք է լինի և ինձ հետ միասին վայելէ այսօրուայ բարիքը, ինչպէս որ վայելեց ինձ հետ թշուառութեան դառնութիւնը։

Գերտրուդ։ Այժմ նրա դրութիւնը մեր ամենից դրութիւնից լաւ է, Ռուդի. և ես չեմ կարծում, որ այս աշխարհում նա կրկին թեթևութիւն ղգայ. ով որ նրա պէտ

երկար ժամանակ ծանր վիշտ է կրում, հեշտությամբ չի կարող նորից ուղղվել։

Ռուդի։ Այդ էլ ճիշտ է։

Գերտրուդ։ Ամենից լաւ բանը, որ դու այժմ կարող ես անել քո կնոջ յիշատակին, և նրան ուրախութիւն ու մխիթարութիւն կպատճառէ երկնքումը՝ այն է, որ դու խնամքով դաստիարակես երեխաներիդ, որ նրանք էլ իրանց մօր նման դժբաղդ չլինեն։ Հաւատա, Աստուած է վկայ, որ մանկութեան օրերում չնչին ու փոքր բաներից շատ բան կախումն ունի. թէ արդեօք մանուկը կէս ժամ շուտ կամ ուշ է վերկենում, թէ նա իր կիրակնօրեայ զգեստն ամբողջ շաբաթը մի անկիւն գցած է պահում, թէ հոգացողութեամբ ու մաքուր մի տեղ է դնում. թէ նա սովորել է հացը, ալիւրն ու իւղը շաբաթուայ մէջ ճիշտ բաժանել և դրա նման բաներ անել, կամ թէ անարդարութեամբ մէկ շատ մէկ քիչ գործածէ՝ առանց գիտենալու — այսպիսի բաներն են որ նոյն իսկ ամենաբարեսիրտ կնոջն՝ մարդով ու երեխաներով ամենամեծ դժբաղդութեան մէջ են ձգում։ Ես պէտք է քեզ ասեմ — և դու գիտես թէ ես չար մտքով չեմ ասում — որ քո կինը բոլորովին պատրաստուած չէր տնային կարգապահութեան համար. ինձ ծանօթ էր ծեր Հօդէրի տնային կարգապահութեան եղանակը. այնտեղ շատ բան հիմնայատակ եղաւ։

Ռուդի։ Մանկութեան ժամանակ նա քահանայի տուն շատ էր գնում։

Գերտրուդ։ Այդ էլ ճիշտ է։

Ռուդի։ Հարիւր անգամ աչքերս լցուել են, երբ նա դեռ ևս երեխայոց չլուացած ու չսանրած աղօթագիրքը կամ յայտնութեան բացատրութիւնն էր ձեռքն առնում ու կարդում. ինքս ամեն օր խոհանոց պէտք է գնայի հնոցի կրակը մարելու, ապա թէ ոչ նա իր մոռացկոտութեամբ կարող էր և տունը կրակ գցել։

Գերտրուդ։ Կնոջ համար գրքերը պէտք է կիրակնօրեայ զգեստին նմանեցնել, իսկ աշխատանքն ամենօրեայ։

Ռուդի։ Իմ թշուառութեան վրայ այժմ ինքս էլ ծիծաղում եմ։ Նա հէնց այդ կիրակնօրեայ զգեստն էր ամեն օր հագնում և այնպէս դաստիարակում երեխաներին, որ

կարծես աշխարհիս վրայ ապրում են միմիայն աղօթելու և կարդալու համար։

Գերտրուդ։ Այդպիսով այնտեղն են հասցնում, որ նրանք աղօթելն ու կարդալը հենց այն ժամանակ են մոռանում, երբ ամենից շատ կարիք կայ։

Ռուդի։ Դժբաղդաբար հենց այդպէս էլ պատահեց մեզ հետ։ Երբ նա հիւանդացաւ և էլ ուտելու հաց չունէինք, նա այլ ևս երեխայոց հետ չէր կարդում և երբ մէկը մօտենում էր նրան՝ լաց էր լինում։

Գերտրուդ։ Թող այդ բանը այժմ զգուշացնէ քեզ, Ռուդի, և երեխաներիդ խօսելուց առաջ սովորցրու աշխատել ու հաց վաստակել։

Ռուդի։ Ես բոլորովին համաձայն եմ, և հենց այսօրուանից նրանց կարանողի մօտ պէտք է ուղարկեմ։

Գերտրուդ։ Ամենից առաջ դու պէտքէ նրանց զգեստ հագցնես. այժմեան դրութեամբ նրանք սենեակից չեն կարող դուրս գալ։

Ռուդի։ Խնդրեմ դրանց համար շապկացու և դէրիացու գնիր. ես չգիտեմ այդ բաները. միայն այսօր ես պարտք կվերցնեմ։

Գերտրուդ։ Ուրիշից պարտք չպէտք է վերցնես, Ռուդի, ես կառնեմ, յետոյ ինձ կվճարես։

Ռուդի։ Ինչո՞ւ պարտք չառնեմ։

Գերտրուդ։ Որովհետև տնտսին կարգապահութեան կանոններից մէկն էլ այն է՝ որ մէկ մեխից միւսի վրայ չկախես և որովհետև հարիւրաւոր փոխ տուողների մէջ տասը չես գտնի որ չկեղեքէ, մանաւանդ քեզ. դու շատ բարի ես, այդ պատճառով կարճ ժամանակում արիւնարբուները կը շրջապատեն քեզ և կկողոպտեն։

Ռուդի։ Փա՜ռք Աստծոյ, որ կողոպտելու բան կգտնեն ինձ մօտ։

Գերտրուդ։ Ես չէի ցանկանալ այդ մասին կատակ անել. դու պէտք է լրջօրէն ամեն կերպ աշխատես և պահպանես այն, ինչ որ այդքան երկար տանջանքից յետոյ Աստուած կրկին քեզ ու քո մանուկներին տուեց։

Ռուդին մի փոքր վարանելուց յետոյ ասաց. քանի որ

տանուտէրը կենդանի է, արօտի մի մասը նրան պէտք է տամ. դրա դէմ ի՞նչ ունիս ասելու։

Գերտրուդ։ Ա՞յդ ինչ բան է։

Ռուդի։ Ես քահանային խոստացել եմ, որ քանի տանուտէրը կենդանի է իմ արօտից մի կովի պաշար խոտ տամ նրան։ Նա մի խեղճ, ծեր մարդ է և ես չէի կարող նրան այն թշուառութեան մէջ տեսնել, որի մէջ ես եմ եղել։

Գերտրուդ։ Այդպէս ասա՛. ես կարծեցի թէ արօտը պէտք է բաժանես և մի մասը նրան տաս. բանից դուրս է գալիս, որ միայն խոտ պէտք է տաս։

Ռուդի։ Ո՛չ, մտքովս էլ չէր անցել. արօտը, եթէ Աստուած կամենայ, պէտք է որդոց որդի իմը մնայ. իսկ խոտը, ինչպէս որ խոստացել եմ քահանային՝ կտամ նրան։

Գերտրուդ։ Ես արդեօք չեմ լինի. բայց դեռ առաջ պէտք է տեսնէիր՝ թէ արդեօք տանուտէրն այդչափ կարիք ունի՞ և ապա խոստանայիր։

Ռուդի։ Քահանան էլ նոյնն ասաց. բայց եթէ ինձպէս լսէիր, թէ տատն ինչպէս էր մահուան անկողնում նրա համար աղօթում, դու էլ քո կարողութեան չափ կօգնէիր նրան։

Գերտրուդ։ Նա իր մահուան անկողնումն էլ նրա համար էր աղօթում։

Ռուդի։ Այո՛ Գերտրուդ, և ի՞նչպիսի յորդառատ արցունք թափելով։

Գերտրուդ։ Ա՜խ, ուրեմն լաւ է որ այդպէս ես անում։

Մինչ Ռուդին խօսում էր Գերտրուդի հետ, վերջինս արթնացրեց երեխաներին, նրանց ձեռքերն ու երեսը լուացի, նրանց համար անսովոր խնամքով սանրեց մազերը և զգեստներն աւելի կարգին հագցրեց, քան իրենք սովոր էին։ Յետոյ գնաց իր խրճիթը, բերեց այնտեղից աւել, խոզանակն ու տաշտը և սկսեց մաքրել սենեակը և ցոյց տուեց Ռուդիին թէ նա ինչպէս պէտք է անէ և թէ ինչո՞ւմ երեխաները կարող են իրեն օգնել։ Ռուդին ջանք էր անում և մի քանի ժամից յետոյ նա այնպէս լաւ էր տանում իր գործը, որ Գերտրուդը թողեց նրան ու գնաց իր տունն։ Գնալու ժամանակ նա ասաց. եթէ երեխաներդ լաւ օգնեն քեզ, երեկոյեան բոլորին ինձ մօտ ուղարկիր։

ԼՈՒՄԱՅ

ԳՐԱԿԱՆ ՀԱՆԴԷՍ

(ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ)



Սոյն 1897-ին կը հրատարակուի երկու գիրք։

Առաջին գիրքը լոյս տեսաւ յունուարի 1-ին, իսկ երկրորդը՝ լոյս կը տեսնի յուլիսի 1-ին։

«ԼՈՒՄԱՅ» հանդիսի բաժանորդագինն է տարեկան 3 ռ. Իւրաքանչիւր գիրքն առանձին արժէ 2 ռուբլի։

Հասցէն՝ Թիֆլիս, սեպ. Գյոմյ Աղանեանց.

Հրատարակիչ՝ Գիւտ քահ. Աղանեանց

Kikiriki

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Պետրոս Ջանչեանց, կենս. Մելքիսեդեկ եպս. Մուրատեան 1
Ենդրէաս երէց, պատմ. վիպակ. Մուրացան 52
Մշոյ աշխարհ, տեղագր. 123
Խաչատուր Աբովեան, կենս. Ն. Տէր-Կարապետեան . . 145
Հայր սուրբը, պատկեր. Ստեփան Աւետիքեան Բանանցեցի 187
Բանաստեղծի ժամացոյցը. Ը. Թումանեան 222
Մանուկ, բանաստ. տ. Ազնիւ 241
Աւօ, պատկեր. Ա. Մկրտչեան . . . . . , . . . 242
Աղքատի հալը, պատկ. Յ. սարկ. Ճուղուրեան . . . 257
Մամօ-Զին, քրդերէնից. Սաղաթիէլ 274
Վարակիչ հիւանդութիւններ, գերմ. թարգ. բժկ. Ս. Մայ-
սուրեանց 308

ՊԱՏՄԱԿԱՆ

Նիւթեր Աղուանից պատմութեան համար 325
Դ. եպս. Սրուանձտեանցի նամակը Հ. Ալիշանին . . . 332
Օտեանի նամակը Դ. եպս. Սրուանձտեանին. 333
Ք. Պատկանեանի նամակը առ նոյն 334
Մ. Նալբանդեանի մի նամակ 335
Ս. Նազարեանի նամակներ 337

ԱՅԼ ԵՒ ԱՅԼՔ

Վ.հհ. Հայրապետի նուէրը 340
Վանի բեւեռագիրները . . . . . —
Հարիւրամեակ Նոր-Նախիջեան քաղաքի 346
Մաքի լուսանկարը, թարգ. Ա. Սպարապետեան . . . 347
Տիգրանակերտի կանանց զարդերը 351
Ստացուած գրքեր 353
Հանգ. Սրուանձտեանի երկերի հրատարակութիւնը . . 354

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՅԱՒԵԼՈՒԱԾ

Լինհարդ և Գերտրուդ, Պեստալոցցու. գերման. թարգ.
Իս. Յարութիւնեան (վերջ) . . . . . 241—424